

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՆԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ  
ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ.  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ,  
ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ





**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ԳՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ  
ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ.  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ,  
ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ**

*Գիրական հոդվածների ժողովածու*

(Կազմող՝ Էդիկ Մինասյան)

**ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2020**

**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ**

**АРМЯНСКАЯ ОБЩИНА  
ДОНА В НОВЕЙШИЙ ПЕРИОД:  
ИСТОРИЯ, ИНСТИТУТЫ,  
ИДЕНТИЧНОСТЬ**

*Сборник научных статей*

(Составитель – Эдик Минасян)

**ЕРЕВАН  
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ  
2020**

ՀՏԴ-93/94

ԳՄԴ-63.3

Դ-743

*Հրատարակության է երաշխավորվել ԵՊՀ  
պատմության ֆակուլտետի գիտական  
և ԵՊՀ գրահրատարակչական խորհուրդների որոշմամբ:*

### **Խմբագիրներ՝**

պ.գ.դ., պրոֆ. Էդիկ Մինասյան

պ.գ.դ., դոց. Արման Եղիազարյան

բ.գ.թ. Մերի Հովհաննիսյան

### **Գրախոսներ՝**

պ.գ.թ., պրոֆ. Վ. Թունյան

պ.գ.թ. Ա. Հովհաննիսյան

Դ-743 Դոնի հայկական համայնքը նորագույն շրջանում. պատմություն, ինստիտուտներ, ինքնություն: Գիտական հոդվածների ժողովածու/ Կազմ.՝ Է. Մինասյան: Եր., ԵՊՀ հրատ., 2020, 212 էջ:

Գիտական հոդվածների սույն ժողովածուն ընդգրկում է ՀՀ ԿԳՄՆ գիտության պետական կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ նախագծի աջակցության «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ՀՀՌԳ-2018» միջազգային մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված «Դոնի հայկական համայնքը նորագույն շրջանում. պատմություն, ինստիտուտներ, ինքնություն» գիտական ծրագրի շրջանակներում իրականացված հետազոտությունների արդյունքները: Ժողովածուում անդրադարձ է կատարվում Դոնի հայկական համայնքի նորագույն շրջանի ամբողջական պատմությանը՝ իր բազմաթիվ ոլորտներով՝ սկսած քաղաքական, սոցիալ-տնտեսական պատմությունից և վերջացրած համայնքի ազգագրական ուսումնասիրություններով: Հոդվածների ժողովածուն նախատեսված է պատմաժողովրդագրության հարցերով զբաղվող մասնագետների, պատմաբանների, ինչպես նաև ընթերցող լայն հանրության համար:

ՀՏԴ-93/94

ԳՄԴ-63.3

ISBN 978-5-8084-2423-4

© ԵՊՀ հրատ., 2020

© Կազմողի համար, 2020

## ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ/СОДЕРЖАНИЕ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ/ПРЕДИСЛОВИЕ..... 8

*Մինսիյան Է. Գ., Բաիրիկ Լ. Վ./Минасян Э. Г., Батиев Л. В.*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ԿԱՊԵՐՆ ՈՒ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՈՆԻ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ (1991-2019 թթ.)/

ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКИЕ И РЕЛИГИОЗНО-  
КУЛЬТУРНЫЕ СВЯЗИ И ВЗАИМООТНОШЕНИЯ МЕЖДУ  
ТРЕТЬЕЙ РЕСПУБЛИКОЙ АРМЕНИИ И АРМЯНСКОЙ  
ОБЩИНОЙ ДОНА (1991-2019 ГГ.)..... 14

*Մինսիյան Վ. Ս./Алексян О. С.*

ԳՈՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ. ԱՐԱՐՄԱՆ 240 ՏԱՐԻՆԵՐԸ/  
АРМЯНСКАЯ ОБЩИНА ДОНА: 240 ЛЕТ СО ДНЯ ОСНОВАНИЯ.. 51

*Հովհաննիսյան Մ. Ս./Оганнисян М. С.*

ԳՈՆԻ ՆԱԽԻՋԵՎԱՆՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ/  
ГУМАНИТАРНЫЕ ОТНОШЕНИЯ МЕЖДУ НАХИЧЕВАНСКОЙ  
ОБЩИНОЙ ДОНА И РЕСПУБЛИКОЙ АРМЕНИЯ В НОВЕЙШИЙ  
ПЕРИОД..... 68

*Գաբրիելյան Մ. Ռ./Габриелян М. Р.*

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀԱՅԵՐԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ  
ЗАМЕТКИ ИЗ ИСТОРИИ ЭТНОГРАФИЧЕСКОГО ИЗУЧЕНИЯ  
НОР-НАХИЧЕВАНСКИХ АРМЯН..... 77

*Батиев Л. В., Минасян Э. Г./Բաիրիկ Լ. Վ., Մինսիյան Է. Գ.*

ДОКУМЕНТЫ ПО ИСТОРИИ САМОУПРАВЛЕНИЯ  
НАХИЧЕВАНИ-НА-ДОНУ В КОНЦЕ XVIII – СЕРЕДИНЕ XIX В. ИЗ  
НАЦИОНАЛЬНОГО АРХИВА АРМЕНИИ/

ԳՈՆԻ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՏՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎԻ  
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ (18-ՐԴ ԳԱՐԻ ՎԵՐՋ – 19-ՐԴ ԳԱՐԻ ԿԵՍ) ..... 87

*Батиев Л. В./Բախրիև Լ. Վ.*  
ПОЛИЦЕЙСКАЯ СЛУЖБА В НАХИЧЕВАНИ-НА-ДОНУ  
(КОНЕЦ XVIII – XIX ВВ.)/  
ԴՈՆԻ ՆԱԽԻՉԵՎԱՆԻ ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ  
(18-րդ դ. վերջ – 19-րդ դ.) ..... 100

*Батиев Л. В./Բախրիև Լ. Վ.*  
ИЗ ИСТОРИИ АРМЯНСКОГО САМОУПРАВЛЕНИЯ НА ДОНУ  
(КОНЕЦ XVIII – СЕРЕДИНА XIX ВВ.)/  
ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (18-րդ դ. վերջ – 19-րդ դ. ԿԵՍ)..... 117

*Суцкий С. Я./Սուշկի Ս. Յու.*  
НАХИЧЕВАНЬ И РОСТОВ-НА-ДОНУ –  
СОЦИОДЕМОГРАФИЧЕСКИЕ АСПЕКТЫ  
РАЗВИТИЯ (СЕРЕДИНА – ВТОРАЯ ПОЛОВИНА XIX ВЕКА)/  
ՆԱԽԻՉԵՎԱՆ ԵՎ ԴՈՆԻ ՌՈՍՏՈՎ. ՍՈՑԻԱԼ-  
ԺՈՂՈՎԴԴԱԳՐԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
(19-րդ դ. 2-րդ ԿԵՍ) ..... 139

*Суцкий С. Я./Սուշկի Ս. Յու.*  
СОЦИОПРОФЕССИОНАЛЬНЫЕ ОРИЕНТАЦИИ АРМЯН  
РОСТОВСКОЙ ОБЛАСТИ: ТЕНДЕНЦИИ ПОСТСОВЕТСКОГО  
ПЕРИОДА (НА МАТЕРИАЛАХ РЯДА СТАТУСНЫХ  
ПРОФЕССИОНАЛЬНЫХ СООБЩЕСТВ) /  
ՌՈՍՏՈՎԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ  
ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ. ՀԵՏԵՈՐՀՐԳԱՅԻՆ  
ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՄԻՏՈՒՄՆԵՐ (ՄԻ ՇԱՐՔ  
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ  
ՆՅՈՒԹԵՐԻ ՀԻՍԱՆ ՎՐԱ) ..... 148

*Казаров С. С./Կազարով Ս. Ս.*  
ПРОБЛЕМА СОХРАНЕНИЯ КУЛЬТУРНО-ИСТОРИЧЕСКОГО  
НАСЛЕДИЯ КРЫМСКИХ АРМЯН НА РУБЕЖЕ XIX–XX ВЕКОВ/  
ԳՐԻՄԻ ՀԱՅԵՐԻ ՊԱՏՄԱՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ  
ՊԱՀՊԱՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ 19-20-րդ դդ. ՍԱՀՄԱՆԱԳԾԻՆ ..... 152

*Казаров С. С., Оганнисян М. С./Շիզիրոյի Ա. Ա., Հովհաննիսյանի Ա. Ա.*  
 ВОЗРОЖДЕНИЕ РЕЛИГИОЗНОЙ ЖИЗНИ ДОНСКИХ АРМЯН В  
 КОНЦЕ XX – НАЧАЛЕ XXI ВЕКОВ/  
 ԴՈՆԻ ՀԱՅԵՐԻ ԿՐՈՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ  
 20-ԴԻ Դ. ՎԵՐՁԻՆ – 21-ԴԻ Դ. ՍԿԶԲԻՆ ..... 159

*Казаров С. С./Շիզիրոյի Ա. Ա.*  
 АРМЯНСКОЕ КЛАДБИЩЕ НАХИЧЕВАНИ-НА-ДОНУ КАК  
 СИМВОЛ ИСТОРИЧЕСКОЙ ПАМЯТИ ДОНСКИХ АРМЯН/  
 ԴՈՆԻ ՆԱԽԻՁԵՎԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՐԵՉՄԱՆՈՅԸ՝  
 ՈՐՊԵՍ ԴՈՆԻ ՀԱՅԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ  
 ԽՈՐՀՐԴԱՆԻՇ ..... 162

*Саядов С. М./ Միշիրոյի Ա. Ա.*  
 «СОБРАНИЕ АКТОВ» – ВАЖНЫЙ ИСТОЧНИК ИЗУЧЕНИЯ  
 ИСТОРИИ НАХИЧЕВАНИ/  
 ՓԱՏՄԱԹՂԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ՝ ՈՐՊԵՍ ՆԱԽԻՁԵՎԱՆԻ  
 ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ  
 ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ ..... 166

*Sushchiy S./Մուշի Ա. Յու./Сущий С. Я.*  
 ARMENIANS OF RUSSIA: GEO-DEMOGRAPHIC TRENDS OF THE  
 PAST, MODERN REALITIES AND PROSPECTS/  
 ՈՒՌՄԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԸ. ԳԵՈԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ  
 ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ԱՆՅՅԱԼՈՒՄ, ԱՐԴԻ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ  
 ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ/  
 АРМЯНЕ РОССИИ: ГЕОДЕМОГРАФИЧЕСКИЕ ТЕНДЕНЦИИ  
 ПРОШЛОГО, СОВРЕМЕННЫЕ РЕАЛИИ И ПЕРСПЕКТИВЫ..... 179

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ/ЗАКЛЮЧЕНИЕ ..... 206



## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայտնի է, որ Դոնի Նոր Նախիջևան քաղաքը հիմնադրվել է Դրինի հայաբնակ վայրերից Ռուսական կայսրության կազմակերպած գաղթի հետևանքով, Եկատերինա Երկրորդ կայսրուհու 1779 թ. նոյեմբերի 14-ի հրովարտակի հիման վրա: Ռուսական կայսրության հարավային շրջանները բնակեցնելու քաղաքականության կենսագործման արդյունքում 1878 թ. գաղթի ուղին բռնած դրինահայ զանգվածը, որի հիմնական մասը Դրին տեղափոխված հայոց միջնադարյան մայրաքաղաք Անիի նախկին բնակիչների ժառանգներն էին, երկար թավառումներից հետո հանգրվան է գտնում Դոնի գետափնյա հարթավայրում և Դմրիարի Ռոստովսկու ամրոցից (այժմ՝ Դոնի Ռոստով) մի քանի կիլոմետր հեռու՝ հիմնելով Նախիջևան քաղաքը, իսկ նրա մոտակայքում՝ Չալդր, Թոփախի, Մեծ Սալա, Սուլթան Սալա և Նեավիտա հայկական գյուղերը:

Նոր Նախիջևանը մինչև 19-րդ դարի կեսերը աչքի էր ընկնում որպես արհեստագործական և առևտրական կայուն նկարագիր ունեցող քաղաք, որին մեծապես նպաստեցին կայսրության հարավի ջրային ուղիները, մասնավորապես Ռոստովի և Տագանրոգի նավահանգիստներով արտահանվող մետաղի հումքը: Դրսի շուկաներում հռչակված էին Նախիջևանի հայ վարպետների պատրաստած իրերը, որոնցով առանձնակի հետաքրքրվել են ռուս կայսրերը, մասնավորապես կայսրուհի Եկատերինա Երկրորդը: Հենց նրա 1779 թ. նոյեմբերի 14-ի հրովարտակով դրինահայերը ստացան մեծ առանձնաշնորհումներ: Այն օրենսդրական կարևորության մի փաստաթուղթ էր, որով սահմանվում էր նորահաստատ հայ գաղութի (այսուհետ՝ համայնքի) իրավասությունը, և մեծապես կանխորոշվում էին նրա զարգացման հեռանկարները:

Նախիջևան անունով հատուկ քաղաք հիմնելու և քաղաքին 12000 դեսյատին հողմաս տալուն զուգահեռ հրովարտակում պահանջվում էր հայ հասարակությանը տասը տարով ազատել բոլոր հարկերից և պետական ծառայություններից, քաղաքում հաստատել մագիստրատ և այնտեղ ազգային սովորությունների ու իրավական նորմերի հիման վրա դատ ու դատաստան վարել ընտրված դատավորների միջոցով:

Կայսերական շնորհագրի ընձեռած հնարավորությունների շրջանակներում ձևավորվեց նորահաստատ հայ համայնքի ինքնավարությունը: Դատավարությունը և գործավարությունը կատարվում էին հայերեն և Աստրախանի կամ «Հայկական դատաստանագրքի» հիման վրա, որը կազմվել էր Մխիթար Գոշի «Դատաստանագրքի», ազգային սովորության ճորճերի ու ռուսական օրենքների հիման վրա, ճանաչվել էր պետության կողմից և բացի Նոր Նախիջևանից՝ կիրառվում էր նաև Աստրախանի, Ղզլարի, Մոզդուկի հայկական գաղթօջախներում: Հայկական գյուղերում մշտապես պահպանվում էին կառավարման տեղական օրգանները՝ հանձինս ավագի և չորս ծերերի խորհրդի, որոնք հետևում էին մագիստրատի հրամանների և հանձնարարությունների կատարմանը, որոնք վերաբերում էին օրինականության պահպանմանը, հարկերի գանձմանը, հանգանակության անցկացմանը և այլ հարցերի:

Մագիստրատը բաղկացած էր նախագահից և չորս ատենակալներից, որոնցից երկուսը զբաղվում էին մագիստրատի դատարանական, իսկ մյուս երկուսը՝ ոստիկանական խնդիրներով: Նրանցից մեծը կատարել է ոստիկանի պաշտոնը քաղաքում, իսկ մյուսը՝ հայկական գյուղերում: Հետագայում, հատկապես 1861 թվականից հետո Նախիջևանի և հայկական գյուղերի ոստիկանական խումբը բաղկացած էր 20 հոգուց:

Նոր Նախիջևանը այն սակավաթիվ հայկական համայնքներից է, որտեղ երկրագործությունն ու անասնապահությունը մշտապես նշանակալի դեր են կատարել: Այդ հանգամանքն իր դրոշմն է դրել համայնքի հասարակական-տնտեսական բովանդակ կյանքի վրա:

1811 թ. հաստատվեց Դոնի հայկական համայնքի զինանշանը, ուր պատկերված էին հայերի աշխատասիրությունը խորհրդանշող մեղուներ և փեթակներ: Նույն թվականին հաստատվեց Նախիջևան քաղաքի նոր հատակագիծը, որը պահպանում էր փողոցների ուղղանկյուն ցանցը, քառանկյուն թաղամասերը և նախկին հատակագծի մյուս հատկանիշները, հիմնվեց քաղաքագլխի պաշտոնը, որը տնօրինում էր հասարակական եկամուտներն ու ծախսերը:

18-րդ դարավերջին ազատագրական շարժումների աշխուժացման, Ռուսաստանի հովանավորության ներքո հայկական պետականությունը վերականգնելու ակնկալությունների շրջանում Դոնի ավե-

րին գուտ հայկական քաղաքի և հինգ հայկական գյուղերի հիմնադրումը, հայությանը տրված լայն ինքնավարությունը մեծ տպավորություն բողեցին ժամանակի հայության և հատկապես հայոց ազատագրական շարժումներով հետաքրքրվող նվիրյալների, կազմակերպող ուժերի վրա: Այդ առումով հետաքրքրական են հայ ազատագրական շարժման ավանգարդում գտնվող հնդկահայերի կողմից Նախիջևանում հայկական դպրոց հիմնելու նպատակով մեծագույնար նվիրատվություններ կատարելը, Լազարյան ճեմարանը Մոսկվայի փոխարեն Նոր Նախիջևանում հիմնելու մտահղացումը, Խաղդարյանի հայկական տպարանը Պետերբուրգից Նոր Նախիջևան տեղափոխելու իրողությունը և այլ փաստեր: Ռուսական արքունիքը, դրիմահայությանը ազգային սովորույթների և ավանդույթների վրա խարսխվող ինքնավարություն տալով, յուրովի արձագանքում էր հայոց ազատագրական ցանկություններին: Հուսադրելով հայերին՝ ցարական կառավարությունը Այսրկովկասը Ռուսաստանին միացնելու նպատակ ուներ, որի համար հետամուտ էր նաև համակիրներ շահելու երկրամասի ժողովուրդների մեջ: Ցարական Ռուսաստանի պետական ատյաններում բազմակողմանի քննարկումներից հետո՝ 1870 թ., ի վերջո վերացվեց հայկական մագիստրատի գործունեությունը, հետևաբար նաև Նոր Նախիջևանի հայ համայնքի ինքնավարությունը: Նոր Նախիջևանը Ռուսաստանին միացնելուց հետո նպատակահարմար համարվեց երկու քաղաքներում էլ մտցնել կառավարման միասնական եղանակ:

Ռուսահայ մյուս համայնքների մեծան Նոր Նախիջևանը ևս ապրել է հասարական-քաղաքական և մշակութային ուրույն կյանք, որը հայ համայնքի համեստ շրջանակներում լծորդել է երկու ժողովուրդների փոխհարաբերություններն ու կապերը: Ռուսահայ գաղութները, այդ թվում՝ Նոր Նախիջևանը, մշտապես արձագանքել ու մասնակցել են մի կողմից ռուսական, մյուս կողմից՝ մայր հայրենիքի հասարակական կյանքի գլխավոր իրադարձություններին: Դռնի հայկական համայնքը միշտ էլ ակտիվորեն արձագանքել է ռուսական կյանքի խոշոր իրողություններին, մասնավորապես 19-20-րդ դարերում անմասն չի մնացել երկրին սպառնացող արտաքին վտանգներից՝ սկսած 1812 թ. հայրենական պատերազմով, ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմներից մինչև Առաջին և Երկրորդ աշխարհամարտեր: Հայերը գործուն մասնակցություն են ունեցել պատերազմական իրողություններին:

Դոնի հայությունը մշտապես օգնել է ռուսական զորքին ֆինանսական միջոցներով:

Դոնի հայությունը աշխույժ մասնակցություն է ունեցել նաև մշակութային միջացառումներին՝ նշելով Պուշկինի 100, 200-ամյակները, Ն. Գոգոլի և Ժիրմոնսկու մահվան 50 և 100-ամյակները, քաղաքում բացվել են նրանց անունը կրող դպրոցներ: Մեծ շուքով նշվել է Տոլստոյի 80-ամյա հոբելյանը, քաղաքի հրապարակը վերանվանվել է մեծ գրողի անունով: 1914 թ. մեծ շուքով նշվել են Մ. Լերմոնտովի ծննդյան 100, 2014 թ.՝ 200-ամյակները: Տեղական թերթերում տպագրվել են ռուս մեծանուն գրողների մասին հոդվածներ:

Դոնի հայկական համայնքը միշտ աշխույժ հարաբերությունների մեջ է եղել մայր հայրենիքի և հայկական գաղթօջախների հետ: Մայր հայրենիքի հետ կապերն ու շփումներն իրականացվել են բազում եղանակներով: Այն առաջին հերթին կատարվում էր եկեղեցու միջոցով: Նախիջևանցիներն ունեին կրոնական սովորույթով պայմանավորված մայր հայրենիքի հետ կապվելու ավանդույթ, ինչպես Դոնի հայության շրջանում մեծ տարածում գտած ուխտագնացությունը Երուսաղեմ, Մշո Սուրբ Կարապետի վանք և Անի:

Դոնի հայությունը սերտ կապեր էլ հաստատել այլ երկրներում ապրող հայերի, մասնավորապես Կ. Պոլսի հայության հետ: Նոր Նախիջևանի որոշ վաճառականներ Կ. Պոլսում ունեին խանութներ, գրասենյակներ և այլն: Աշխույժ շփումներ կային նաև հնդկահայ գաղութների հետ:

Հայաստանի հետ հասարակական, մշակութային կապերն առավել սերտացան 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին: Երկաթուղիների և առհասարակ հաղորդակցության միջոցների զարգացումը մեծապես նպաստեց երիտասարդության և մտավորականների փոխայցելություններին ու կապերի ամրապնդմանը: Սովորություն դարձան Նոր Նախիջևանի ուսումնարանների բարձր դասարանների այցելությունները Հայաստան և Անդրկովկասի հայաշատ վայրեր: 1909 թ. թեմական դպրոցի տեսուչ Ե. Շահազիզը հոգաբարձությունից դրամական միջոցներ է խնդրել՝ աշակերտների ուղևորությունը դեպի Հայաստան կազմակերպելու համար:

Նոր Նախիջևանի նշանավոր մտավորականները՝ Մ. Նալբանդյանը, Ռ. Պատկանյանը այցելել են Թիֆլիս, Երևան, Էջմիածին: Թիֆլիս է այցելել նաև Գ. Չալխուշյանը:

1912 թ. Նոր Նախիջևանի քաղաքային քատրոնի շենքում հայ միջնադարյան արվեստի մասին դասախոսություն է կարդացել հայոց պատմության և մշակույթի նշանավոր գործիչ Գարեգին Հովսեփյանը:

1916 թ. արևմտահայ նշանավոր գրող Չապել Եսայանը Նոր Նախիջևանում կարդացել է զեկուցում՝ «Արևմտահայ գրականությունը» թեմայով:

Դռնի հասարական կյանքում կարևոր իրողություններ էին հայոց կաթողիկոսների փոխայցելությունները: Նրանք ռուսահայ թեմեր այցելելուց հետո, որպես կանոն, կանգ էին առնում Նոր Նախիջևանում: Բարձր ընդունելության են արժանացել 1876 թ. Գևորգ Չորրորդը, 1896 թ.՝ Խրիմյան Հայրիկը, 1909 թ.՝ Մաթևոս 2-րդ Իզմիրյանը, 1912 թ.՝ Գևորգ 5-րդը, իսկ Գևորգ 6-րդը ծնունդով նորնախիջևանցի էր:

Դռնի հայկական համայնքում տեղի են ունեցել նաև հասարակական-մշակութային այնպիսի միջոցառումներ, որոնք համազգային հնչեղություն են ստացել: Այդպիսի իրողության օրինակ է 1901 և 1902 թվականներին Սուրբ խաչ վանքի բակում քանդակագործ Ա. Տեր-Մարությանի կողմից մեծանուն հայեր Մ. Նալբանդյանի և Ռ. Պատկանյանի կիսանդրիների կանգնեցումը: Միջոցառմանը ներկա են գտնվել նաև հայրենիքից ժամանած մտավորական գործիչներ: Նոր Նախիջևանի այս նշանավոր հայ գրողների հուշարձանի բացումը ստացել է հայկական մշակույթի գնահատման համազգային բնույթ:

Նոր Նախիջևանի հայ համայնքը մշտապես օգնության ձեռք է մեկնել ցեղասպանության ենթարկված արևմտահայությանը, գումարներ է հատկացրել Էջմիածնի ճեմարանին, տպարանին՝ կարիքները հոգալու համար: 1915 թ. Նոր Նախիջևանը ապաստան է տվել 500 գաղթականի:

Դռնի հայկական համայնքի կապերը հայերնիքի հետ ամրապնդվեցին նորագույն ժամանակաշրջանում, որի լուսաբանմանն էլ նվիրված է հողվածների սույն ժողովածուն: Դռնի նոր բնակավայրում հաստատված նախկին դրինահայերի 140-ամյա պատմությունը լայնորեն լուսաբանվել է Վլադիմիր Բարխուդարյանի երկու ստվարածավալ մենագրություններում («Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատ-

մություն (1779-1861 թթ.)», Երևան, 1967 և «Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1861-1917 թթ.)», Երևան, 1985): Արխիվային տարատեսակ փաստաթղթերի, նյութերի, առկա գրականության և մամուլի տվյալների հիման վրա գրված այդ մենագրություններում արտացոլվել է Ռուսաստանում նոր շրջանի ամենախոշոր հայկական գաղութի ամբողջական պատմությունը՝ իր հիմնական դրսևորումներով՝ հիմնադրումից մինչև Ռուսաստանի հարավի տնտեսական վերելքը, Նախիջևանի հայության մշակութային և հասարակական-քաղաքական կյանքն ու իրավական դրությունը: Նշված հարցերին նաև անդրադարձել են ռուս հեղինակները, Դոնի հայ համայնքի ներկայացուցիչները: Սակայն բաց են մնացել Դոնի հայ համայնքի նորագույն պատմության հիմնախնդիրները, որոնց լուսաբանմանն էլ ձեռնամուխ եղանք ՀՀ, հիմնականում Երևանի պետական համալսարանի և Ռուստովի հարավային դաշնային համալսարանի մի խումբ գիտնականներ՝ կազմելով Դոնի հայկական համայնքի նորագույն շրջանի ամբողջական պատմությունը ներկայացնող սույն ժողովածուն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԳ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ԿԱՊԵՐՆ ՈՒ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ (1991-2019 թթ. <sup>\*</sup>)**

*Մինասյան Է. Գ., պ.գ.դ., պրոֆ.  
Բաիրիս Լ. Վ., պ.գ.թ., դոց.*

1991 թ. ԽՍՀՄ փլուզումը և սեպտեմբերի 21-ի համաժողովրդական հանրաքվեով Հայաստանի անկախության վերականգնումը նոր որակ ու փուլ սկզբնավորեցին Հայաստան-Սփյուռք առնչություններում, որոնք ընդգրկեցին կյանքի բոլոր ոլորտները՝ հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային:

Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների նշված շրջափուլն ընդգրկում է Հայաստանի երրորդ հանրապետության շրջանը՝ 1991 թվականից մինչև մեր օրերը: Մենք ևս այլ ուսումնասիրողների նման Հայաստանի երրորդ հանրապետության շրջանի հայրենիք-Սփյուռք հարաբերությունները բաժանում ենք երեք շրջափուլերի: Այս նույն բաժանումը կարելի է կիրառել նաև ԱՊՀ երկրների, մասնավորապես Դոնի Ռոստովի հայկական համայնքի նկատմամբ: Առաջին շրջափուլը, որն ընդգրկում է 1991-1998 թվականները, պայմանականորեն կարելի է համարել նորովի հարաբերությունների ձևավորման շրջան, երկրորդ շրջափուլը՝ 1998-2008 թթ., այդ կապերի վերարժևորման ու ամրապնդման շրջանն է, իսկ 2008 թվականից մինչև մեր օրերը անվանվում է համապարփակ հարաբերությունների զարգացման շրջան<sup>1</sup>:

Առաջին շրջանում Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումը նոր թափ հաղորդեց արդեն իսկ 1988 թվականից սկսված ավերիչ երկրաշարժով և Արցախյան շարժման զարթոնքով պայմանավորված հայրենիք-Սփյուռք սերտացող հարաբերություններին, երբ

---

<sup>\*</sup> Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍՆ գիտության պետական կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ նախագծի աջակցության «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ՀՀՌԴ-2018» միջազգային մրցույթի արյունքում ֆինանսավորման երաշխավորված «Դոնի հայկական համայնքը նորագույն շրջանում. պատմություն, ինստիտուտներ, ինքնություն» գիտական ծրագրի շրջանակներում:

<sup>1</sup> Տե՛ս Եղիազարյան Ա., Անանյան Մ., Հովհաննիսյան Ա., Հովհաննիսյան Է., Հովսեփյան Մ., Վարդանյան Հ., Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1918 թ. մինչև մեր օրերը, Երևան, 2017, էջ 11:

Սփյուռքի առաջ բացվեցին հայրենի պետության փակ դռները: Նախորդ ժամանակաշրջանի համար այս շրջափուլում Սփյուռքի (մասնավորապես Դոնի հայական համայնք) և Հայաստանի Հանրապետության միջև, ըստ էության, հաստատվեցին սահմանափակումներից զերծ ազատ հարաբերություններ: Հայաստանի քաղաքական անկախության վերականգնմանը հաջորդած առաջին տարիներին, Արցախյան պատերազմով և սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակով պայմանավորված դժվարին պայմաններից դրդված, հարյուր հազարավոր հայեր, արտագաղթելով հայրենի երկրից, ավելի ստվարացրին արտերկրում, հատկապես Հարավային Ռուսաստանում՝ Կրասնոդարի, Ստավրոպոլի երկրամասերում, Դոնի Ռոստովի մարզում, ինչպես նաև Մոսկվայում, Ուրալում ու Սիբիրում ապրող հայության թվաքանակը:

Հայտնի է, որ Ռուսաստանի Դաշնությունը ՀՀ-ից և հետխորհրդային այլ երկրներից հայության միգրացիայի հիմնական ուղղություններից մեկն է: Ռուսաստանում 1898 թ. հայերի թիվը կազմել է 532.390<sup>2</sup>, 2002 թ.՝ 1.130.491<sup>3</sup>, իսկ 2016 թ. պաշտոնական տվյալներով ՌԴ-ում բնակվում էր 1.182.388<sup>4</sup>, ոչ պաշտոնական տվյալներով՝ 2.600000 հայ<sup>5</sup>: Հայերը ՌԴ ազգությունների շարքում պաշտոնական տվյալներով զբաղեցնում են 5-րդ, իսկ ոչ պաշտոնական տվյալներով՝ 4-րդ տեղը (ռուսներից, թաթարներից և ուկրաինացիներից հետո): Հայերն առավել կենտրոնացած են մայրաքաղաք Մոսկվայում (500 հազար), Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերում (համապատասխանաբար՝ 800 հազար և 400 հազար) և Ռոստովի մարզում (135 հազար)<sup>6</sup>:

Մեր հետազոտության առարկա Դոնի Ռոստովի մարզի հայկական համայնքի ժողովրդագրական (դեմոգրաֆիական) փոփոխություններին առավել մանրամասնորեն անդրադարձել է ռուս պատմաբան Ս. Մուշիկը<sup>7</sup>: Նա նշում է, որ «Ռոստովի մարզը, ինչպես նաև հարավ-ռուսաստանյան տարածաշրջանի այլ վայրեր գտնվեցին այդ միգրացիոն ալիքի կենտրոնում»<sup>8</sup>:

---

<sup>2</sup> Տե՛ս Բարխուդարյան Վ., Ալեքսանյան Հ., Ռուսաստանի հայ գաղթօջախների պատմություն (Հյուսիսային Կովկաս, Նոր Նախիջևան, Աստրախան, Սանկտ Պետերբուրգ, Մոսկվա), Երևան, 2015, էջ 388:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 387:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 393, 405:

<sup>5</sup> Տե՛ս Հակոբյան Հ., Հայկական Սփյուռքը հարավփոփոխ աշխարհում, Երևան, 2017, էջ 74:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>7</sup> Տե՛ս Суций С. Я., Армяне Юга России и Крыма, Ростов на Дону, 2015, с. 99-100:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 101-102:



Պաշտոնական տվյալներով Հայաստանի Հանրապետությունից դեպի Ռուսաստանի Դաշնության Դոնի Ռոստովի մարզ տեղափոխվել են 1993-1994 թթ. 7,6 հազար, 1995-1996 թթ.՝ 3,6 հազար, իսկ 1997-2000 թթ.՝ 3.9 հազար մարդ, 2000-2010 թթ. միգրացիայի հաշվին մարզի հայ բնակչության թվաքանակը աճել է 6 հազար, իսկ մինչև 2015 թվականը՝ 10-20 հազար մարդով:

Մարզի հայ բնակչության քանակը 2010 թ. մարդահամարի տվյալներով կազմում էր 120-130 հազար: Դրա արդյունքում 21-րդ դարի երկրորդ տասնամյակում Ռոստովի մարզի հայկական համայնքի հայ բնակչության քանակը 1,5 անգամ ավելացավ ուկրաինական համայնքի նկատմամբ, որը կազմում էր 77,8 հազար մարդ<sup>9</sup>: Այսօր Հայ առաքելական եկեղեցին ՌԴ-ում ներկայացված է Նոր Նախիջևանի և Ռուսաստանի ավանդական թեմով, որը հաստատվել է դեռևս 1966 թվականին: Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի կոնդակով Նոր Նախիջևանի, Հյուսիսային Կովկասի, Աստրախանի թեմերը և Մոսկվայի հովվությունը միավորվել են, և կազմավորվել է Հայ առաքելական եկեղեցու Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմը, որի առաջնորդանիստը Մոսկվայի Սուրբ Հարություն եկեղեցին է<sup>10</sup>: Այն ընդգրկում է 40-ից ավելի համայնք, որոնցից 27-ը՝ ՌԴ տարածքում<sup>11</sup>:

Սփյուռքում իրավիճակը փոխվեց այն բանից հետո, երբ 1990-ական թթ. երբեմնի դասական հայկական համայնքները համարվեցին 1988 թթ. Սպիտակի երկրաշարժից և Ադրբեջանում 1988-1990 թթ. Սում-գայիթից ու Բաքվի, Կիրովաբադի, Խանլարի և այլ վայրերի հրեշավոր վայրագություններից, Հայոց ցեղասպանությունից հետո արտերկրում հաստատված, ինչպես նաև Հայաստանից արտագաղթած հայերով, որոնք զգալի աշխուժություն մտցրին սփյուռքահայերի կյանքում<sup>12</sup>: Մյուս կողմից 1990-ական թթ. սկզբներին սփյուռքահայությունը, որը յոթանասուն տարի շարունակ փափագել էր իր երազած ազատ ու անկախ Հայաստանի գաղափարը, հնարավորություն ունենալով ազատորեն զարու հայրենիք, բախվեց ժամանակի դաժան իրողությանը:

Հայտնի է, որ 1990-ական թվականների սկիզբը դժվարին փուլ էր հայոց նորանկախ երկրի համար, քանի որ փլուզվել էին երկրի պետական, քաղաքական համակարգերը, չկային անհրաժեշտ միջավայր՝ բիզնես ներդրումների համար, շուկայական տնտեսությանը համապա-

<sup>9</sup> Տե՛ս Суций С. Я., Армяне Юга России и Крыма, Ростов на Дону, с. 102:

<sup>10</sup> Տե՛ս Ալեքսանյան Հ., Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1941-1991 թթ., էջ 23-24:

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>12</sup> Տե՛ս Մինասյան Է., Հայրենիք-Սփյուռք առնչությունները 21-րդ դարասկզբին (2001-2017 թթ.), Երևան, 2018, էջ 4-5:

տասխանող օրենքներ, բանկային, հարկային և մաքսային համակարգեր, որոնք աստիճանաբար էին ստեղծվում: Երկիրը գտնվում էր տնտեսական, հատկապես էներգետիկ խոր ճգնաժամի մեջ. տարածքի 40 %-ը երկրաշարժից հետո ավերվել էր, կես միլիոն մարդ մնացել էր անօթևան՝ զրկվելով նաև ունեցվածքից, Ադրբեջանից գաղթած շուրջ 450 հազարի հասնող սահաբեկված փախստականներ հասել էին Հայաստան, որն ի վիճակի չէր լիովին լուծել նրանց հիմնախնդիրները<sup>13</sup>: Այս ամենից բացի՝ Լեռնային Ղարաբաղի պարտադրված պատերազմը Ադրբեջանի կողմից վտանգել էր մեր ժողովրդի արցախյան հատվածի անվտանգությունը: Ահա այս ծանր իրավիճակում Սփյուռքը հիասթափվելու առիթներ ունեցավ, սակայն հայրենիքին աջակցելու համար միավորվեց, և այդ օգնությունը չուշացավ:

1990-ական թթ. սկզբից սկսած՝ ԽՍՀՄ տարածքում բնակվող հայությունը կանգնեց, այսպես կոչված, սփյուռքացման գործընթացի առջև, ինչի արդյունքում նախկին խորհրդային պետությունների գրեթե մեծ մասում, ԱՊՀ երկրներում, Հարավային Ռուսաստանում, հատկապես Դոնի Ռոստովում, աստիճանաբար հիմնադրվեցին ընդհանուր և տեղային բնույթի համայնքային-հասարակական կազմակերպություններ՝ հայության տարբեր հատվածների համար հավաքական կենսագործունեության միջավայր ձևավորելու համար<sup>14</sup>: Չնայած առաջին շրջափուլում հայրենիք-Սփյուռք հարաբերությունները որոշակի տեղատվություն ունեցան սփյուռքյան քաղաքական կազմակերպությունների՝ հայրենիքում ունեցած հիմնականում քաղաքական խնդիրների պատճառով, սակայն դրանք չկարողացան խափանել հայրենիք-Սփյուռք համախմբման ու կապերի ամրապնդման անկասանելի ընթացքը, ինչն էլ իր դրսևորումը գտավ երկրորդ շրջափուլում: Նշված ժամանակահատվածում ավելի ամրապնդվեցին հայրենիք-Սփյուռք կապերը, վերջնակապես լուծում ստացան այդ կապերում և հարաբերություններում առկա մի շարք կարևոր խնդիրներ, որոնք հատկապես առնչվում էին ընդհանուր քաղաքական օրակարգի ձևավորման վերաբերող հարցերին, հայրենիք-Սփյուռք հարաբերությունները կարգավորող նոր կառույցներին, օրինակ՝ 1998 թ. ՀՀ արտգործնախարարությունում ձևավորված Սփյուռքի հետ կապերի գործադիր քարտուղարությանը, սպա գործակալությանը, իսկ 2008 թ. ապրիլից՝ Սփյուռքի հետ կապերի պետական կոմիտեի ստեղծմանը և այլն: Այս շրջափուլում տեղի ունեցան Հայաստան-Սփյուռք երեք խորհրդաժողովները (1999, 2002 և 2006), որոնց նպատակն էր մշակել և իրագործել հայության առաջ ծա-

<sup>13</sup> Տե՛ս Սյնասյան Է., նշվ. աշխ., էջ 5:

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղում:

ռայած խնդիրների լուծման համատեղ ձևաչափերն ու հայրենիք-Սփյուռք հարաբերությունների համակարգման մեխանիզմները<sup>15</sup>: 2005 թ. սահմանադրական հանրաքվեի արդյունքում Հայաստանի երրորդ հանրապետությունում ներդրվեց երկքաղաքացիության ինստիտուտը, որը հայրենիք-Սփյուռք հարաբերությունների էլ ավելի սերտացման և սփյուռքահայության ինտեգրման կարևոր գործոն էր:

Հայաստանի երրորդ հանրապետության կյանքում կարևոր նշանակություն ունեցավ 2008 թ. ստեղծված ՀՀ սփյուռքի նախարարությունը, որը նոր շրջափուլ էր Հայաստան-Սփյուռք հարաբերություններում, քանի որ պետական մակարդակով կառուցվածքային նոր ձև տրվեց Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացմանը՝ նպաստելով երկկողմ ինտեգրմանը և հայրենիք-Սփյուռք հարաբերությունների էլ ավելի զարգացմանն ու ամրապնդմանը: Այս շրջափուլում ավանդական դարձան Հայաստան-Սփյուռք համաժողովները 2011, 2014, 2017 թթ., բիզնես ֆորումները, համահայկական խաղերը, որոնց սկիզբը դրվել էր 1999 թ. և շարունակվել հետագայում՝ 2001, 2003, 2007, 2011, 2014 և 2015 թվականներին<sup>16</sup>:

ՀՀ սփյուռքի նախարարության անմիջական ղեկավարությամբ մշակվեցին և իրագործվեցին հայրենիք-Սփյուռք հարաբերությունների, այդ թվում՝ Հարավային Ռուսաստանի, մասնավորապես Դոնի Ռոստովի հայկական համայնքի կապերի, փոխհարաբերությունների ամրապնդման ուղղությամբ մեծածավալ ծրագրեր: Ներդրվեցին կառուցվածքային և կառուցակարգային նոր ձևաչափեր: Սփյուռքը, մասնավորապես Դոնի Ռոստովի հայ համայնքը, գործակցության հուշագրեր, համաձայնագրեր ստորագրեց նախարարության հետ, կազմակերպվեցին բազմաթիվ հանդիպումներ, և իրականացվեցին մեծածավալ միջոցառումներ համայնքներում<sup>17</sup>:

Համատեղ աշխատանքներն աստիճանաբար ակտիվացան: Ուրախալի է այն փաստը, որ բազմաթիվ ծրագրերի կայացման գործում մեծ ներդրում ունեցան սփյուռքյան կառույցներն ու անհատները, ընդլայնվել են նախարարության ծրագրերին մասնակցողների թիվն ու աշխարհագրությունը:

Փաստորեն՝ 1990-ական թթ. սկզբներից՝ ԽՍՀՄ փլուզումից և խորհրդային հանրապետությունների անկախացումից հետո դասական սփյուռքի կողքին ի հայտ եկավ հետխորհրդային հանրապետություններում ապրող նոր Սփյուռքը: Այստեղ հայության կողմից ձևա-

<sup>15</sup> Տե՛ս Մինասյան Է., նշվ. աշխ., էջ 6:

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 7:

<sup>17</sup> Տե՛ս նույն տեղում:

վորված համայնքային նոր կառույցները ինքնակազմակերպվելով իրենց շուրջը համախմբեցին տեղի հայության ներուժը: Այդ գործընթացը շատ հաճախ ընթանում էր՝ ներառելով համառուսաստանյան և տեղական ներկայացուցիչներ:

Դեռևս 240 տարի առաջ Դոնի երկրամասում հաստատված մեր հայրենակիցները հիմնեցին դասական Սփյուռքի ներկայացուցչական մարմինը հանդիսացող Դոնի Ռոստովի Նոր Նախիջևանի հայկական համայնքը: Այդ հիմքի վրա էլ 1988 թ. ձևավորվեց նոր Սփյուռք հանդիսացող նույն համայնքի Ռոստովի մարզի հասարակական կազմակերպությունը: Բավականին լայն ու ընդգրկուն է նրա գործունեության շրջանակը: Բովանդակությամբ հարուստ ուղի է անցել նշված համայնքային կազմակերպությունը Ռոստովի մարզի համայնքային այլ կազմակերպությունների հետ միասին:

Մեր հետազոտության բուն նպատակն է բացահայտել ու ցույց տալ Դոնի Ռոստովի հայկական համայնքի և Հայաստանի Հանրապետության միջև եղած կապերն ու փոխհարաբերությունները ՀՀ անկախության շրջանում:

Դոնի Ռոստովի հայկական համայնքի գործունեության առաջին շրջանում համայնքային ղեկավարության ուշադրության կենտրոնում եղել են հիմնականում բնակչության առօրյա հոգսերն ու տեղական բնույթի այլ հարցեր: Մայր հայրենիքի հետ կապերն ու փոխհարաբերությունները չեն կրել համակարգային բնույթ: Պետություն-համայնք գործակցային կապերը դեռևս թույլ էին, շարունակական բնույթ չէին կրում, քանզի չէին հենվում շարունակական ծրագրերի վրա: Սակայն իրավիճակը փոխվեց 2008 թ. սկսած, երբ ՀՀ սփյուռքի նախարարության ձևավորումը նոր որակ հաղորդեց այդ հարաբերություններին: Սփյուռքի նախարարության ակտիվ գործունեության արդյունքում նրա հովանու ներքո կազմակերպված հասարակական-քաղաքական, գիտակրթական, հոգևոր-մշակութային միջոցառումները կրեցին պարբերական բնույթ և ոչ միայն իրենց դրական դերն ունեցան Դոնի Ռոստովի հայ համայնքի համար, այլև ուժեղացրին ու ամրապնդեցին կապերն ու փոխհարաբերությունները Հայաստանի Հանրապետության հետ<sup>18</sup>: Դեռևս 1993 թ. նոյեմբերին Դոնի Ռոստովում հանդիսավորությամբ նշվեցին Նոր Նախիջևանի հայ համայնքի 5-ամյա, 1998 թ. նոյեմբերին՝ նույն համայնքի հիմնադրման 10-ամյա, իսկ 2008 թ.

---

<sup>18</sup> «Դոնի Ռոստովի Նոր Նախիջևանի հայկական համայնք» կազմակերպությունը 1988-1997 թթ. ղեկավարել է Գրիգոր Խուրդայանը, 1997-2005 թթ.՝ Էդուարդ Վարդանյանը, 2005 թվականից՝ Հարություն Սուրմալյանը: Տե՛ս РРОО «Нахичеванская-на-Дону армянская община», URL://clck.ru/Hqhgtr (դիտումը՝ 01.08.2019):

նոյեմբերի 23-ին՝ 20-ամյա, և 2018 թ. նոյեմբերին՝ 30-ամյա հորեյանները<sup>19</sup>: Այդ հորեյաններին մասնակցեցին և ելույթներ ունեցան Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչներ, իսկ 2008 և 2018 թթ. հորեյաններին՝ նաև Սփյուռքի նախարարության ներկայացուցիչներ ու Ազգային ժողովի պատգամավորներ<sup>20</sup>, որոնք իրենց ելույթներում նշեցին Դոնի Ռոստովի Նոր Նախիջևանի հայկական համայնքի դերը Հայաստանի Հանրապետության հետ բազմակողմանի կապերի ու փոխհարաբերությունների ամրապնդման ու զարգացման գործում:

ՀՀ անկախության տարիներին գրեթե մշտական բնույթ է կրել Ռոստովի մարզում կազմակերպված Դոնի տարածաշրջանում հայկական առաջին բնակավայրերի հիմնադրման հորեյանական միջոցառումների հանդիսավոր անցկացումը ՀՀ-ից եկած պատվիրակությունների հետ: 1998 թ. սեպտեմբերին տեղի ունեցան Ռոստովի մարզի Մյասնիկյան շրջանում Դոնի տարածաշրջանում հայկական առաջին բնակավայրերի հիմնադրման 220-ամյակին նվիրված հանդիսություններ, որոնց մասնակցեցին ՀՀ արտգործնախարարության ԱՊՀ երկրների վարչության աշխատակիցները<sup>21</sup>: 2009 թ. սեպտեմբերի 4-5-ը նույն վայրում տեղի ունեցան Դոնի տարածաշրջանում հայկական առաջին բնակավայրերի հիմնադրման 230-ամյակին նվիրված հանդիսություններ, որոնց մասնակցեց ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ Ստեփան Պետրոսյանի գլխավորած պատվիրակությունը<sup>22</sup>: Պատվիրակության անդամներն այցելեցին շրջանում գործող երեք եկեղեցիներ և շրջկենտրոնի ազգագրական թանգարան, որտեղ մանրամասն ներկայացված են 18-րդ դարավերջին Դրիմի թերակղզուց հայերի վերաբնակեցումը և հայ համայնքի երկդարյա կյանքն ու գործունեությունը: Հանդիպումներ տեղի ունեցան Մյասնիկովյան վարչական շրջանի ղեկավար Խաչատուր Անոսյանի, «Նոր Նախիջևան» հայ համայնքի խորհրդի անդամների հետ: Քննարկվեցին ՀՀ-ի հետ Դոնի Ռոստովի հայ համայնքի համագործակցության ընդլայնման ծրագրեր<sup>23</sup>:

2019 թ. հոկտեմբերի 18-ին և 19-ին տեղի ունեցան Դոնի տարածաշրջանում հայկական առաջին բնակավայրերի հիմնադրման 240-ա-

---

<sup>19</sup> Տե՛ս ՀՀ արտգործնախարարության ընթացիկ արխիվի ԱՊՀ երկրների բաժնի նյութերը, 1993 թ., 1998 թ., 2008 թ., 2018 թ., նաև Հայկական սփյուռք, տարեգիրք, Սփյուռքի նախարարություն, Երևան, 2009, էջ 159:

<sup>20</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2009, էջ 159:

<sup>21</sup> Տե՛ս ՀՀ արտգործնախարարության ընթացիկ արխիվ, ԱՊՀ երկրների վարչություն, 1999:

<sup>22</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2009, էջ 163:

<sup>23</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 42:

մյակին նվիրված հանդիսություններ և միջազգային գիտաժողով, որին մասնակցեցին ՀՀ ԱԺ պատվիրակությունը, ՀՀ սփյուռքի համձնակատարի ներկայացուցիչը և ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ<sup>24</sup>:

Գրեթե մշտապես նշվել են նաև Դոնի հայկական համայնքների կենտրոն հանդիսացող քաղաքների ու բնակավայրերի հոբելյանները, որին մասնակցել են նաև ՀՀ-ից եկած պատվիրակություններ: Այսպես, օրինակ, 2010 թ. օգոստոսի 29-ին Ռոստովի մարզի Մյասնիկյանի շրջանում տեղի ունեցավ Սուրբ Աստվածածին եկեղեցու և Չարր գյուղի կազմավորման 231-ամյակին նվիրված տոնակատարություն, որի շրջանակներում գյուղի հիմնադիրների հիշատակին կազմակերպվեց ուխտագնացություն դեպի Մեծ Սալա, ապա Սուրբ Աստվածածին եկեղեցում մատուցվեց սուրբ պատարագ<sup>25</sup>, իսկ 2012 թ. դեկտեմբերի 13-ին Ռոստովի մարզի Բատայսկի հայ համայնքը նշեց քաղաքի հիմնադրման 243-ամյակը<sup>26</sup>:

2014 թ. սեպտեմբերի 28-ին Ռոստովի մարզի Մյասնիկյանի շրջանի Չարր գյուղի հայկական համայնքը մեծ շուքով նշեց հայերի վերաբնակեցման 235-ամյակը: Չեռնարկին մասնակցեցին Դոնի Ռոստովի, Մյասնիկյանի և Տագանրոգի հայկական մշակութային խմբերը<sup>27</sup>: Դոնի Ռոստովի հայկական համայնքը հայ ազգային ու ՀՀ պետական տոների, պատմամշակութային նշանակալից տարեթվերի առթիվ կազմակերպել է մշակութային միջոցառումներ, իրականացրել տարբեր ծրագրեր: Դոնի Ռոստովի հայկական համայնքում մշտապես հանդիսավորությամբ նշվել են հայոց պետականության վերականգնման հոբելյանական տարեթվերը: 1996 թ. սեպտեմբերի 21-ին ՀՀ անկախության 5-ամյակի առթիվ Դոնի Ռոստովի Սուրբ Հարություն եկեղեցում տեղի հայ համայնքը կազմակերպեց միջոցառում: Այդ նույն ձևով ավելի հանդիսավորությամբ 2001թ. սեպտեմբերի 21-ին նշվեց ՀՀ անկախության 10-ամյա հոբելյանը<sup>28</sup>: 2011թ. սեպտեմբերին Դոնի Ռոստովում տեղի ունեցան ՀՀ անկախության 20-ամյակին նվիրված միջոցառումներ, որոնց շրջանակներում կազմակերպվեցին ցուցահանդեսներ, գրական երեկոներ, սեմինարներ, հանդիպումներ, բացվեցին հայ ազգային մշակութային կենտրոններ (Լարինսկ-Կրասնոդար, Գեորգիևսկ-Ստավրոպոլ և այլն): Դոնի Ռոստովի հայ համայնքը կազմակերպեց

<sup>24</sup> Տե՛ս «Դոնի Նախիջևան», 23 հոկտեմբերի, 2019:

<sup>25</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2010, էջ 16:

<sup>26</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 141:

<sup>27</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2014, էջ 138:

<sup>28</sup> Տե՛ս ՀՀ արտաքին գործերի նախարարության ընթացքի արխիվ, ԱՊՀ երկրների վարչություն, 1995 թ. և 2001 թ.:

նան հայոց պատմության և մշակույթի հիշաժան տարեթվերին նվիրված հանդիպումներ<sup>29</sup>։

Սեկ տարի անց՝ սեպտեմբերի 21-ին, ՀՀ անկախության օրվա առթիվ Ռոստովի Սուրբ Աստվածածին եկեղեցու սպասավոր տեր Անանիա Բաբայանի և Սուրբ Համբարձում եկեղեցու սպասավոր տեր Թադևոս Հայբարյանի հրավերով Դոնի հոգևոր սեմինարիայի, Մոսկվայի կապի և ինֆորմատիկայի տեխնիկական համալսարանի ուսանողները, Հարավային դաշնային համալսարանի պատմության ֆակուլտետի կրոնական-պատմական ակումբի անդամներն այցելեցին Ռոստովի մարզի Մյասնիկյանի շրջանի հայկական եկեղեցիներ<sup>30</sup>։

2016 թ. սեպտեմբերի 21-ին Դոնի Ռոստովի Սուրբ Հարություն եկեղեցում հայ համայնքը մեծ հանդիսավորությամբ կազմակերպեց միջոցառում՝ նվիրված ՀՀ անկախության 25-ամյակին։ Միաժամանակ այն վերածվեց համասփյուռքյան տոնական միջոցառման, որին մասնակցեցին ոչ միայն մեր հայրենակիցները, այլև տեղի այլ ազգային փոքրամասնությունների համայնքային ներկայացուցիչները<sup>31</sup>։

Հաջորդ օրը՝ 2016թ. սեպտեմբերի 22-ին, Դոնի Ռոստովի հայկական համայնքը նախագահ Հարություն Սուրմալյանի աջակցությամբ տեղի ազգային մշակույթի տանը կազմակերպեց համերգ՝ նվիրված Հայաստանի անկախության 25-ամյակին։ Միջոցառմանը մասնակցեցին քաղաքային ղեկավարության ներկայացուցիչներ, պատգամավորներ, Հարավային դաշնային օկրուգում Հայաստանի գլխավոր հյուպատոս Վարդան Ասոյանը<sup>32</sup>։

Դոնի Ռոստովի հայ համայնքը գրեթե պարբերաբար և մեծ հանդիսավորությամբ նշել է Հայրենական մեծ պատերազմի հաղթանակին նվիրված հոբելյանական միջոցառումներ՝ հաշվի առնելով համայնքի մասնակցությունը հաղթանակի կերտման գործին։ 1995 թ. Դոնի Ռոստովի հայ համայնքը մեծ հանդիսավորությամբ նշեց Հայրենական մեծ պատերազմի 50-ամյակը։ Նույնկերպ նշվեցին նաև 60 և 70-ամյա հոբելյանները։

Չաղր գյուղում կազմակերպվեց Դոնի Ռոստովի հայկական համայնքից ռազմաճակատ մեկնած, ծնունդով նորոնախիջևանցի նշանավոր հայերին և Մեծ հայրենականի մասնակիցներին նվիրված պատմաազգագրական թանգարանի ցուցադրություն։ 2013 թ. մայիսի 24-ին Դոնի Ռոստովի Նախիջևանի հայ համայնքը կազմակերպեց Հայրեն-

<sup>29</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2011, էջ 182։

<sup>30</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 140։

<sup>31</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2016, էջ 138։

<sup>32</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 148։

նական մեծ պատերազմի վետերանների հանդիսավոր ընդունելություն՝ նվիրված հաղթանակի 68-ամյակին<sup>33</sup>, իսկ 2014 թ. հունվարի 16-ին Ռոստովի «Դոնի Նախիջևանի հայկական համայնք» ՀԿ-ն կազմակերպեց Հայրենական մեծ պատերազմի վետերանների մեծարման երեկո, որի ժամանակ նախագահ Հարություն Սուրմալյանը համայնքի անդամ Իլյա Թադևոսի Չրևին պարգևատրեց<sup>34</sup> «Մարշալ Բադրամյան» մեդալով<sup>35</sup>: 2015 թ. մայիսի 12-ին Դոնի Ռոստովի հայ համայնքի և տեղի Սուրբ Հարություն հայկական եկեղեցու հոգևոր հայր Տիրան Ավագյանի նախաձեռնությամբ կազմակերպվեց Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 70-ամյակին նվիրված միջոցառում: Այն նշվեց մեծ հանդիսավորությամբ: Նման միջոցառումներ կազմակերպվեցին հետագա տարիներին ևս<sup>36</sup>:

2009-2011 թվականները Դոնի Ռոստովի հայ համայնքի համար դարձան մայր հայրենիքից ներկայացուցչական պատվիրակությունների ընդունելու տարիներ, որոնք նպաստեցին հասարակական-քաղաքական կյանքի աշխուժացմանը: Կապված հայ-թուրքական հարաբերությունների քննարկումների հետ՝ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը 2009 թ. հոկտեմբերի 7-ին ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի հետ այցելեց Դոնի Ռոստով: ՀՀ նախագահը հանդիպում ունեցավ Ռուսաստանի և ԱՊՀ այլ երկրների հայաշատ համայնքների, կազմակերպությունների ու կառույցների ավելի քան 250 մասնակիցների հետ: Տեղի ունեցան քննարկումներ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացի շուրջ<sup>37</sup>:

Հաջորդ տարի՝ 2010 թ. հունիսի 1-2-ին, ՀՀ նախագահը աշխատանքային այցով կրկին ժամանեց Դոնի Ռոստով<sup>38</sup>, որտեղ նրա ղեկավարած պատվիրակությունը այցելեց Դոնի Ռոստովի Հայ առաքելական Սուրբ Համբարձում եկեղեցի, Պատմաագագագրական թանգարան, ինչպես նաև հարգանքի տուրք մատուցեց Մյասնիկյանի շրջանի՝ Մեծ հայրենականին մասնակցած հայ զինվորների հիշատակին: Նախագահը հանդիպումներ ունեցավ նաև Ռոստովի մարզի ղեկավարության և ՌԴ Հարավային դաշնային շրջանի հայ համայնքների ներկայացուցիչների հետ: Նա անդրադարձավ Հայաստանի ներքին և արտաքին կյանքի գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների հաղթահարման և տնտեսության վերականգնման հարցերին, կարևորեց

<sup>33</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2013, էջ 148:

<sup>34</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 162:

<sup>35</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2014, էջ 135:

<sup>36</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2015, էջ 136:

<sup>37</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2009, էջ 164:

<sup>38</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2010, էջ 10:



Դոնի Ռոստովի հայ համայնքի դերը հայ-ռուսական հարաբերությունների զարգացման, ինչպես նաև հայապահպանության գործում:

Հունիսի 2-ին Ռոստովում տեղի ունեցավ հայ համայնքի ներկայացուցիչների հանդիպում աշխատանքային այցով Ռոստովի մարզ ժամանած ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հետ: ՀՀ նախագահը Ռոստովի մարզպետ Վ. Գոլուբևի, ՀՀ գլխավոր հյուպատոս Ա. Գոմցյանի, Դոնի Նոր Նախիջևանի հայ համայնքի խորհրդի նախագահ Հ. Սուրմալյանի, Մյասնիկյանի շրջանի ղեկավար Ա. Պորկշեյանի և պաշտոնատար այլ անձանց ուղեկցությամբ Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հուշարձանի մոտ ուղերձով դիմեց Դոնի Ռոստովի հայ համայնքի ներկայացուցիչներին՝ կոչ անելով ավելի ակտիվացնել կապերն ու շփումները Հայաստանի Հանրապետության հետ<sup>39</sup>:

2011 թ. հուլիսի 8-10-ը Դոնի Ռոստով աշխատանքային այց կատարեց վարչապետ Տիգրան Սարգսյանը: Նրա ղեկավարած պատվիրակությունը այցելեց Ռոստովի մարզի Մյասնիկյանի շրջանի Չալդր հայկական գյուղ: ՀՀ կառավարության ղեկավարը ծանոթացավ տեղի հայության գործունեությանը, կենցաղին, պատմությանը: ՀՀ վարչապետն այցելեց Չալդրի Սուրբ Համբարձում եկեղեցի, ապա ծաղիկներ դրեց եկեղեցու բակում կանգնեցված, հայ ժողովրդի պատմության ընթացքում բազմաթիվ զոհերին նվիրված խաչքարի, ինչպես նաև Հայրենական մեծ պատերազմի զոհերի հիշատակը հավերժացնող հուշահամալիրի մոտ: ՀՀ կառավարության ղեկավարը եղավ Չալդրի պատմաազգագրական թանգարանում, ծանոթացավ ներկայացված ցուցանմուշներին: Հուլիսի 9-ին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի գլխավորած պատվիրակությունն այցելեց Դոնի Ռոստովի հայկական նորակառույց Սուրբ Հարություն եկեղեցի, որտեղ մատուցվեց սուրբ պատարագը: Երևան ժամանելուց առաջ ՀՀ վարչապետը հանդիպեց Ռոստովի մարզի հայ համայնքի ներկայացուցիչների հետ, որոնց ներկայացրեց Հայաստանի տնտեսության վիճակը, ծրագրերը և կառավարման մոդելը: Կառավարության ղեկավարը պատասխանեց մեր հայրենակիցների հարցերին, որոնք վերաբերում էին տրանսպորտային հաղորդակցության խնդիրներին, զբոսաշրջության զարգացման հնարավորություններին, Հայաստան-Սփյուռք կապերին և այլն<sup>40</sup>:

ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ և Դոնի Ռոստովի համայնքային կազմակերպությունների աջակցությամբ հատկա-

<sup>39</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2010, էջ 10:

<sup>40</sup> Տե՛ս ՀՀ արտգործնախարարության ընթացիկ արխիվ, ԱՊՀ երկրների բաժին, 2011, նաև Հայկական սփյուռք, տարեգիրք, ՀՀ սփյուռքի նախարարություն, Երևան, 2011, էջ 16, 17:

պես 2011-2017 թթ. Դոնի-Ռոստովում տեղի ունեցան մի շարք կարևոր միջոցառումներ, որոնք նպաստեցին մարզի հայ համայնքների հասարակական ակտիվության բարձրացմանը: Դրա լավագույն վկայություններն էլ են այն, որ 2012 թ. նոյեմբերի 16-18-ը Դոնի Ռոստովում Նոր Նախիջևանի հայ համայնքի և ՀՀ սփյուռքի նախարարության աջակցությամբ և Մոսկվայում, Կրասնոդարում, Մոզդոկում, Կիսլավոդսկում, Օրենբուրգում, Նիժնի Նովգորոդում, Պերմում ու Ուկրաինայում, Բելառուսում գործող երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ կայացավ ԱՊՀ երկրներում գործող հայկական երիտասարդական կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների՝ «21-րդ դարի մարտահրավերները և հայ երիտասարդությունը» խորագիրը կրող առաջին երիտասարդական համաժողովը<sup>41</sup>: Համաժողովը խնդիր դրեց երիտասարդությանը ավելի ակտիվորեն ներգրավելու համայնքային գործերին: Պատահական չէ, որ Դոնի Ռոստովի հայկական համայնքի շատ երիտասարդներ ներգրավեցին համայնքային հասարակական աշխատանքներում, մասնակցեցին շաբաթօրյակների կազմակերպմանը, աչքի ընկան հայրենասիրական ու մշակութային զանազան միջոցառումների նախաձեռնությամբ ու իրականացմամբ:

2011թ. նոյեմբերի 20-ին «Դոնի Ռոստովի հայկական համայնքի երիտասարդական միությունը» Սուրբ Կարապետ եկեղեցու տարածքում կազմակերպեց շաբաթօրյակ<sup>42</sup>: Նույն ժամանակ համայնքի հայ երիտասարդությունը նշեց Երևանի հիմնադրման հերթական հորելյանը:

Պետք է նկատի ունենալ, որ գրեթե ՀՀ սփյուռքի նախարարության և համայնքային կազմակերպությունների միջև, անկախ առկա խնդիրներից, մշտապես գործնական կապ է պահպանվել: Պատահական չէ, որ նույն նախարարության նախաձեռնությամբ 2015 թ. նոյեմբերի 27-29-ը Երևանում կայացավ «Ապագա» երիտասարդական համահայկական երկրորդ համաժողովը, որին մասնակցեցին Հայաստանի Հանրապետությունից, Արցախից ժամանած և Սփյուռքի, այդ թվում՝ Դոնի Ռոստովի հայ համայնքի հայկական երիտասարդական կազմակերպությունների շուրջ 70 ղեկավարներ ու ներկայացուցիչներ՝ աշխարհի 10 երկրներից<sup>43</sup>: Այս համաժողովներում այլ հարցերի թվում

<sup>41</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2012, էջ 142:

<sup>42</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2014, էջ 137:

<sup>43</sup> Տե՛ս ՀՀ արտգործնախարարության ընթացիկ արխիվ, ԱՊՀ երկրների վարչություն, 2015, մաս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2015, էջ 28:

քննարկվեցին նաև Սփյուռքի հայ երիտասարդությանը հայրենիքի շե-  
նացման ու զարգացման ծրագրերին մասնակից դարձնելու հարցերը:

Դոնի Ռոստովի Նոր Նախիջևանի հայկական համայնքը՝ Հարու-  
թյուն Սուրմալյանի գլխավորությամբ, էլ ավելի ամրապնդեց իր կապե-  
րը Հայաստանի Հանրապետության հետ: Այդ կապերն առավել ամ-  
րապնդվեցին 2011 թ. հունիսին պատմաբան Սերգեյ Սալադովին հա-  
մայնքային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնում նշա-  
նակվելուց հետո<sup>44</sup>: Նրանց ղեկավարությամբ համայնքային կազմա-  
կերպության կապերը ՀՀ-ի հետ ավելի աշխուժացան ու դարձան ավելի  
համակարգված: Պատահական չէ, որ իր ակտիվ ու արդյունավետ աշ-  
խատանքի համար Հ. Սուրմալյանը ՀՀ նախագահի կողմից պար-  
գևատրվեց Մ. Խորենացու մեդալով:

Համայնքի գործունեության հասարակական-քաղաքական  
ակտիվացմանը մեծապես նպաստեց նաև այն հանգամանքը, որ 2011  
թ. դեկտեմբերի 21-ին Դոնի Նոր Նախիջևանի հայկական համայնքի  
վարչության նախագահ Հարություն Սուրմալյանը «Միացյալ Ռուսաս-  
տան» («Единая Россия») կուսակցության տարածաշրջանային մաս-  
նաճյուղի թեկնածուների ցուցակով<sup>45</sup> դարձավ Ռոստովի մարզի Օրենս-  
դրական ժողովի պատգամավոր: 2013 թ. սեպտեմբերի 9-ին Հարություն  
Սուրմալյանը նորից վերընտրվեց, իսկ օլիմպիական չեմպիոն Վարդե-  
րես Սամուրդաշևն ընտրվեց Ռոստովի մարզի Օրենսդրական ժողովի  
պատգամավոր<sup>46</sup>: Հարություն Սուրմալյանը այսօր էլ պատգամավոր է  
և իր ակտիվ աշխատանքով շարունակում է ավելի ամրապնդել ու զար-  
գացնել համայնքի կապերը ՀՀ-ի հետ:

Ռոստովի մարզի հայկական համայնքի հասարակական-քաղա-  
քական կյանքի կարևորագույն ձեռքբերումներից պետք է համարել  
այն, որ 2013 թ. փետրվարի 22-ին Ռոստովի մարզի Ազգովի շրջանի Սա-  
մարսկ գյուղի հայկական համայնքն ընդգրկվեց միջէթնիկական հարա-  
բերությունների խորհրդի կազմում<sup>47</sup>, իսկ 2016 թ. հունիսի 21-ին Դոնի  
Ռոստովի հայ համայնքի ներկայացուցիչ Արթուր Գրիգորյանը նշա-

---

<sup>44</sup> Տե՛ս Հովհաննիսյան Մ., Դոնի նախիջևանյան հայկական համայնքի հումանիտար հա-  
րաբերությունները Հայաստանի Հանրապետության հետ նորագույն շրջանում, Нахиче-  
вань-на-Дону: История и Современность (к 240-летию переселения армян на Дон), Ма-  
териалы международной научной конференции, Ростов-на-Дону, 18-19 октября, 1919, с.  
263:

<sup>45</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2011, էջ 185:

<sup>46</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2013, էջ 163:

<sup>47</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 159:

նակվեց Դոնի Ռոստովի Պերվոմայսկի շրջանի վարչակազմի ղեկավար<sup>48</sup>։

ՀՀ-ի հետ Դոնի Ռոստովի հայ համայնքի կապերի ամրապնդմանը մեծապես նպաստեց 2010 թ. մարտի 25-ին հայկական ինտերնետ-միության աջակցությամբ Դոնի Նոր-Նախիջևանի հայկական համայնքի կայքէջի բացումը<sup>49</sup>, իսկ երկու տարի անց՝ 2012 թ. փետրվարի 16-ին, ամբողջությամբ ներկայացվեց «Նորնախիջևանյան հայ համայնք» հայկական հասարակական կազմակերպությունների կայքէջը՝ <http://neno.ru><sup>50</sup>։

Համայնքի և ՀՀ-ի բազմակողմանի կապերի ամրապնդմանը մեծապես նպաստեց նաև ՀՀ Սփյուռքի նախարարության ծրագրերին համայնքի անդամների ակտիվ մասնակցությունը։ Այն սկսվեց 2009 թ., սակայն ակտիվ և արդյունավետ ընթացք ունեցավ հետագա տարիներին։ 2013 թ. մարտի 20-ին տեղի ունեցավ ՀՀ սփյուռքի նախարարության և Դոնի Ռոստովի հայ համայնքի ներկայացուցիչների միջև հեռակոնֆերանս, որի ընթացքում քննարկեցին համատեղ ծրագրերի իրականացմանն առնչվող հարցեր։ Դոնի Ռոստովի հայ համայնքային կազմակերպությունը 2009 թ. սկսեց լայնորեն տարածել Սփյուռքի նախարարության կողմից կազմակերպվող «Արի տուն» ծրագրի մասին տեղեկատվությունը, որի արդյունքում համայնքում հետզհետե աճեց ծրագրին հայտ ներկայացրած մասնակիցների թիվը<sup>51</sup>։ Նրանց քանակը շուտով հասավ երկու տասնյակի։

Ծրագրի նպատակն էր ճանաչելի դարձնել հայրենիքն աշխարհասփյուռ հայ երիտասարդների համար, նպաստել մատաղ սերնդի հայեցի դաստիարակությանը, երիտասարդության լայն շրջանում ազգային արժատների ու ինքնության ճանաչմանը և հայազորացմանը։ Երեխաները հյուրընկալվեցին հայ ընտանիքներում, չորս օր անցկացրին ճամբարում։ Սփյուռքի նախարարության կողմից 2009 թ. մեկնարկած «Արի տուն» ծրագրի շնորհիվ ավելի քան 2000 հայազգի երեխաներ աշխարհի 36 երկրներից արդեն այցելել են Հայաստանի Հանապետություն, եղել պատմամշակութային վայրերում, ծանոթացել մշակութային ավանդույթներին։ Նրանց թվում էին նաև Դոնի հայկական համայնք ներկայացուցիչները։ Դոնի Ռոստովի հայ համայնքից այդ ծրագրին

<sup>48</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2010, էջ 152։

<sup>49</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2012, էջ 135։

<sup>50</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2013, էջ 18։

<sup>51</sup> Տե՛ս Программа «Ари Тун», Нахичевань-на-Дону, 2011, N6/177/, июнь, с. 11, «Ари Тун», Нахичевань-на-Дону, 2010, N10/181/, октябрь, с. 11: Տե՛ս նաև «Ари Тун» поростовски, 2013, 26 августа, <https://clckk.ru/J6rQ3> (դիտումը՝ 02.08.2019)։ Долгожданная встреча с Родной!, 2012, 1 октября. <https://clckk.ru/J7rQ3> (դիտումը՝ 02.08.2019)։

մասնակցած Քրիստինա Դավթյանը գրում է. «Ես շատ ուրախ եմ, որ այս ամառ ուղևորվեցի Հայաստան՝ ոչ միայն հյուրընկալվելու բարեկամներին, այլև «Արի տուն» ծրագրով բառացիորեն տեսնելու Հայաստանը ներսից: Էլ ե՞րբ կընձեռվեր մման հնարավորություն՝ լինելու հայրենիքիդ գրեթե բոլոր անկյուններում և այսքան կարճ ժամանակահատվածում գտնելու ընկերներ գրեթե ամբողջ աշխարհից:

Իհարկե երկու շաբաթն այնքան էլ շատ չէ՝ մեր երկրի մասին ամեն ինչ իմանալու համար... Սակայն հենց այս երկու շաբաթները կարող են արտերկրում բնակվող երեխաների համար խթան հանդիսանալ՝ ուսումնասիրելու այն ամենը, ինչ հայկական է, հասկանալու, որ նրանք հսկայական պատմության մի մասնիկն են, չկրկնվող և չփոփոխվող ավանդույթների կրողը, որ հենց նրանք են Հայաստանի ներկան ու ապագան: Ես կարծում եմ, որ այս կարճատև 14 օրերը ոմանց արտերում կվառեն սիրո կրակ հայրենիքի հանդեպ, կրակ, որը չի եղել երբևէ, բայց և այլևս չի հանգչի երբեք: Հիշել, պատվել, պահպանել մայրենի լեզուն և հսկայական ողջ ժառանգությունը, որը թողել են մեր նախնիները. սա է մեր խնդիրն ու պարտականությունը, իսկ «Արի տունը» շատերի համար դառնում է դրանց իրականացման առաջին քայլը»<sup>52</sup>:

ՀՀ-ի և Դոնի Ռոստովի հայկական համայնքի միջև կապերը ամրապնդվեցին նաև գիտակրթական ոլորտում: Առաջին հերթին անհրաժեշտ է արձանագրել ՀՀ սփյուռքի նախարարության «Սփյուռք» ամառային դպրոցին և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծրագրին համայնքի ներկայացուցիչների մասնակցության փաստը<sup>53</sup>: Դեռևս «Սփյուռք» ամառային դպրոցի նախնական ձևավորման փուլում համայնքն այն քիչ թվով սփյուռքյան կառույցներից էր, որ ծրագրին մասնակցելու մղեց իր ներկայացուցիչներին: Այսպես, 2011 թ. «Նոր Նախիջևան» թերթի բոլորակցի կարգավիճակով Սփյուռքի ՁԼՄ-ի երիտասարդ լրագրողների դպրոցի դասընթացներին մասնակցեց Լիլիթ Սեարոպյանը<sup>54</sup>: Նրա մասնակցության կարևոր ձեռքբերումներից էր հետադարձ կապի ապահովումը: Արդյունքում համայնքային ղեկավարության ու դպրոցի համակազմակերպիչների և Երևանի պետական

<sup>52</sup> Տե՛ս ՀՀ սփյուռքի նախարարության գործունեության 5 տարիները, Հայաստան-Սփյուռք գործակցություն, Երևան, 2013, էջ 141:

<sup>53</sup> Տե՛ս Հովհաննիսյան Մ., նշվ. հոդ., էջ 264, նաև տե՛ս Սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստում, <https://clckk.ru/JECWd>, տե՛ս նաև Стартова программа переподготовки учителей из Спюрка, <https://clckk.ru/J6uvM> (դիտումը՝ 02.08.2019):

<sup>54</sup> Տե՛ս Հովհաննիսյան Մ., նշվ. հոդ., նաև՝ Սկզբնական Սփյուռքի ՁԼՄ-ի երիտասարդ լրագրողների դպրոցի դասընթացները, [https://www.mindiaspora.am/am/News\\_1454](https://www.mindiaspora.am/am/News_1454) (դիտումը՝ 02.08.2019):

համալսարանի ներկայացուցիչների միջև համացանցային հեռահար կապի միջոցով սկսվեց երկարատև համագործակցության շրջան<sup>55</sup>: Այն նշանավորվեց կողմերի միջև 2011 թ. կնքված պայմանագրով, որը ստորագրեցին ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Միմոնյանը և Դոնի Նախիջևանի հայկական համայնքի նախագահ Հարություն Սուրմալյանը: Այն իր ձևաչափով հայրենիք-Սփյուռք հարաբերությունների համատեքստում առաջինն էր<sup>56</sup>:

Հետագայում «Սփյուռք» ամառային դպրոցի ձևավորման ընթացքում հնարավոր եղավ ներգրավել համայնքային ներկայացուցիչներին հայերենի արագացված ուսուցման, ազգային երգի ու պարի մասնագետների, լրագրողների, հայոց լեզվի ուսուցիչների վերապատրաստման և երիտասարդ առաջնորդների համար նախատեսված դասընթացներին<sup>57</sup>:

Օգոստոսի 5-ին Հրանուշ Հակոբյանն ընդունեց սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման 2011 թ. ծրագրի մասնակիցներին, որոնց թվում էին Դոնի Ռոստովի հայկական համայնքի ներկայացուցիչները: «Այս տարի սփյուռքահայ ուսուցիչների համար, բացի ավանդական դարձած 4 ուսումնական խմբերից՝ նախադպրոցական, տարրական, մեկօրյա, միջին և ավագ դպրոցների, ձևավորվել են երկու նոր խմբեր՝ պարի ու արտադասարանային միջոցառումների կազմակերպում, ինչպես նաև կրթության կազմակերպում ու կրթօջախների կառավարում»<sup>58</sup>, – ընդգծել է նախարարը:

Դեռևս 2010 թ. հոկտեմբերի 1-ի ՀՀ սփյուռքի նախարարության առաջարկությամբ Դոնի Ռոստովում ՀՀ գլխավոր հյուպատոսարանում տեղի է ունեցել հայկական համայնքի լավագույն ուսուցիչների մեծարման և պարգևների հանձնման արարողություն: Հայոց լեզվի ուսուցման և տարածման, ժողովուրդների միջև բարեկամության զարգացման գործում ունեցած ավանդի համար ՀՀ վարչապետի մեղալով պարգևատրվեց դասախոս, հայոց լեզվի մեթոդական գրքերի հեղինակ Անդրանիկ Մալխասյանը: Պատվոգրեր և նվերներ հանձնվեցին նաև այլ ուսուցիչների<sup>59</sup>:

<sup>55</sup> Տե՛ս Հովհաննիսյան Մ., նշվ. հոդ., էջ 265, նաև՝ Новые перспективы сотрудничества, 2012, 20 июля, <https://clckk.ru/J6rQ3> (ղխումը՝ 02.08.2019):

<sup>56</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>57</sup> Տե՛ս Հովհաննիսյան Մ., նշվ. հոդ., նաև Летняя школа «Диаспора 2016», 2016, 16 мая, <https://clckk.ru/J6uqс> (ղխումը՝ 02.08.2019), նաև Завершилась летняя школа «Диаспора», <http://ysu.am/main/ru/Summer-school-Diaspora-is-over> (ղխումը՝ 02.08.2019):

<sup>58</sup> Նույն տեղում:

<sup>59</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2011, էջ 32:

ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ ՀՀ անկախության 20-ամյակի կապակցությամբ 2011 թ. ամբողջ ընթացքում Դոնի Ռոստովում կազմակերպվել են հայոց լեզվի օլիմպիադաներ՝ դպրոցականների և ուսանողների մասնակցությամբ, ինչպես նաև հայկական մշակույթի երեկոներ՝ տեղի երգի ու պարի խմբերի, Հայաստանից հրավիրված խմբերի և անհատ կատարողների մասնակցությամբ<sup>60</sup>:

ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ 2011 թ. «Մայրենիի լավագույն ուսուցիչ» մրցությամբ առաջին կարգի մրցանակ է շնորհվել Ռոստովի մարզի Աքսայի շրջանի կրթության վարչության տեղական ինքնավարության երեխաների լրացուցիչ կրթության կենտրոնի ուսուցչուհի Լուսինե Պետանյանին, իսկ երկրորդ կարգի մրցանակի են արժանացել նույն՝ Ռոստովի մարզի Մյասնիկյան շրջանի Մեծ Սալա գյուղի թիվ 8 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Էմմա Զարտաշյանը և Դոնի Ռոստովի հայկական համայնքին կից կիրակնօրյա դպրոցի ուսուցչուհի Արևիկ Մխիթարյանը:

Նույն տարում սեպտեմբերի 24-ին տեղի ունեցավ Դոնի Ռոստովի հայկական համայնքի հոգևոր կյանքի համար կարևոր նշանակություն ունեցող իրադարձություն<sup>61</sup>: Ռոստովի մարզի Մյասնիկյանի շրջանի Բուշին Մալի գյուղում Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի Սուրբ Աստվածածին եկեղեցու մարզի ղեկավարության և «Դոնի Նոր Նախիջևանի հայ համայնք» հասարակական կազմակերպության համագործակցությամբ, բարերար Վլադիմիր Պոպովյանի աջակցությամբ տեղի ունեցավ 1937-1938 թթ. բռնաճնշումների զոհ դարձած՝ Սուրբ Աստվածածին եկեղեցու հոգևորականների և եկեղեցուն կից գործող դպրոցի ուսուցիչների հիշատակին նվիրված արարողություն<sup>62</sup>: Համայնքում մեծ հանդիսավորությամբ նշվեցին հայ գրատպության 500-ամյակին նվիրված միջոցառումները:

2011 թ. հոկտեմբերի 5-ին Դոնի Ռոստովում հայկական համայնքի նախաձեռնությամբ և ՀՀ կրթության և գիտության նախարարության, Երևանի Չեխովի անվան թիվ 55 դպրոցի ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակերպվեց ուսուցչի օրվան նվիրված միջոցառում<sup>63</sup>:

2012 թ. ապրիլի 27-ին Մյասնիկյան շրջանի Չալոբ գյուղում Դոնի Ռոստովի «Ապագա» հայկական ազգային, մշակութային միությունը կազմակերպեց հայոց լեզվի և գրականության մարզային օլիպիադա՝ նվիրված հայ գրատպության 500-ամյակին, որի հաղթողները արժա-

<sup>60</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2010, էջ 156:

<sup>61</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2011, էջ 185:

<sup>62</sup> Տե՛ս ՀՀ սփյուռքի նախարարության գործունեության 5 տարիները, էջ 282-283:

<sup>63</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2011, էջ 182:

նացան պարզևների, իսկ նույն տարվա դեկտեմբերի 6-ին Դոնի Ռոստովի հանրային գրադարանում բացվեց «Գիրքը հայ ժողովրդի հոգևոր տարածք» խորագրով ցուցահանդես, ինչպես նաև կազմակերպվեց «Հայ գիրքը 21-րդ դարում. հրատարակման, տարածման և ընթերցանության մշակույթի խնդիրները» թեմայով կրթ սեղան՝ նվիրված հայ գրատպության 500-ամյակին: Միջոցառումը կազմակերպվեց Դոնի Ռոստովի հանրային գրադարանի և Դոնի Նախիջևանի հայկական համայնքի համատեղ ջանքերով<sup>64</sup>:

2016 թ. փետրվարի 21-ին Հարավային Ռուսաստանի հայոց թեմի «Վարդանյան» կենտրոնում Դոնի Ռոստովի հայկական համայնքի ներկայացուցիչների մասակցությամբ նշվեց Մայրենիի միջազգային օրը<sup>65</sup>: Միջոցառմանը մշակութային կենտրոնի «Արմատ» դպրոցի սաները ներկայացրին փոքրիկ բեմականացումներ և քննարկեցին հայ ժողովրդի պատմության գրական ու հոգևոր մշակույթի մի շարք առանցքային հարցեր<sup>66</sup>:

2013 թ. սկսած՝ Հայաստանի Հանրապետությունում ՀՀ գիտության և կրթության նախարարության նախաձեռնությամբ, պետական միջոցներով երկու տարին մեկ անգամ անցկացվել են համահայկական հայագիտական օլիմպիադաներ: 2019 թ. օգոստոսի 5-11-ը 9-րդ անգամ այն անցկացվեց Հայաստանի Հանրապետությունում՝ Աղվերամում<sup>67</sup>: Առաջին օրվանից սկսած՝ օլիմպիադային իր ակտիվ մասնակցությունն բերեց Դոնի Ռոստովի հայկական համայնքը: Այս օլիմպիադային համայնքը ներկայացրեց 5 մասնակցի<sup>68</sup>: Հայկական հայագիտական 9-րդ օլիմպիադայի արդյունքում Չարլրի 1-ին դպրոցի աշակերտուհի Կարախանյան Ինեսան արժանացավ III կարգի մրցանակի: Ավետյան Տիգրանը, ջութակով դյուբիչ և կախարդական մեղեդիներ նվագելով, ստացավ վկայական: Սահակյան Անին, Կարախանյան Էդիտան և Սարգսյան Մելինեն, ասմունքի մրցույթին մասնակցելով, ստացան վկայականներ: «Այս համահայկական հայագիտական օլիմպիադայի ժամանակ մենք բարձր պահեցինք Չարլրի 1-ին դպրոցի պատիվը. և՛ Մյասնիկյանի շրջանի, և՛ ՌԴ շրջանակներում դարձանք լավագույնը»<sup>69</sup>, – ընդգծել է Ինեսա Կարախանյանը:

<sup>64</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2012, էջ 137:

<sup>65</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 143:

<sup>66</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2016, էջ 145:

<sup>67</sup> Տե՛ս «Դոնի Նախիջևան», №9 (276), սեպտեմբեր, 2019, էջ 8:

<sup>68</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>69</sup> Նույն տեղում:



2016 թ. փետրվարի 27-ին Դոնի Ռոստովի «Միասին» ուսանողական միությունը և տեղի հայկական համայնքը կազմակերպել են սեմինար՝ «Հայ պոեզիայի լեզուն 19-20-րդ դարերում» խորագրով<sup>70</sup>:

ՀՀ անկախության շրջանում ավելի ամրապնդվեցին կապերն ու համագործակցությունը ՀՀ-ի և Դոնի հայկական համայնքների միջև գիտության ոլորտում: Դրա լավագույն օրինակ են համայնքի ուսումնական և գիտական կենտրոնների, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, ԵՊՀ-ի և հանրապետության այլ բուհերի հետ համատեղ միջազգային գիտաժողովի կազմակերպումը, համատեղ գրքերի շնորհանդեսների, ազգային և պետական հայտնի գործիչների մեծարման միջոցառումների անցկացումը, գիտական ծրագրերի իրականացումը և այլն:

Գիտական համագործակցության զարգացման ուղղությամբ կարևոր քայլ էր 2009 թ. ապրիլի 23-24-ին Դոնի Ռոստովում կազմակերպված միջազգային գիտաժողովը՝ «Ռուսաստանն ու հայերը. Փոխհամագործակցության պատմությունն ու ավանդույթները, ներկա հիմնախնդիրներն ու հեռանկարները» թեմայով, որին մասնակցեցին նաև ՀՀ ԳԱԱ և ԵՊՀ գիտնականներ:

Նշված գիտաժողովները շուտով դարձան պարբերական, նույնիսկ անցկացվեցին տարեկան մի քանի անգամ (հիմնականում հայագիտական թեմաներով)՝ իրենց վրա սևեռելով գիտական հանրության ուշադրությունը: 2009 թ. սեպտեմբերի 10-ին Դոնի Ռոստովում տեղի ունեցան գիտական ընթերցումներ՝ «Հովսեփ Արղությանի գործունեությունը Կովկասում՝ Ռուսաստանի աշխարհաքաղաքականության համատեքստում» թեմայով<sup>71</sup>, իսկ հոկտեմբերի 15-16-ին Ռոստովի էկոնոմիկայի և կառավարման միջազգային ինստիտուտում տեղի ունեցավ միջբուհական գիտագործնական համաժողով՝ «Դոնի Նախիջևան. Հայ-ռուսական ազգամիջյան հարաբերությունների ռազմավարական միությունը» թեմայով, որին մասնակցեցին ՀՀ-ից ներկայացուցիչներ<sup>72</sup>:

Հաջորդ տարի ևս Ռոստովի պետական տնտեսագիտական համալսարանում Դոնի Նոր Նախիջևանի հայ համայնքի կազմակերպմամբ տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցին նվիրված «Վերածնված ժողովրդի պատմությունը» խորագրով երիտասարդական միջբուհական գիտաժողով, որին կրկին հրավիրված էին ՀՀ բուհերի ներկայացուցիչներ<sup>73</sup>: Նույն տարվա օգոստոսի 28-ին Դոնի

<sup>70</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2016, էջ 145:

<sup>71</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2009, էջ 163:

<sup>72</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 164:

<sup>73</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2010, էջ 153:

հայկական համայնքի նախաձեռնությամբ Սոչիի «Խաղաղ Դոն» առողջարանում տեղի ունեցավ «Ռուսաստանի հայկական Սփյուռք. Ժամանակի մարտահրավերներ» միջազգային հասարակական խորհրդածողովը ՀՀ-ից, ԼՂՀ-ից, Մոսկվայից, Ռոստովի մարզից, Ստավրոպոլի, Կրասնոդարի երկրամասերից, Աբխազիայից ժամանած գիտնականների և հասարակական գործիչների մասնակցությամբ<sup>74</sup>:

Դոնի Ռոստովի նախիջևանյան հայկական համայնքի նախաձեռնությամբ 2011 թ. փետրվարի 7-ին ստեղծվեց Հարավային դաշնային օկրուգի ռուս-հայկական տեղեկատվական-վերլուծական և մշակութային-լուսավորչական կենտրոնը, որը սերտորեն համագործակցեց Ռուսաստանի և Հայաստանի պետական ու հասարակական կազմակերպությունների, միջազգային կազմակերպությունների և ՁԼՄ-ների հետ<sup>75</sup>: Նույն տարվա ապրիլի 23-ին Ռոստովի պետական տնտեսագիտական համալսարանում հայ համայնքի կազմակերպմամբ տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին մվիրված «Ճշմարտություն առանց դատի» (“Правда без суда”) խորագրով միջբուհական գիտաժողով, որին կրկին ակտիվորեն մասնակցեցին նաև ՀՀ-ից հրավիրվածներ:

2012 թ. մայիսի 30-ից հունիսի 2-ը Դոնի Ռոստովում տեղի ունեցավ համառուսաստանյան գիտական խորհրդածողով՝ «Ռուսաստանի հարավի հայերը. Պատմությունը, մշակույթը և ապագան» թեմայով: Միջոցառումը կազմակերպել էին Դոնի նախիջևանյան հայկական համայնքը, Դոնի Ռոստովի «Ապագա» հայկական ազգային, մշակութային կազմակերպությունը, Դոնի Ռոստովի տարածաշրջանային հասարակական կազմակերպությունը ՌԳԱՅ հարավային գիտական կենտրոնի հետ համատեղ: Այստեղ կրկին հրավիրվել էին և մասնակցեցին քննարկումներին ՀՀ գիտական շրջանների ներկայացուցիչներ:

Գիտության ոլորտում բուհերի և Դոնի Ռոստովի նախիջևանյան հայկական համայնքի միջև համագործակցության լավագույն օրինակ դարձավ համայնքային կազմակերպության կողմից 2012 թ. ապրիլի 20-ին կազմակերպված «Ցեղասպանություն. հանցագործություն ընդդեմ մարդկայնության: Հայոց ցեղասպանության պատմաիրավական տեսանկյունները» խորագիրը կրող գիտագործնական գիտաժողովը: Առաջին անգամ համայնքային կազմակերպությունը գիտաժողովին մասնակցելու նպատակով պաշտոնապես դիմեց ԵՊՀ-ին՝ թեմայի շուրջ փորձագետներ գործուղելու համար<sup>76</sup>: Այս փորձը հետագայում ևս կի-

<sup>74</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2010, էջ 156:

<sup>75</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2011, էջ 174:

<sup>76</sup> Տե՛ս Հովհաննիսյան Մ., նշվ. հոդ., էջ 265-266:

բառվեց տարբեր թեմատիկ դասախոսությունների, գիտական զեկու-  
ցումների ներկայացման համար<sup>77</sup>: Գիտաժողովների շարքը հետագա-  
յում ավելի ընդլայնվեց: Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի,  
Հարավային գիտական կենտրոնի հովանու ներքո և համայն-  
քային կազմակերպության գործուն մասնակցությամբ 2012<sup>78</sup>, 2015,  
2018<sup>79</sup> թվականներին կազմակերպվեցին «Ռուսաստանի հարավի հա-  
յերը», ինչպես նաև 2014 թ. «Կազակները և լեռնականները Առաջին  
աշխարհամարտի տարիներին» խորագրերը կրող միջազգային գիտա-  
ժողովները:

Հայաստանի Հանրապետության և Արցախի գիտական շրջանակ-  
ներից Դոնի Ռոստովի հայ համայնքի կողմից կազմակերպված մեկ մի-  
ջազգային ֆորումին և երեք գիտաժողովներին ավելի ակտիվորեն մաս-  
նակցեցին ՀՀ ԳԱԱ-ն և ԵՊՀ-ն: Դրանց թվում էր 2013 թ. հոկտեմբերի  
25-26-ին Դոնի Ռոստովում կազմակերպված «Ռուսաստանի և միջազ-  
գային հանրությունը. Արևմտյան Հայաստանը և սահմանակից պետու-  
թյունները. Պատմաիրավական վերլուծություն և արդի խնդիրները» թե-  
մայով գիտաժողովը<sup>80</sup>, 2015 թ. ապրիլի 18-ին Դոնի Ռոստովի հայ հա-  
մայնքի կազմակերպած «Հիշում եմ և պահանջում» թեմայով միջազ-  
գային ֆորումը, որին մասնակցեցին ՌԴ-ում ՀՀ դեսպանը, պատվի-  
րակներ Հայաստանից, հասարակական-քաղաքական գործիչներ, հայ  
համայնքի ներկայացուցիչներ: Նույն օրը տեղի ունեցավ Դոնի Ռոս-  
տովի հայ համայնքի և «Դոնի հայ երիտասարդների միության» և Ռու-  
սաստանի հայ երիտասարդների կոնգրեսի հետ համատեղ կազմակեր-  
պած «Ցեղասպանությունը Դոնի բնակչության պատմական հիշողու-  
թյան մեջ» թեմայով գիտաժողովը<sup>81</sup>, 2016 թ. ապրիլի 23-ին՝ Դոնի Նա-  
խիջևանյան հայ համայնքի և Դոնի պետական հանրային գրադարա-  
նի կողմից համատեղ ուժերով կազմակերպած երիտասարդական գի-  
տագործնական կոնֆերանսը՝ «Ցեղասպանությունը՝ հանցագործու-  
թյուն ընդդեմ խաղաղության և մարդկության» խորագրով: Հայ երիտա-  
սարդությունը մասնակցեց նաև «100+1» համառուսական ակցիային՝  
նվիրված Հայոց ցեղասպանության 101-րդ տարելիցին<sup>82</sup>:

<sup>77</sup> Տե՛ս Հովհաննիսյան Մ., նշվ. հոդ., էջ 266:

<sup>78</sup> Տե՛ս նույն տեղում, նաև Армяне Юга России: история, культура, общее будущее: II  
межд. науч. конфер. (26-28 мая 2015 г.), Ростов-на-Дону, <https://clck.ru/J7MVe> (ղխումը՝  
03.08.2019):

<sup>79</sup> Տե՛ս նույն տեղում, նաև՝ Казаки и горцы в годы Первой мировой войны: новые подходы  
и информационное обеспечение исследований: межд. науч. конфер.,  
<https://clck.ru/J7MXm> (ղխումը՝ 03.08.2019):

<sup>80</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2013, էջ 164:

<sup>81</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2015, էջ 133:

<sup>82</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2016, էջ 146:

Իրենց հերթին Դոնի հայկական համայնքի գիտական շրջանակները ներկայացնող հայ հետազոտողները ևս հնարավորություն ունեցան ակտիվորեն մասնակցելու հայագիտական ուղղվածության երկու շատ կարևոր միջազգային գիտաժողովների, որոնք տեղի ունեցան Երևանում՝ ՀՀ ԳԱԱ-ում (2003 թ. սեպտեմբերին և 2013 թ. հոկտեմբերին «Հայագիտության արդի վիճակն ու զարգացման հեռանկարները» խորագրով): Գիտաժողովի նպատակն էր համակարգել և զարգացնել հայագիտության ոլորտում Հայաստանի և արտերկրի, մասնավորապես ՀՀ սփյուռքի մասնագետների աշխատանքները<sup>83</sup>:

Դոնի հայկական համայնքի հայագիտական մտավոր ներուժը համախմբելու նպատակով դեռևս 2011 թ. համայնքային կազմակերպության և նույն ներկայացուցիչների միջև իրականացվեցին քննարկումներ: 2013 թ. ՌԳԱ հարավային գիտական կենտրոնի, համայնքային կազմակերպության և ԵՊՀ-ի միջև կնքված եռակողմ պայմանագրի շրջանակում հարցը մոտ էր իրավական առումով լուծում ստանալուն<sup>84</sup>: Հիմնականում ֆինանսական բավարար միջոցների բացակայությունը պարբերաբար հետաձգում էր հարցի լուծումը: Այնուամենայնիվ, առկա գործակցային կապերը շարունակում էին զարգանալ: Դրանք ընթացքում ամրապնդվեցին ԵՊՀ ղեկավարության ներկայացուցիչների՝ Դոնի Ռոստով կատարած երկու պաշտոնական այցերի արդյունքում<sup>85</sup>:

ԵՊՀ հարթակում սեփական հետազոտություններն ու գիտաճանաչողական նախագիծը ներկայացնելու հնարավորություն ընձեռվեց համայնքային կազմակերպության գործադիր տնօրեն, պ.գ.թ. Մերգեյ Սայադովին: Երևանի պետական համալսարանում Սայադովի կողմից ներկայացվեց ռուսալեզու «Հայագգ» համացանցային հանրագիտարանը<sup>86</sup>:

Որոշ ժամանակ անց ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի գործունեության շրջանակում համալսարանական ուսանող կամավորների մասնակցությամբ հնարավոր դարձավ պատրաս-

---

<sup>83</sup> Տե՛ս Սինասյան Է., նշվ. աշխ., էջ 122:

<sup>84</sup> Տե՛ս Հովհաննիսյան Մ., նշվ. հոդ., էջ 266, նաև՝ Դոնի Ռոստովում կրթվի հայագիտական կենտրոն, [www.armin.am/am/news/73](http://www.armin.am/am/news/73) (ղիտումը՝ 03.08.2019):

<sup>85</sup> Տե՛ս Ներկայացնում է Ռոստովի հայագիտական կենտրոնը, <http://www.armin.am/am/news/147> (ղիտումը՝ 03.08.2019), նաև՝ Hayazg.info ռուսալեզու հայագիտական հանրագիտարանը ներկայացվեց ԵՊՀ-ում, [www.armin.am/am/news/75](http://www.armin.am/am/news/75) (ղիտումը՝ 03.08.2019), ՀՀԻ-ում մեկնարկել է Hayazg.info ռուսալեզու հանրագիտարանի հայալեզու տարբերակի ստեղծումը, [www.armin.am/am/news/88](http://www.armin.am/am/news/88) (ղիտումը՝ 03.08.2019), Գործարկվեց «Հայագգ» հանրագիտարանի անգլերեն տարբերակը, [www.armin.am/am/news/189](http://www.armin.am/am/news/189) (ղիտումը՝ 03.08.2019):

<sup>86</sup> Տե՛ս նույն տեղում:

տել հանրագիտարանի համացանցային հայերեն<sup>87</sup> և անգլերեն<sup>88</sup> տարբերակները:

Համայնքի ուժերով հրատարակված գիտական աշխատությունները և դրանց շնորհանդեսների կազմակերպումը, որին հաճախ հրավիրում են Հայաստանի գիտական, հասարակական շրջանակների ներկայացուցիչների, գիտական համագործակցության լավագույն օրինակ է դառնում: Միայն 2011 թ. Դոնի Ռոստովում կայացել է երեք արժեքավոր գրքերի շնորհանդես: 2011 թ. մարտի 30-ին Դոնի Ռոստովի պետական հանրային գրադարանում կայացել է Անդրանիկ Մալխասյանի «Անիի, Դրիմի և Դոնի հայերի պատմության էջեր» (Страницы истории анийских, крымских и донских армян) գրքի շնորհանդեսը<sup>89</sup>: 2011 թ. դեկտեմբերի 2-ին Հայ-ռուսական բարեկամության քանգարանում տեղի է ունեցել Վալերի Ռ-յազանովի «Առաջին ապաստանից մինչ այսօր. Դոնի Նախիջևանի արվեստի պատմությունից» գրքի շնորհանդեսը<sup>90</sup>: 2011թ. դեկտեմբերի 24-ին նույն տեղում տեղի է ունեցել Մ. Գ. Բազդիկովի «Հայտնի նախիջևանցիների կյանքը. Հարություն Խալիբյան» (Жизнь замечательных нахичеванцев. Арутюн Халабян) գրքի շնորհանդեսը<sup>91</sup>:

2012 թ. նոյեմբերի 23-ին Ռոստովում՝ Հայ-ռուսական բարեկամության քանգարանում, տեղի է ունեցել Սերգեյ Մանկալյանի «Ձրույցներ Գարեգին Նժդեհի մասին կամ հուշարձան Գարեգին Նժդեհի 125-ամյակին» գրքի շնորհանդեսը: Միջոցառումը կազմակերպվել է Դոնի Նախիջևանի հայ համայնքի նախաձեռնությամբ<sup>92</sup>:

2013 թ. մարտի 3-ին Դոնի Ռոստովում լույս է տեսել համայնքի համար արժեքավոր համարվող «Սուրբ Խաչ. Դոնի հայերի Սուրբ խաչը» գիրքը<sup>93</sup>, իսկ նույն տարվա սեպտեմբերի 24-ին Դոնի հանրային գրադարանում Դոնի Նախիջևանի հայ համայնքը «Դոնի գիրք» փառատոնի շրջանակներում կազմակերպել է «Հրաշալի նախիջևանցիների կյանքը» գրքի շնորհանդեսը<sup>94</sup>:

2014 թ. հունիսի 5-ին Դոնի Նախիջևանի հայկական համայնքի հիմնադրման 25-ամյակի առթիվ տեղի հանրային գրադարանում տեղի ունեցավ «Նախիջևանի տարեգրությունը» գրքի շնորհանդեսը: Գրքի

<sup>87</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>88</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>89</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2011, էջ 176:

<sup>90</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 184:

<sup>91</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 184:

<sup>92</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2012, էջ 142:

<sup>93</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2013, էջ 159:

<sup>94</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 164:

հեղինակ Վլադիսլավ Սմիռնովը Դոնում հայկական մշակույթի պահպանման գործում ունեցած մեծ ավանդի համար պարգևատրվել է պատվավոր մեդալով<sup>95</sup>:

2015 թվականն ավելի հազեցած էր Դոնի հայկական համայնքի կյանքում: Կազմակերպվեց 3 արժեքավոր գրքերի շնորհանդես նաև Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչների մասնակցությամբ: 2015 թ. հունիսի 3-ին Դոնի Ռոստովի հայ համայնքի աջակցությամբ լույս է տեսել Գևորգ Բաղդիկովի «Իմ Նախիջևան» գիրքը՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին, կազմակերպվել է գրքի շնորհանդես: Դեկտեմբերի 11-ին Դոնի Նախիջևանի հայ համայնքի ջանքերով կազմակերպվել է Սերգեյ Սայադովի «Ռուսական հայագիտության ակունքներում» և Սերգեյ Սուշչիի «Ռուսաստանի հարավի և Դրիմի հայերը» գրքերի շնորհանդեսը:

2019 թ. հոկտեմբերի 18-19-ին անցկացվող միջազգային գիտաժողովի շրջանակներում կազմակերպվեց Դոնի նախիջևանյան հայկական համայնքի ջանքերով լույս տեսած գրքերի շնորհանդեսը, որին մասնակցեցին ՀՀ ԳԱԱ, ԵՊՀ գիտնականներ: Կազմակերպվեց Ռուբեն Բեգուլյանի «Ռուբեն Բեգուլյան. Նշանավոր նախիջևանցիների կյանքը՝ շարքից», Ալեքսանդր Վիկտորի Եֆիմովի «Նախիջևանի հայերի վերահսկիչ հեքիաթները», Հրաչիկ Ռուբենի Սիմոնյանի «Հայկական հարց և Ռուսական դիվանագիտությունը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին», Սերգեյ Սայադովի «Հայագիտությունը Ռուսաստանում 19-րդ դարի առաջին երեսնամյակում» գրքերի շնորհանդեսը<sup>96</sup>:

ՀՀ երրորդ հանրապետության շրջանում ՀՀ-ի հետ Դոնի Ռոստովի հայ համայնքը իր կապերն ու փոխհարաբերություններն ավելի ամրապնդեց հոգևոր-մշակութային ոլորտում: Առահասարակ լինելով հայ մշակույթին, նրա ավանդույթներին մոտ կանգնած համայնք՝ մարզի հայ բնակիչները միշտ էլ աչքի են ընկնում կերպարվեստի հայտնի գործիչներով, նրանց ստեղծագործություններով, հայտնի երաժիշտներով, նվագախմբերով, պարախմբերով, ինչպես նաև թատերական ու կինոարվեստի գործիչներով: Դա ՀՀ անկախության տարիներին միշտ նկատելի է եղել հատկապես տարբեր տարիներին կազմակերպված «Իմ Հայաստան» և «Երգում ենք Կոմիտաս» փառատոններին Դոնի հայկական համայնքի մասնակցության ժամանակ: Այդ փառատոնների շրջանակներում կազմակերպվեցին միջոցառումներ Հայաստանի

<sup>95</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2014, էջ 137:

<sup>96</sup> Տե՛ս Програма международной научной конференции, Нахичевань-на-Дону: Истирия и современность, Ростов-на-Дону, 18-19 октября 2019 г., с. 4:

Հանրապետությունից Դոնի Ռոստով և Ռոստովից Հայաստան ժամանած պարային, երգչախմբային և այլ համույթների ու անհատ կատարողների համար:

2009 թ. հուլիսի 15-ին Դոնի Ռոստովի հայ համայնքի մշակութային համույթը շահեց Դազամիսում կայացած միջազգային «На выскокой волне» փառատոնի առաջին մրցանակը<sup>97</sup>:

2011 թ. նոյեմբերի 25-27-ը ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ և «Հայաստանի ազգային պարարվեստի և պարագետներին միության» աջակցությամբ Ռուսաստանի Դաշնության Ռոստով քաղաքում կազմակերպվեցին Հարավային Ռուսաստանի հայ համայնքների հայկական պարային կոլեկտիվների պարուսույցների վարպետության դասընթացներ, որին ավելի ակտիվորեն մասնակցեցին Դոնի հայկական համայնքի ներկայացուցիչները<sup>98</sup>: Նույն՝ 2011 թ. օգոստոսի 23-ին Ռոստովի մարզի Ցելինսկի շրջանի հայկական համայնքի հայագգի 17-ամյա բնակիչ Սարգիս Ասլանյանը դարձավ «Հայրենիքի մեխակներ» («Гвоздики Отечества») հայրենասիրական երգերի մարզային փառատոնի դափնեկիր: Սարգիսն արժանացավ նաև ՌԴ նախագահի՝ տաղանդավոր երիտասարդների համար նախատեսված մրցանակին<sup>99</sup>:

2011 թ. մարտի 29-ին Դոնի Ռոստովի 10-ամյա բնակչուհի Վիկա Հովհաննիսյանը դարձավ բեմական արվեստի «Հարավային աստղ» միջազգային մրցույթ-փառատոնի գրանտալրիի դափնեկիր<sup>100</sup>:

2011 թ. հուլիսի 15-ին ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանն ընդունեց «Ոսկե ծիրան» 8-րդ երևանյան միջազգային կինոփառատոնի սփյուռքահայ մասնակիցներին, որոնց թվում՝ Դոնի հայկական համայնքի ներկայացուցիչներն:

2013 թ. մարտի 15-ին Դոնի Ռոստովի Մյասնիկյանի շրջանի պատմազգագրական թանգարանում տեղի հայ համայնքը կազմակերպեց տոնական «Պարելանակ» խորագրով միջոցառում, որին մասնակցեց Սուրբ Համբարձում հայկական եկեղեցու հոգևոր հայր տեր Թադևոս Հայբարյանը<sup>101</sup>:

<sup>97</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2009, էջ 163:

<sup>98</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2011, էջ 36:

<sup>99</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 181:

<sup>100</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 176:

<sup>101</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2013, էջ 159:

2014 թ. հոկտեմբերի 11-ին Դոնի Ռոստովի հայկական համայնքը Դոնեցկում կազմակերպեց ազգային մշակույթների փառատոն՝ «Բազմազգ տոն» խորագրով<sup>102</sup>:

Նույն՝ 2014 թ. ԵՊՀ-ն հյուրընկալեց համայնքում մեծ ճանաչում ունեցող «Անի» համույթին, որի անդամների մեծ մասի նախնիները Դոնի Ռոստովի մարզ գաղթած առաջին հայերի թվում են եղել<sup>103</sup>: Գրիգորի Խաթլամաջյանի ղեկավարած նվագախումբը համերգներով հանդես եկավ Երևանում, Արտաշատում և Իջևանում: Համայնքային կազմակերպություններն էլ իրենց հերթին փորձ կատարեցին համակարգելու մշակութային ուղղության առավել խոշոր ծրագրերը<sup>104</sup>:

2015 թ. հունիսի 21-ին Դոնի Ռոստովի «Արփի» ժողովրդական պարերի համույթը տեղի Սուրբ Խաչ եկեղեցու տարածքում կազմակերպեց համերգ, որին մասնակցեցին «Հայաստանի կայծեր» և «Սուրբ խաչ» պարային համույթները<sup>105</sup>:

2016 թ. հունվարի 7-ին Դոնի Ռոստովի Սուրբ Հարություն հայկական եկեղեցու հոգևոր հայր Տիրան Ավագյանի օրհնությամբ տեղի մարզային ստեղծագործական տանը կազմակերպվել է համերգ՝ նվիրված Սուրբծննդյան տոնին<sup>106</sup>:

Նույն թվականի մայիսի 31-ին Դոնի Ռոստովի «Ռոստվերոտոլ» մշակույթի տանը Ռոստովի մարզի հայկական համայնքը կազմակերպեց «Արցախը ես եմ» խորագրով բարեգործական համերգ<sup>107</sup>, իսկ հունիսի 15-18-ը նույն մարզի հայ համայնքը Ռոստովի մարզի Վոլգոդոնսկ, Կոստանտինովկա, Շախտի և Ազով քաղաքներում կազմակերպեց Լեռնային Ղարաբաղի «Մենք ենք, մեր սարերը» պետական ազգագրական համույթի համերգները<sup>108</sup>:

ՀՀ-ի հետ Դոնի հայկական համայնքի կապերն ու փոխհարաբերությունները ամրապնդվեցին կերպարվեստի ոլորտում: Այն իր դրսևորումը գտավ ցուցահանդեսների կազմակերպման, համաժողովների հրավիրման համատեղ քննարկումներ իրականացնելու և այլ միջոցառումներ անցկացնելու մեջ: 2010 թ. սեպտեմբերին Երևանում տեղի ունեցավ «Արվեստը և բիզնեսը, արվեստը և համացանցը» խորագիրը կրող կերպարվեստի գործիչների երկօրյա համահայկական համաժո-

<sup>102</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2014, էջ 138:

<sup>103</sup> Տե՛ս Հովհաննիսյան Մ., նշվ. հոդ., էջ 267:

<sup>104</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 268:

<sup>105</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2015, էջ 137:

<sup>106</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2016, էջ 144:

<sup>107</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 147:

<sup>108</sup> Տե՛ս նույն տեղում:



ղովը: Ռոստովի մարզը համաժողովում ներկայացնում էր հայտնի արվեստագետ, քանդակագործ Դավիթ Բեգալովը<sup>109</sup>:

2010 թ. հունիսի 11-ին Ռոստովի կերպարվեստի մարզային թանգարանում բացվեց նկարիչ Հովհաննես Լուսեգենովի անհատական ցուցահանդեսը<sup>110</sup>, իսկ սեպտեմբերի 21-ին՝ Ռոստովի շրջանի անհատական ցուցահանդեսը<sup>111</sup>:

2010 թ. փետրվարի 26-ին Տրետյակովյան պատկերասրահում տեղի ունեցավ ծնունդով նորմախիջևանցի Մարտիրոս Սարյանի ծննդյան 130-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսություն ՌԴ մշակույթի նախարարության և ՌԴ-ում ՀՀ դեսպանության աջակցությամբ<sup>112</sup>:

2011 թ. մայիսի 2-ին ՀՀ վարչապետն «Ակադեմիա» պատկերասրահում ներկա գտնվեց պատմական Հայաստանի Անի մայրաքաղաքի հիմնադրման 1050-ամյակին նվիրված ցուցահանդեսին, որը կազմակերպվել էր Արարատյան հայրապետական թեմի և «Աշխարհի հայ նկարիչների միավորման» կողմից: Կառավարության ղեկավարն Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդի հետ շրջեց ցուցասրահով, ծանոթացավ ներկայացված աշխատանքներին: Ցուցահանդեսում ներկայացված են եղել պատմական Անի մայրաքաղաքին վերաբերող 26 գեղանկարչի 72 կտավ և լուսանկարիչ Չավեն Սարգսյանի լուսանկարները, ինչպես նաև Դոնի հայկական համայնքի ներկայացուցիչների գործերը և այլն<sup>113</sup>:

2013 թ. օգոստոսի 21-ին Դոնի նախիջևանյան համայնքում նշվեց է Ռոստովի Մ. Գորկու անվան ակադեմիական թատրոնի հիմնադրման 150-ամյակը: Հիմնադիրներից էր Նախիջևանի նախկին քաղաքագլուխ հայազգի Կարապետ Հայրապետովը<sup>114</sup>:

2014 թ. մայիսի 3-ին Դոնի Ռոստովի հայ համայնքի նախաձեռնությամբ Ռոստովի մարզային գրադարանում բացվեց ՌԴ պատվաւոր ճարտարապետ, նկարիչ Ռուբեն Մուրադյանի աշխատանքների ցուցահանդեսը, իսկ հուլիսի 22-ին Դոնի Ռոստովի հայկական համայնքը տեղի Ռուս-հայկական բարեկամության թանգարանում կազմակերպեց «Լքված, բայց չնոռացված հող: Հիշողություններ Դրիմի մասին» խորագրով ցուցահանդես, իսկ 2015 թ. նոյեմբերի 20-ին Ռոստովի կերպարվեստի թանգարանում բացվեց տեղի հայազգի նկարիչների աշխատանքների ցուցահանդես, իսկ նույն թվի 2016 թ. մարտի

<sup>109</sup> Տե՛ս Հովհաննիսյան Մ., նշվ. հոդ., էջ 267:

<sup>110</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2010, էջ 155:

<sup>111</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 157:

<sup>112</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 152:

<sup>113</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2011, էջ 16:

<sup>114</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2013, էջ 163:

4-ին Դոնի Ռոստովի մարզային երկրագիտական քանգարանում հայազգի նկարիչ Եվգենի Գրիգորյանի «Անկեղծություն» քեմայով գեղանկարչական աշխատանքների ցուցահանդեսը: 2016 թ. նոյեմբերի 22-ին Ռոստովի մարզի Աքսայի մշակույթի տանը անցկացվել է ՀՀ վաստակավոր նկարիչ Գագիկ Նիկոլյանի աշխատանքների ցուցահանդեսը<sup>115</sup>:

Նոյեմբերի 25-ին Դոնի Ռոստովի հայ համայնքի աջակցությամբ տեղի ռուս-հայկական բարեկամության քանգարանի 5-ամյակի առթիվ կազմակերպվեց ցուցահանդես<sup>116</sup>:

Հայոց ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ համայնքային կազմակերպությունը իրականացրեց մշակութային ուղղվածության երկու խոշոր ծրագիր: Հայաստանում ստեղծագործող քանդակագործ Սկրտիչ Մազմանյանի հետ գործակցաբար Դոնի Ռոստով քաղաքի Սուրբ Հարություն եկեղեցու դիմաց 2015 թ. տեղադրվեց «Ո՛չ ցեղասպանությանը» հուշարձանը<sup>117</sup>: Միաժամանակ համայնքային կազմակերպության ջանքերով ոչնչացումից փրկվեց Դոնի Ռոստովում գտնվող, հայազգի նկարիչ Ալիմ Ավանեսովի կողմից 1914-1915 թթ. ստեղծած «Դարից դար» կտավը: Հարյուրամյա կտավը վերականգնվեց համայնքային կազմակերպության միջոցներով Հայաստանի ազգային պատկերասրահի մասնագետների կողմից<sup>118</sup>: Այն տեղադրվեց Դոնի Ռոստովի պատկերասրահում:

2012 թ. հոկտեմբերի 27-ին Դոնի Ռոստովի Աստղերի պողոտայում տեղադրվեց այդ քաղաքի պատվավոր քաղաքացի, հետախույզ Գևորգ Վարդանյանի անվամբ հուշասալիկ<sup>119</sup>: 2015թ. մարտի 14-ին «Ռոսաստանի հայերի միության» (Ռ-ՀՄ) նախաձեռնությամբ և ՀՀ սփյուռքի, ՀՀ մշակույթի նախարարությունների, Ռոսաստանի և Հայաստանի նկարիչների միությունների, Հայաստանի ազգային պատկերասրահի աջակցությամբ Մոսկվայում՝ Արվեստի գործիչների կենտրոնական տանը, բացվեց «Մենք հիշում ենք» խորագրով նկարչական ցուցահանդես, որին մասնակցեցին Դոնի հայկական համայնքի ներկայացուցիչները<sup>120</sup>:

ՀՀ անկախության տարիներին ամրապնդվեցին կապերը նաև քատրոնի և կինոյի ոլորտում: 2011 թ. ապրիլի 10-ին Դոնի Ռոստովի

<sup>115</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2015, էջ 139:

<sup>116</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2016, էջ 145, 150:

<sup>117</sup> Տե՛ս Հովհաննիսյան Մ., նշվ. հոդ., էջ 268:

<sup>118</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>119</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2012, էջ 141:

<sup>120</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2015, էջ 132:

Գորկու անվան դրամատիկական թատրոնում բեմադրվեց Արա Գևորգյանի «Տիգրան Մեծ» պատմական դրաման:

2011 թ. դեկտեմբերի 16-ին Դոնի Ռոստովի մարզի Մյասնիկյանի շրջանի Չալդր գյուղի ազգային թատրոնը նշեց հիմնադրման 100-ամյակը: Այստեղ պարբերաբար կազմակերպվում էին ներկայացումներ<sup>121</sup>, իսկ դեկտեմբերի 27-ին Դոնի Նոր Նախիջևանի հայկական համայնքին կից գործող «Օջախ» կինոակումբի հերթական նիստի շրջանակներում կայացել է Սոչիում բնակվող ռեժիսոր Կարեն Իսրայելյանի «Ինչպիսին Հայաստան» երկրորդ ֆիլմաշարի պրիմերան<sup>122</sup>:

2013 թ. մարտի 28-ին Դոնի Ռոստովի Դոնի Նոր Նախիջևանի հայ համայնքի նախաձեռնությամբ ցուցադրվել են ռեժիսոր Հրանտ Հակոբյանի «Իմ հայրենիքը Հայաստանն է» շարքի երեք կարճամետրաժ ֆիլմերը<sup>123</sup>:

Դոնի հայկական համայնքի և ՀՀ-ի միջև հոգևոր մշակութային կապերը ամրապնդելու ուղղությամբ կարևոր նշանակություն ունեն անվանի գրողների, ազգային և պետական գործիչների հոբելյարների, ցերեկույթների և երեկույթների նշումը, ինչպես նաև Հայ առաքելական եկեղեցու կողմից կազմակերպած արարողությունները՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի արարողություններից սկսած մինչև հոգևոր զարգացման գործում ներդրած ավանդով:

2012 թ. փետրվարի 26-ին տեղի Հայ-ռուսական բարեկամության թանգարանում կազմակերպվեց Ռաֆայել Պատկանյանին նվիրված երեկո<sup>124</sup>:

2013 թ. նոյեմբերի 24-ին Դոնի Ռոստովում կազմակերպվեց հուշերեկո<sup>125</sup>:

2015 թ. փետրվարի 26-ին Ռոստովի հայ համայնքը տեղի Հայ-ռուսական բարեկամության թանգարանում կազմակերպել է հայ ազգային հերոս Անդրանիկ Օզանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված հուշերեկո<sup>126</sup>:

2016 թ. հունվարի 6-ին Հայ առաքելական եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի առաջնորդ Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանը հոգևոր կյանքի զարգացման գործում մեծ ավանդի համար մոսկովյան Վերավորման մայր տաճարում բարերարներ Գարի Գալս-

---

<sup>121</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2011, էջ 185:

<sup>122</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2012, էջ 144:

<sup>123</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2013, էջ 160:

<sup>124</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2012, էջ 135:

<sup>125</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2013, էջ 165:

<sup>126</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2015, էջ 132:

տյանին, Ռոբերտ Մարտիրոսյանին և Գագիկ Ավետիսյանին հանձնեց բարձրագույն պարգևներ<sup>127</sup>:

2010 թ. փետրվարի 15-ին Դոնի Ռոստովի Սուրբ Կարապետ եկեղեցում նշվեց սուրբ Գևորգի և սուրբ Վարդանի օրը Մյասնիկյանի շրջանի Մեծ Սալի և Չալդր գյուղերի հայերի մասնակցությամբ:

Հայաստանի Հանրապետության հետ Դոնի Ռոստովի հայկական համայնքի կապերը ամրապնդվեցին նաև սպորտի ոլորտում, որին մեծապես նպաստեցին 1999 թվականից կազմակերպված համահայկական ամառային խաղերը: Դոնի հայկական համայնքը գրեթե միշտ ակտիվորեն մասնակցել է այս խաղերին և գրավել առաջատար տեղեր: Այդպես եղավ նաև 2019 թ. համահայկական 7-րդ ամառային խաղերի ժամանակ: Ռուսաստանի սպորտային պատվիրակությունը լավագույններից էր, որի կազմում կար 13 քաղաքներից 389 պատվիրակ: 7-րդ համահայկական ամառային խաղերը տեղի ունեցան 2019 թ. օգոստոսի 6-ին Արցախում: Խաղերին «Միավորում սպորտով» խորագրով մասնակցեցին աշխարհի 35 երկրներ, 160 քաղաքներից՝ 5000 մարզիկներ: Ամենամեծ պատվիրակությունը Ռուսաստանից էր՝ 368 մասնակից 14 քաղաքներից<sup>128</sup>: Հաջողությամբ ելույթ ունեցավ Դոնի Տազանրոզի համայնքի ֆուտբոլային թիմը, որը գրավեց առաջին տեղը և արժանացավ ոսկե մեդալի, իսկ նույն համայնքի ֆուտբոլի թիմը գրավեց երրորդ տեղը և արժանացավ բրոնզե մեդալի: Դոնի Ռոստովի Մյասնիկյանի շրջանի կանանց «Ջանֆիդա» վոլեյբոլի թիմը գրավեց առաջին տեղը և արժանացավ ոսկե մեդալի: Թիմը արդեն 3-րդ անգամ, 2011 թ. օգոստոսի 5-րդ խաղերից սկսած, գրավել է առաջին տեղը և արժանացել ոսկե մեդալի<sup>129</sup>:

Դոնի հայկական համայնքի մեր հայրենակիցները Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչների հետ միասին ՀՀ անկախության շրջանում գրեթե ամեն տարի ակտիվորեն մասնակցել են Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձան-կոթողների բացման արարողություններին, պատարագներին, տարբեր կարգի միջոցառումներին: 2009 թ. ապրիլի 24-ին Ռոստովի մարզի Շախտի քաղաքում տեղի է ունեցել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված կոթողի բացման արարողություն<sup>130</sup>:

2010 թ. ապրիլին Դոնի Նոր Նախիջևանի համայնքում անցկացվեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված միջոցա-

<sup>127</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2016, էջ 144:

<sup>128</sup> Տե՛ս Нахичевань-на-Дону, № 9(276), Донские спортсмены чемпионы панармянских игр, сентябрь, 2019, с. 6-7:

<sup>129</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2011, էջ 181:

<sup>130</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2009, էջ 162:

ռումների շարք<sup>131</sup>, իսկ ապրիլ-մայիս ամիսների ընթացքում Ռոստովի մարզի Եգորլիկի շրջանի Շահումյան խուտորի կենտրոնում տեղադրվեց երեք խաչքար, որոնցից մեկը նվիրված է Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին, երկրորդը՝ անցած դարերում Հայաստանի հողերը օտարների ոտնձգություններից հայ զինվորների հետ միասին անձնագոհաբար պաշտպանող կազակ հերոսներին, երրորդը կանգնեցվել է Շահումյանի միջնակարգ դպրոցի անցած տասնամյակների շնորհակալ շրջանավարտների նախածեռնությամբ և նվիրված էր դպրոցի զոհված ուսուցիչներին<sup>132</sup>:

Ապրիլի 18-ին Դոնի Ռոստովում ստեղծվեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված միջոցառումների կազմակերպչական կոմիտե՝ հայ հոգևոր և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ<sup>133</sup>: Ապրիլի 24-ին Դոնի Ռոստովի հայ համայնքը կազմակերպեց ավտոերթ Սուրբ խաչ եկեղեցուց դեպի Մյասնիկյանի շրջանի Չալոբ գյուղի Սուրբ Համբարձում եկեղեցի: Տեղական իշխանությունների ներկայացուցիչների, պատգամավորների, մշակույթի, գիտության և հասարակական գործիչների մասնակցությամբ տեղի ունեցան նաև Հայոց ցեղասպանության զոհերի ոգեկոչման երեկոներ<sup>134</sup>: Իսկ 2013 թ. մայիսի 11-ին Ռ-Դ Ռոստովի մարզի Մորզովսկ քաղաքում տեղի հայ համայնքի ջանքերով բացվեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձան-խաչքար<sup>135</sup>, իսկ 2014թ. ապրիլի 24-ին Դոնի Ռոստովի Սուրբ Կարապետ եկեղեցու մեջ մատուցվեց պատարագ՝ ի հիշատակ Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի<sup>136</sup>:

2015թ. ապրիլի 19-ին Ռոստովի մարզի Նովոչեկարսկ քաղաքի հայկական կիրակնօրյա դպրոցում կազմակերպվեց միջոցառում՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին<sup>137</sup>, իսկ ապրիլի 23-ին Ռոստովի մարզի Չալոբի հայ համայնքի աջակցությամբ տեղի Ս. Համբարձում հայկական եկեղեցու համար պատրաստվեց յոթ զանգ, եկեղեցուն մատուցվեց պատարագ՝ ի հիշատակ Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի<sup>138</sup>:

2015 թ. ապրիլի 24-ին Ռոստովի մարզի Տազանրոգ քաղաքի «Նաիրի» հայկական համայնքը կազմակերպեց Հայոց ցեղասպանու-

<sup>131</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2010, էջ 153:

<sup>132</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 155:

<sup>133</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2011, էջ 177:

<sup>134</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 178:

<sup>135</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2013, էջ 162:

<sup>136</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2014, էջ 136:

<sup>137</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2015, էջ 133:

<sup>138</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 134:

քյան 100-րդ տարեկիցին նվիրված միջոցառում<sup>139</sup>: Նույն օրը Դոնի Ռոստովի «Դոնի Նախիջևանի հայկական համայնք» կազմակերպության նախաձեռնությամբ Ռոստովի Ս. Հարություն եկեղեցու բակում տեղադրվեց հուշակոթող՝ ի հիշատակ Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի<sup>140</sup>:

Ապրիլի 24-ին Ռոստովի մարզի Շախտի քաղաքի «Անդրանիկ» հայկական մշակութային կենտրոնի նախաձեռնությամբ տեղադրվեց Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին նվիրված խաչքար<sup>141</sup>:

2015 թ. դեկտեմբերի 6-ին Ռոստովի մարզի Սեմիկարակոբսկ քաղաքում տեղի հայ համայնքի նախաձեռնությամբ տեղադրվեց Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակը հավերժացնող խաչքար: Բացմանը մասնակցեցին Դոնի Նախիջևանի հայկական համայնքի նախագահ, օրենսդիր ժողովի պատգամավոր Հարություն Սուրմալյանը, քաղաքային իշխանության ներկայացուցիչներ և ուրիշներ<sup>142</sup>:

2016 թ. ապրիլի 24-ին Ռոստովի մարզի Եզորիկի շրջանում հայ համայնքը կազմակերպեց միջոցառում՝ նվիրված Հայոց ցեղասպանության 101-րդ տարեկիցին, որի ընթացքում տեղի ունեցավ ավտոերթ<sup>143</sup>:

2016 թ. հուլիսի 26-ին Ռոստովի մարզի Բելոկալիտվայի «Նաիրի» հայկական համայնքի նախաձեռնությամբ տեղադրվել է Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին նվիրված խաչքար: Միջոցառմանը մասնակցել են Դոնի Նախիջևանի հայկական համայնքի նախագահ Հարություն Սուրմալյանը, տեղի վարչակազմի և հայ համայնքի ներկայացուցիչներ<sup>144</sup>, իսկ նույն տարվա ապրիլի 24-ին Ռոստովի Սուրբ Հարություն հայկական եկեղեցում, ի հիշատակ Հայոց ցեղասպանության զոհերի, մատուցվել է պատարագ, ծաղկեպսակներ են դրվել խաչքարի մոտ: Միջոցառմանը մասնակցել են պատգամավորներ, հոգևորականներ և հայ համայնքի ներկայացուցիչներ<sup>145</sup>:

Հայաստանի Հանրապետության և Դոնի Ռոստովի հայկական համայնքի միջև եղած հոգևոր մշակութային կապը ամրապնդելու ուղղությամբ ակտիվ գործունեություն ծավալեցին Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց առաջնորդ Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանը և

---

<sup>139</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2015, էջ 133:

<sup>140</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 134:

<sup>141</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 135:

<sup>142</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 139:

<sup>143</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2016, էջ 146:

<sup>144</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 148:

<sup>145</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 146:

«Համաշխարհային հայկական կոնգրեսի» ու «Ռուսաստանի հայերի միության» նախագահ Ա. Աբրահամյանը:

2011թ. ապրիլի 14-ին Սփյուռքի նախարարն ընդունեց «Համաշխարհային հայկական կոնգրեսի» և «Ռուսաստանի հայերի միության» նախագահ Արա Աբրահամյանին ու նրա գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում քննարկվեցին 2011թ. նախարարության կողմից իրականացվելիք մի շարք ծրագրերի և միջոցառումների կենտրոնացման հնարավորությունները, ինչպես նաև ծրագրվել են նոր ձեռնարկումներ<sup>146</sup>, որոնց մի մասը իրականացվեց Դոնի Ռուստովի հայկական համայնքի ուժերով:

Նույն տարում հոկտեմբերի 20-ին ՀՀ վարչապետը Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում մասնակցեց «Ռուսաստանի հայերի միության» հիմնադրման 10-ամյակին նվիրված միջոցառմանը: Տ. Սարգսյանը կարևորեց Ռ-ՀՄ ազդեցությունը համայն հայության ներուժի ամրապնդման ու հայրենիք-Սփյուռք կապերի զարգացման գործում, ընդգծեց պետական կառույցների ու միության համագործակցության կարևորությունը՝ նշելով, որ դա նպաստում է իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև Ռուսաստանում, այդ թվում՝ Դոնի Ռուստովի հայկական համայնքում բնակվող մեր հայրենակիցների խնդիրների լուծմանը<sup>147</sup>:

2016 թ. հունիսի 22-ին Ռուսաստանի հայկական երիտասարդական կոնգրեսը Դոնի հայկական համայնքի հետ միասին կազմակերպեց Մեծ հայրենականի հայ վետերաններին նվիրված «Մրտի հիշողություն» ֆիլմի շնորհանդես: Միջոցառման ողջ հասույթը տրամադրվեց Ստեփանակերտի բժշկական կենտրոնին: Ֆիլմն ստեղծվել է «Հայ-ռուսական երիտասարդական միություն» ՀԿ-ի և ՀՀ ու ՌԴ դեսպանության և Երևանում գիտության և մշակույթի ռուսական կենտրոնի աջակցությամբ, որին մասնակցել էին Դոնի Ռուստովի հայ համայնքի ներկայացուցիչները<sup>148</sup>:

2012 թ. հունիսի 13-ին Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Տեր Եգրաս արքեպիսկոպոս Ներսիսյանի աջակցությամբ ավելի քան 100 հավատացյալներ մասնակցեցին դեպի Սուրբ երկիր ուխտագնացությանը<sup>149</sup>:

<sup>146</sup> Տե՛ս Հայկական սփյուռք տարեգիրք, Երևան, 2011, էջ 28:

<sup>147</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 15:

<sup>148</sup> Տե՛ս Հայկական սփյուռք տարեգիրք, Երևան, 2016, էջ 146:

<sup>149</sup> Տե՛ս Հայկական սփյուռք տարեգիրք, Երևան, 2012, էջ 112:

2014 թ. հունիսի 12-ին Մոսկվայի «Հայորդաց տուն» հոգևոր մշակութային կենտրոնը Հայ առաքելական եկեղեցու Ռուսիո և Նոր Նախիջևանի թեմի հովանու ներքո Ռոստովի պետական երաժշտական քառորդում կազմակերպեց հայկական մշակույթի փառատոն թեմի առաջնորդ Տեր Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանի օրհնությամբ<sup>150</sup>:

2016 թ. հունվարի 31-ին Ռոսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ արքեպիսկոպոս Եզրաս Ներսիսյանի օրհնությամբ Մոսկվայի Վերավոխման մայր տաճարի հանդիսությունների սրահում տեղի ունեցավ հոգեբարոյական «Ֆրեսկա» ֆիլմերի և ժամանակակից արվեստի ամենամյա միջազգային փառատոնը, որին մասնակցեցին մշակույթի և գիտության հայտնի հայ ու ռուս գործիչներ, Դոնի հայ համայնքի ներկայացուցիչներ, հասարակական գործիչներ<sup>151</sup>:

2016 թ. ապրիլի 24-ին «Ռոսաստանի հայերի միությունը», Հայ-ռուսական համագործակցությունը, «Ռոսաստանի հայերի միության» երիտասարդական ասոցիացիան «Մոսկվայի հայ երիտասարդների ասոցիացիայի» հետ համատեղ Դոնի Ռոստովում կազմակերպեցին հանրահավաք՝ նվիրված Հայոց ցեղասպանության 101-րդ տարելիցին: Միջոցառմանը ներկա են եղել հայկական, մասնավորապես Դոնի Ռոստովի, հունական, ռուսական համայնքների ներկայացուցիչներ, քաղաքական գործիչներ, ակտիվիստներ, ուսանողներ<sup>152</sup>, իսկ հոկտեմբերի 31-ին ՌԴ-ում ՀՀ դեսպանությունը Մոսկվայի Սուրբ պալատակերպություն եկեղեցական համալիրում կազմակերպեց համաժողով՝ «Հայերը Ռոսաստանի պատմության և մշակույթի մեջ 18-20-րդ դարերում» խորագրով: Միջոցառմանը մասնակցեցին Ռոսաստանի և Նոր Նախիջևանի հայ առաքելական եկեղեցու առաջնորդ Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանը, ՌԴ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Օլեգ Եսայանը, Հայաստանից և Դոնի Ռոստովից եկած ներկայացուցիչները<sup>153</sup>:

Դոնի Ռոստովի հայ համայնքի և մայր հայրենիքի հետ ունեցած կապերի ամրապնդմանը մեծապես նպաստեց նաև Ռոստովում գտնվող ՀՀ գլխավոր հյուպատոսարանի ակտիվ ու աղյուսավետ աշխատանքը: Նրա անմիջական ջանքերով ևս Ռոստովի մարզի հայ համայնքը հատկապես ՀՀ անկախության վերջին տարիներին ամրապնդեց իր կապերն ու փոխհարաբերությունները ՀՀ-ի հետ հասարակական-քաղաքական և հոգևոր-մշակութային ոլորտներում: Այս բնագավառում կազմակերպվեցին և իրականացվեցին տարաբնույթ միջոցա-

<sup>150</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2014, էջ 138:

<sup>151</sup> Տե՛ս Հայկական սփյուռք, տարեգիրք, Երևան, 2016, էջ 144:

<sup>152</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 146:

<sup>153</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 149:



ռումներ, որին երկու կողմն էլ ակտիվորեն մասնակցեցին: ՀՀ անկախության տարիներին Դոնի հայկական համայնքի հետ ունեցած հարաբերությունների արդյունավետ զարգացման գնահատականը տրվեց 2018 թ.<sup>154</sup> համայնքային կազմակերպության հիմնադրման 30-ամյակին նվիրված մեծ միջոցառման ժամանակ, որտեղ Հայաստանի Հանրապետության պետական տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչներ իրենց բարձր պարգևները ստացան համայնքի ղեկավարության ձեռքերից<sup>154</sup>: Պետք է փաստել այն հանգամանքը, որ Դոնի Ռոստովի նախիջևանյան հայ համայնքը սփյուռքյան համայնքային կազմակերպությունների մեջ առաջիններից էր, որ սկսեց համագործակցել, կապեր ու հարաբերություններ հաստատել ու ամրապնդել ոչ միայն ՀՀ պետական կառույցների, այլև հանրապետության առաջատար բուհերից Երևանի պետական համալսարանի հետ: Այսօր էլ այդ կապերն ու փոխհարաբերությունները շարունակում են ամրապնդել ու զարգանալ՝ հաշվի առնելով համայնքի և Սփյուռքի առջև ծառայած մարտահրավերները:

Այսպիսով՝ տարաբնույթ սկզբնաղբյուրների՝ ՀՀ արտգործնախարարության ընթացիկ արխիվի և Սփյուռքի նախարարության հրապարակած փաստաթղթային նյութերի տարեգրքերի և տպագիր այլ սկզբնաղբյուրների, ՀՀ պաշտոնական տեղեկագրերի, մամուլի, Դոնի Ռոստովի Նախիջևանյան հայկական համայնքի հաշվետվությունների, հրապարակի վրա եղած գրականության վերլուծությունը բացահայտում է 1991-2019 թթ. Հայաստանի անկախ հանրապետության կապերն ու փոխհարաբերությունները Դոնի Ռոստովի հայկական համայնքի հետ հասարակական-քաղաքական, գիտակրթական և հոգևոր մշակութային ու սպորտային ոլորտներում: Ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետության անկախության վերականգնումը, ՀՀ սփյուռքի նախարարության ստեղծումը որակական նոր փոփոխություններ առաջացրին հայրենիք-Սփյուռք առնչություններում, մասնավորապես Հայաստանի Հանրապետության և Դոնի Ռոստովի հայկական համայնքի կապերի ու փոխհարաբերությունների ոլորտում՝ ավելի ամրապնդելով ու զարգացնելով դրանք: Ուշագրավ են նաև հասարակական-քաղաքական ոլորտում ՀՀ-ի և Դոնի նախիջևանյան հայկական համայնքի կապերի ամրապնդման ուղղությամբ ձեռնարկված քայլերը, հատկապես հանրապետության և համայնքի ղեկավարության փոխադարձ այցելությունների շնորհիվ մշակված համագործակցության ծրագրերի կենսագործումը և դրա ազդեցությունը նրանց փոխհարաբերությունների զարգացման վրա: ՀՀ-ի և համայնքի միջև հաստատվեցին կապեր ու

<sup>154</sup> Տե՛ս Հովհաննիսյան Մ., նշվ. աշխ., էջ 268:

փոխհարաբերություններ նաև գիտակրթական ոլորտում, համատեղ կազմակերպվեցին միջազգային կոնֆերանսների, գրքերի շնորհանդեսներ, միջբուհական կոնֆերանսներ և այլ միջոցառումներ, ինչպես նաև ԵՊՀ-ի հետ ստորագրվեց համայնքի համագործակցության պայմանագիր: Դոնի հայկական համայնքի ներկայացուցիչներն ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին ավանդական դարձած Հայաստան-Սփյուռք համաժողովներին, բիզնես ֆորումներին, համահայկական սպորտային խաղերին, ինչպես նաև ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնած «Արի տուն», «Իմ հայաստան» և բազմաթիվ այլ ճանաչողական ու մշակութային ծրագրերի: ՀՀ-ի հետ համայնքի համագործակցության ամրապնդման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները շարունակական են:

### РЕЗЮМЕ

*Ключевые слова:* Ростов на Дону, Нахичеванская-армянская община, годы независимости РА, министерство Диаспоры Армении, делегация, главное консульство, этап, культура, изобразительное искусство

На основе разных источников, таких как текущий архив министерства иностранных дел Армении, опубликованные документы и annals министерства Диаспоры, официальные ведомости РА, пресса и отчеты Нахичеванской Армянской общины в Ростове на Дону и т.д. представлены и анализированы связи и взаимоотношения Республики Армения с армянской общиной Ростова на Дону в общественно-политической, научно-образовательной, культурной и спортивной сферах. В статье обосновывается то, что восстановление независимости в Армении и создание министерства Диаспоры принесли качественно новые изменения в этих отношениях и способствовали их развитию. Представлены действия со стороны РА и руководителей армянской общины для реализации совместно разработанных программ, в частности организация конференций, презентаций книг и книжных ярмарок, сотрудничество с Ереванским государственным университетом. Показано также активное участие представителей общины в конгрессах Армения-Диаспора, в бизнес форумах, в Панармянских спортивных играх и в культурных программах министерства диаспоры «Ари тун» (Иди домой) и «Им Айастан» (Моя Армения).

### SUMMARY

*Key words:* Rostov on Don, Nakhijevanian-Armenian community, years of independence of RA, Ministry of Diaspora of Armenia, delegation, consulate-general, period, culture, fine arts

On basis of different sources such as the current archive of Foreign Ministry of RA, the published documents and annals of Ministry of Diaspora, official references of RA, press and reports of Rostov-on-Don Nakhijevanian-Armenian community etc. are revealed and analyzed the mutual relations of RA and Rostov-on-Don Armenian community in social-political, scientific-educational, cultural and sports spheres. It is grounded that the restoration of independence in Armenia and the

establishment of Ministry of Diaspora resulted in new quality changes in these relations and contributed to their development. Activities undertaken by the government of RA and the leaders of community, their mutual visits, the implementation of the programs worked out together, particularly the organization of conferences, book-fairs, book presentations, the cooperation of Yerevan State University and the community are presented. The article also touches upon the active participation of the representatives of the Nakhijevanian-Armenian community in Armenia-Diaspora congresses, in business forums, in the Pan-Armenian sport games as well as in cultural programs like “Ari tun”(Come home) and “Im Hayastan”(My Armenia) by Ministry of Diaspora.

## ԴՌՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ. ԱՐԱՐՄԱՆ 240 ՏԱԲԻՆԵՐԸ

*Ալեքսանյան Հ. Ս.,  
պ. գ. ք., դոցենտ, ԵՊՀ*

Դոնի հայ համայնքը Ռուսաստանի ամենահին և կազմակերպված համայնքներից է, որը կարևոր դերակատարություն է ունեցել հայ-ռուսական հարաբերություններում: Դոնի հայ գաղթօջախի հիմնադրման և զարգացման գործում առանցքային էր Եկատերինա Երկրորդ կայսրուհու քաղաքականությունը, որի էությունը Ռուսական կայսրության հարավի նորանված տարածքները քրիստոնյա ազգերով՝ հայերով ու հույներով բնակեցնելն էր. վերջիններս արհեստավարժ էին առևտրի, արհեստների, հողագործության, ստեղծարար աշխատանքում և կարող էին արագ շենացնել թույլ յուրացված, գրեթե ամայի տարածքները:

Դոնում հայերը հիմնեցին Նոր Նախիջևան քաղաքը՝ հարակից հինգ գյուղերով, հատուկ հրովարտակով (1779 թ. նոյեմբերի 14-ին) ազատվեցին ամեն տեսակ հարկերից, հիմնեցին մագիստրատ, ստացան դավանանքի ազատություն, ազգային սովորույթների, ավանդույթների պահպանմամբ և ազգային լեզվով դատավարության իրավունք, որն իրականացվում էր «Աստրախանի» կամ «Հայոց դատաստանագրքի» հիման վրա: XIX դարի սկզբին՝ հիմնադրումից կարճ ժամանակ անց, Նոր Նախիջևանը վերածվեց Հարավային Ռուսաստանի խոշոր տնտեսական կենտրոնի<sup>1</sup>, որն ուներ իր զինանշանը, ձևավորել էր իր կառավարման մարմինները:

Դոնի հայերը տնտեսության ոլորտում հասան լուրջ հաջողությունների. մշակում և արտահանում էին հացահատիկային կուլտուրաներ, զբաղվում էին նաև այգեգործությամբ, բանջարաբուծությամբ, շերամապահությամբ, անասնապահությամբ, արհեստներով և արդյունաբերությամբ (նշանավոր էին տեղի ճարպահալ, բրդավաց, ծխախոտի, աղյուսի և այլ ձեռնարկությունները):

XIX դարի երկրորդ կեսին Նոր Նախիջևանն ու ռուսահայ մի շարք համայնքներ զրկվեցին ունեցած առանձնաշնորհներից, նրանց զարգացումը դանդաղեց, նկատելի դարձավ արտահոսքը: Այս իրավիճակն առավել սրվեց Նոր Նախիջևանին հարևան Դոնի Ռոստով քաղաքի բարձրացման հետևանքով. Դոնի Ռոստովն իր ավելի բարենպաստ

---

<sup>1</sup> Стів Терещенко А. Г., Армянское население в Донском и Северо-Кавказском регионах в 20-х годах XX века, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, հ. 2-3, 1992, էջ 122, [http://hpg.asj-oa.am/5604/1/1992-2-3\(111\).pdf](http://hpg.asj-oa.am/5604/1/1992-2-3(111).pdf):

աշխարհագրական դիրքի շնորհիվ դարձավ տրանսպորտային կարևոր հանգույց, մասնավորապես նավահանգստի առկայությունն սկսեց դեպի իրեն ձգել Ռուսաստանի հարավի ֆինանսական խոշոր կապիտալը, այդ թվում՝ հայկական: XX դարասկզբին Նոր Նախիջևան քաղաքի, ինչպես և ամբողջ հյուսիսկովկասյան տարածաշրջանի էթնիկ կառուցվածքը նկատելիորեն փոխվել էր, ինչն արդյունք էր ռուսական ակտիվ վերաբնակեցման քաղաքականության:

Դոնի հայ համայնքը կարևոր դեր ունի հայ կրթության ու մշակույթի ավանդները պահպանելու և զարգացնելու ասպարեզում: Այստեղ գործել են բազմաթիվ ծխական դպրոցներ, արական ու իգական գիմնազիաներ, ժառանգավորաց, արհեստավորական դպրոցներ, թեմական ուսումնարան, մանկավարժական ուսումնարան, հրատարակվել են բազում թերթեր, լայն տարածում է գտել թատերական արվեստը: Դոնի և ողջ հայության հոգևոր-մշակութային կյանքում առանցքային է եղել մեր անվանի հայրենակիցների Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Հ. Ալամդարյանի, Գևորգ VI Չորեքչյանի, Մ. Սարյանի, Մ. Շահինյանի, Գ. Շիլտյանի, Հ. Արծաթպանյանի, Հ. Քեչեկի և բազում այլ գործիչների վաստակած անունն ու խաղացած դերը: Հանրահայտ են հասարակական-քաղաքական ու զինվորական գործիչներ Մ. Վրացյանի, Ա. Մյասնիկյանի, Ս. Լուկաշինի, Ս. Գալաջևի, Վ. Թամրուչիի, Լ. Չափչախյանի, մեր օրերի անվանի գիտնական, ակադեմիկոս Յուրի Հովհաննիսյանի և շատ այլ անուններ:

Խորհրդային տարիներին Դոնի հայ համայնքի ջանքերով որոշ ժամանակ դեռ հաջողվել է պահպանել հայ դպրոցը, մամուլը, եկեղեցին, հոգևոր ու ազգային ավանդույթները: Դոնի հայկական կրթական և մշակութային հաստատությունների թվաքանակը 1930-ական թթ. վերջից սկսել է կրճատվել. երկրամասում գործում էին հայկական 15 դպրոցներ (8-ը՝ Մյասնիկյանի ազգային շրջանի գյուղերում), փակվեց հայկական թատրոնը: 1950-ական թթ. սկզբին Մյասնիկյանի ազգային շրջանի հայկական դպրոցներում հայերենին զուգահեռ բացվեցին նաև ռուսերեն կրթությամբ դասարաններ, իսկ 1956/1957 ուստարում բոլոր հայկական դպրոցներն անցան ռուսերեն կրթական ծրագրի: Սա հարուցեց տեղի հայության դժգոհությունը, և միայն 1965 թ. շրջանի դպրոցական կրթական ծրագրերում վերականգնվեց «հայոց լեզու» առարկայի դասավանդումը<sup>2</sup>:

Դոնի հայ համայնքը խորհրդային տարիներին արձանագրել է թվաքանակի աստիճանական աճ, որը, ըստ մարդահամարների, ուներ

<sup>2</sup> Стѣп Тер-Саркисянц А., Армяне на Дону: Их прошлое и настоящее, Вторые Лазаревские чтения по истории армян России (25-27 ноября 2003 г.), Москва, 2006, էջ 268:

հետևյալ պատկերը: 1923 թ. Համամիութենական քաղաքային մարդահամարի տվյալներով Դոնի օկրուգի քաղաքներում բնակվում էր 17.208<sup>3</sup>, իսկ 1926 թ. Համամիութենական մարդահամարով միայն Ռոստով-Նախիջևանում՝ 17.592 հայ: Հատկանշական է, որ Դոնի օկրուգի գյուղական բնակավայրերում հայ բնակչությունը շարունակում էր համախումբ բնակվել: Դրիմ գյուղում բնակվում էր 7.144, Չալդրում՝ 9.029, Մեծ Սալայում՝ 3.882, Սուլբան Սալայում՝ 1.758, Նեավիտայում՝ 1.320 հայ:

Համամիութենական մարդահամարներով Ռոստովի մարզում 1939 թ. բնակվում էր 49.339, 1959 թ.՝ 49.305, 1970 թ.՝ 53.620, 1979 թ.՝ 56.902, 1989 թ.՝ 62.603 հայ<sup>4</sup>:

Հետխորհրդային տարիներին ՌԴ Ռոստովի մարզի հայության թվաքանակը բազմիցս աճել է ՀՀ-ից և նախկին միութենական հանրապետություններից այդ մարզ ներգաղթածների հաշվին:

2002 թ. ՌԴ-ում անցկացված մարդահամարի տվյալներով Ռոստովի մարզում բնակվում էր 109.994 հայ<sup>5</sup>, որը կազմում էր ՌԴ- ամբողջ հայ բնակչության 9.7 %-ը, իսկ 2010 թ.՝ 110.727 հայ<sup>6</sup>:

Հատկանշական է, որ 2010 թ. մարդահամարով ՌԴ-ում տոկոսային հարաբերությամբ ամենահայախոժ վարչական միավորը Դոնի մարզի Մյասնիկյանի շրջանն էր, որտեղ հայերը կազմում էին ամբողջ բնակչության ավելի քան 56 %-ը:

Միանշանակ է, որ ՌԴ Ռոստովի մարզի հայ բնակչության թվաքանակն առնվազն 2-3 անգամ գերազանցում է պաշտոնական թվային տվյալները:

Դոնի հայության ազգային կյանքի զարթոնքի շրջան դարձան ԽՍՀՄ գոյության վերջին տարիները: 1988 թ. նոյեմբերին Դոնի Ռոստովում հիմնվեց «Նոր Նախիջևան» մշակութային-լուսավորական միությունը, որի նախագահ ընտրվեց անվանի պրոֆեսոր Գրիգոր Խորոդայանը: 1992 թ. կառույցը վերանվանվեց և կոչվեց «Նոր Նախիջևան» հայկական մշակութային-լուսավորական ասոցացիա: 1997 թ.

---

<sup>3</sup> Стѹ Итоги Всесоюзной городской переписи 1923 года, Москва, 1927, с. 28:

<sup>4</sup> Стѹ Всесоюзная перепись населения 1939 года. Основные итоги, Москва, 1992, с. 59, նաև՝ Итоги Всесоюзной переписи населения 1959 года. РСФСР, Москва, 1963, с. 301-340, Итоги Всесоюзной переписи населения 1970 года, том IV, Национальный состав населения СССР, союзных республик, краев, областей и национальных округов, Москва, 1973, с. 324, Национальный состав населения РСФСР по данным Всесоюзной переписи населения 1989 года, Москва, 1990, с. 103-149:

<sup>5</sup> Стѹ Итоги Всероссийской переписи населения 2002 года, том 4, книга 1, Москва, 2004, с. 57-87:

<sup>6</sup> Стѹ Итоги Всероссийской переписи населения 2010 года, том 4, книга 1, Москва, 2012, с. 29-76:

ապրիլին ասոցիացիայի անդամների ընդհանուր ժողովում կազմակերպությունը վերանվանվել է «Նոր Նախիջևանի հայկական համայնք», որի նախագահ է ընտրվել Էդուարդ Վարդանյանը: 2002-2005 թթ. Դոնի համայնքնային կազմակերպությունը կրկին նախագահել է Գ. Խուրդայանը, ապա՝ գործարար Հարություն Սուրմայանը: Համայնքային կազմակերպությունն իր ուշադրության կենտրոնում է պահել հայությանն առնչվող հարցերի լայն շրջանակը, ձևավորել է ամուր կապեր մայր հայրենիքի հետ: Դոնի հայկական համայնքը ՀՀ ազգային ու պետական միջոցառումներին մասնակցության ու դրանք տեղում անցկացնելու մեծ փորձ ունի, բացի այդ՝ իրականացվել են բազմաթիվ փոխայցելություններ: Դոնի հայ համայնքն իր կազմակերպվածությամբ և ներուժով առանձնանում է Ռուսաստանի հայ համայնքների շարքում, ուստի պատահական չէ, որ 2012 թ. նոյեմբերի 16-18-ը հյուրընկալեց ՌԴ և ԱՊՀ երկրներում գործող հայկական երիտասարդական կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների առաջին երիտասարդական համաժողովը:

Հայոց ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ համայնքային կազմակերպությունը մշակութային ուղղվածության երկու խոշոր ծրագիր է իրականացրել: Հայաստանում ստեղծագործող քանդակագործ Սյրտիչ Մազմանյանի հետ գործակցաբար Դոնի Ռոստով քաղաքի Սուրբ Հարություն եկեղեցու դիմաց 2015 թ. տեղադրվել է «Ո՛չ ցեղասպանությանը» հուշարձանը, ոչնչացումից փրկվել է Դոնի Ռոստովում գտնվող հայագրի նկարիչ Ակիմ Ավանեսովի կողմից 1914-1915 թթ. ստեղծած «Դարից դար» կտավը<sup>7</sup>:

Դոնի համայնքային կազմակերպության մասնակցությամբ հայ պատանիներն ու երիտասարդներն ակտիվորեն մասնակցում են ՀՀ Սփյուռքի նախարարության կողմից կազմակերպված տարբեր ծրագրերի՝ երիտասարդ առաջնորդների դպրոցին, «Արի տուն» (ներկայումս՝ «Քայլ դեպի տուն») ծրագրին, համահայկական մարզական խաղերին, Հայաստան-Սփյուռք համաժողովներին և այլն:

ՀՀ-ի և Դոնի Ռոստովի հայկական համայնքի միջև ձևավորվել են ամուր կապեր նաև գիտակրթական ոլորտում, որի վկայությունն է ՀՀ սփյուռքի նախարարության «Սփյուռք» ամսառախյին դպրոցին և ՀՀ ԿԳՆ սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծրագրին համայնքի ներկայացուցիչների ակտիվ մասնակցության փաստը, ԵՊՀ-ի և Դոնի Նախիջևանի հայկական համայնքի միջև երկարատև համա-

---

<sup>7</sup> Տե՛ս Մինասյան Է., Բատին Լ., Հայաստանի Հանրապետության և Դոնի հայկական համայնքի հասարակական-քաղաքական և հոգևոր-մշակութային կապերը 1991-2019 թթ., «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Երևան, հ. 2, 2019, էջ 187:

գործակցության հիմք հանդիսացած պայմանագրի կնքումը 2011 թ., որն իր ձևաչափով առաջինն էր<sup>8</sup>:

Դոնի Ռոստով ՀՀ պատվիրակությունների բոլոր այցելություններն ընդհանրապես տեղի են ունենում հանդիպումներ համայնքի հետ:

Դոնի Ռոստովի հայ համայնքի մայր հայրենիքի հետ ունեցած կապերի ամրապնդմանը մեծապես նպաստել է ՀՀ գլխավոր հյուպատոսարանի ակտիվ և արդյունավետ աշխատանքը<sup>9</sup>: Նրա անմիջական ջանքերով Ռոստովի մարզի հայ համայնքը հատկապես վերջին տարիներին ամրապնդեց իր կապերն ու փոխհարաբերությունները ՀՀ-ի հետ հասարակական-քաղաքական և հոգևոր-մշակութային ոլորտներում:

2018 թ. հոկտեմբերի 27-29-ը աշխատանքային այցով Դոնի Ռոստովում գտնվող ՀՀ արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Վահագն Մելիքյանը (նախկինում՝ ՀՀ սփյուռքի փոխնախարար) Դոնի Նախիջևանի հայ համայնքի նախագահ Հարություն Սուրմալյանի հետ ստորագրել է արձանագրություն, որի համաձայն՝ Հարություն Սուրմալյանը Հայաստանի Հանրապետությանը անհատույց նվիրաբերել է այն տարածքը, որտեղ այժմ գործում է ՀՀ գլխավոր հյուպատոսությունը<sup>10</sup>: Հարություն Սուրմալյանը խոստացել է մի քանի տարվա ընթացքում կառուցել նոր շենք և այն նույնպես անհատույց փոխանցել Հայաստանի Հանրապետությանը: Վահագն Մելիքյանը ՀՀ արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Ջոհրաբ Մնացականյանի հրամանով Հարություն Սուրմալյանին պարգևատրել է ՀՀ ԱԳՆ առաջին կարգի հուշամեդալով: Արձանագրության ստորագրման արարողությանը ներկա էին ՀՀ ԱԳՆ պետական արարողակարգի ծառայության պետ Լևոն Սինասյանը, Դոնի Ռոստովում ՀՀ գլխավոր հյուպատոս Վարդան Ասոյանը, «Դոնի հայ երիտասարդական միության» և Դոնի Նախիջևանի հայ համայնքի ներկայացուցիչները և այլք:

2018-2019 թվականները հորելյանական տարիներին էին համայնքի կյանքում պատմական գաղութի հիմնադրման ու համայնքային կազմակերպության նորոգյա պատմության առումներով: Հորելյանները նշվել են մեծ շուրջով, Հայաստանից մասնակցել են ներկայացուցչական

---

<sup>8</sup> Տե՛ս Հովհաննիսյան Մ., Դոնի նախիջևանյան հայկական համայնքի հումանիտար հարաբերությունները Հայաստանի Հանրապետության հետ նորագույն շրջանում, «Нахичевань-на-Дону: история и современность (к 240-летию переселения армян на Дон)», материалы международной научной конференции, Ростов-на-Дону, 18-19 октября, 2019, с. 264-265:

<sup>9</sup> Տե՛ս Սինասյան Է., Բատիև Լ., նշվ. հոդ., էջ 189:

<sup>10</sup> «Нахичевань-на-Дону», № 11 (266), ноябрь, 2018, с.4, <https://nnao.ru/wp-content/uploads/2018/12/4-min-1.pdf>:



պատվիրակություններ, անցկացվել են գիտական ու մշակութային միջոցառումներ:

Հայ համայնքի լիարժեք ինտեգրվածության ու ազդեցության մասին է խոսում համայնքի ներկայացուցիչների քանակական ներգրավվածությունը Դոնի մարզի և Դոնի Ռոստով քաղաքի օրենսդիր մարմիններում. այն տարեցտարի աճ է արձանգրել, ինչը վկայում է նրանց ընդունելի, ընկալելի ու ճանաչված լինելու մասին: Այսպես, Դոնի մարզի օրենսդիր ժողովի 1998 թ. և 2003 թ. գումարումներում եղել են մեկական, 2008 թ.՝ երկու, իսկ 2013 թ.՝ հինգ հայ ներկայացուցիչներ կամ պատգամավորների ընդհանուր թվի 10 %-ը: Դոնի Ռոստովի քաղաքային դումայի հինգերորդ և վեցերորդ գումարումներում հայերը ներկայացված են եղել 2-3 պատգամավորներով<sup>11</sup>:

Դոնի հայ համայնքը ապրում է պատմական զարգացման նոր փուլ, և խիստ կարևոր է, որ այս համայնքը, որը, իրավամբ, կարող է դասվել մայր գաղութների շարքը, արձանագրի նորանոր հաջողություններ՝ ուղենիշ դառնալով հատկապես նորաստեղծ համայնքների համար:

*Հավելված 1*

Армяне-ростовчане, удостоенные государственных наград и благодарственных писем Президента Российской Федерации (2003-2011 гг.)<sup>12</sup>

<b>Ф. И. О.</b>	<b>Место работы</b>	<b>Почетное звание/награда</b>
<b>2003 г.</b> 1. КАЗАРЬЯНЦ Артур Альбертович	Заместитель генерального директора – главный специалист по закупкам Ростовского областного фонда социальных проектов – Регионального бюро реализации проекта Международного банка реконструкции и развития.	За заслуги в области экономики и финансовой деятельности присвоено почетное звание « <b>Заслуженный экономист РФ</b> »
2. АТОЯН Зоя Борисовна	Учительница Чалтырской средней школы № 1 Мясниковского района	За заслуги в обучении и воспитании учащихся и многолетний добросовестный труд

<sup>11</sup> Տե՛ս Սուչիյ Ս. Յ., Социопрофессиональные ориентации армян Ростовской области: тенденции постсоветского периода (на материалах ряда статусных профессиональных сообществ), Армяне Юга России: история, культура, общее будущее: материалы III Международной научной конференции (г. Ростов-на-Дону, 30-31 мая 2018 г.) / [отв. ред. акад. Г. Г. Матишов], Ростов н/Д: Изд-во ЮНЦ РАН, 2018, с. 184-185:

<sup>12</sup> Տե՛ս Ռոստովի մարզի կառավարության պաշտոնական պորտալ, <http://old.donland.ru/?pageid=92232>:

		присвоено почетное звание " <b>Заслуженный учитель РФ</b> "
3.САРИЕВ Эдуард Ованесович	Помощник генерального директора федерального государственного унитарного предприятия "Всероссийский научно-исследовательский институт "Градиент"	За многолетний плодотворную изобретательскую и рационализаторскую деятельность присвоено почетное звание " <b>Заслуженный изобретатель РФ</b> "
4. ЧЕБОНЯН Валерий Георгиевич	Командир авиационного отряда открытого акционерного общества "Аэрофлот-Дон"	За заслуги в области воздушного транспорта и многолетний добросовестный труд присвоено почетное звание " <b>Заслуженный пилот РФ</b> "
<u>2004 г.</u> 5. НЕРСЕСЯНЦ Сергей Аванесович	Заведующий отделением Ростовской областной клинической больницы	За заслуги в области здравоохранения и многолетнюю добросовестную работу присвоено почетное звание « <b>Заслуженный врач РФ</b> »
6. УСЕГЕНОВ Ованес Мелконович	Художник творческой фирмы «Донской художественный фонд» области	За заслуги в области искусства присвоено почетное звание « <b>Заслуженный художник РФ</b> »
7. БАЯН Аршак Мартиросович	Ростовчане, награжденные медалью «В память 300-летия Санкт-Петербурга». Участник обороны Ленинграда, награжден медалью «За оборону Ленинграда» (по Пролетарскому району города Ростова-на-Дону)	В соответствии с Указом Президента РФ от 19 февраля 2003 года № 210 «О медали «В память 300-летия Санкт-Петербурга», в ознаменование 300-летия Санкт-Петербурга наградить медалью «В память 300-летия Санкт-Петербурга» жителей г.Ростова-на-Дону
8.АНОСЯН Хачатур Манукович	Глава Мясниковского района Ростовской области	За достигнутые трудовые успехи и многолетнюю добросовестную работу награжден медалью Ордена « <b>За заслуги перед Отечеством</b> » II степени

9.СОГОМОНЯН Григорий Георгиевич	Заместитель главы района – начальник управления сельского хозяйства Мясниковского района	За заслуги в области сельского хозяйства и многолетний добросо- вестный труд при- своено почетное звание <b>«Заслуженный работник сельского хозяйства РФ»</b>
10. ВАРТАНЯН Дживан Хоренович	Заместитель Главы Администрации (Губернатора) области - министр автомобильных дорог, транспорта и связи	В соответствии с распо- ряжением Президента РФ за большой вклад в организацию работы по спасению людей и лик- видации последствий аварии на шахте «За- падная» объявлено благодарность
11. ЧЕЛАХЯН Григорий Вениаминович	Начальник бюро прессово- сварочного производства <b>(награждение работников ОАО "Ростсельмаш")</b>	Присвоено почетное звание <b>"Заслуженный машинист РФ"</b>
12. АКОПОВА Елена Михайловна	Заведующий кафедрой трудового и предпринима- тельского права государ- ственного образовательного учреждения высшего про- фессионального образования «Ростовский государ- ственный университет»	За заслуги в научной работе, значительный вклад в дело подготов- ки высококвалифициро- ванных кадров прис- воено почетное звание <b>«Заслуженный работник Высшей школы РФ»</b>
13. НОР-АРЕВЯН Алексей Тадеосович	Заместитель командира авиационной эскадрильи открытого акционерного общества «Аэрофлот-Дон»	За заслуги в освоении авиационной техники, высокое профессио- нальное мастерство и многолетнюю добросо- вестную работу при- своено почетное звание <b>«Заслуженный пилот РФ»</b>
14.МАРТИРОСОВА Галина Георгиевна	Генеральный директор закрытого акционерного общества «Книга»	За многолетнюю плодотворную работу в области культуры, печати и телерадио- вещания награждена медалью Ордена «За заслуги перед <b>Отечеством» I степени</b>

<p><b>2005 г.</b> 15. АБРОСИМОВА Нина Акоповна</p>	<p>Заведующей отделом федерального государственного унитарного предприятия «Азовский научно-исследовательский институт рыбного хозяйства»</p>	<p>За заслуги в области рыбного хозяйства и многолетний добросовестный труд присвоено почетное звание <b>«Заслуженный работник рыбного хозяйства РФ»</b></p>
<p>16. ГЕВОРКЯН Юрий Артушевич</p>	<p>Врач клиники государственного учреждения «Ростовский научно-исследовательский онкологический институт»</p>	<p>За заслуги в области здравоохранения и многолетнюю добросовестную работу присвоено почетное звание <b>«Заслуженный врач РФ»</b></p>
<p>17. КЕЧЕДЖИЕВА Эмма Эдуардовна</p>	<p>Врач клиники государственного учреждения «Ростовский научно-исследовательский онкологический институт»</p>	<p>За заслуги в области здравоохранения и многолетнюю добросовестную работу присвоено почетное звание <b>«Заслуженный врач РФ»</b></p>
<p>18. ЧИЛИНГАРЯНЦ Сергей Георгиевич</p>	<p>Ведущий научный сотрудник государственного учреждения «Ростовский научно-исследовательский онкологический институт»</p>	<p>За заслуги в области здравоохранения и многолетнюю добросовестную работу присвоено почетное звание <b>«Заслуженный врач РФ»</b></p>
<p>19. АРАКЕЛЯН Самвел Рубенович</p>	<p>Директор муниципального учреждения дополнительного образования «Ростовская городская комплексная детско-юношеская спортивная школа»</p>	<p>За заслуги в развитии физической культуры и спорта и многолетнюю добросовестную работу награжден <b>медалью Ордена «за заслуги перед Отечеством» I степени</b></p>
<p>20. МЕСНИКЬЯН Семен Мартиросович</p>	<p>Начальник бригады открытого акционерного общества «Таганрогский авиационный научно-технический комплекс имени Г.М. Бериева»</p>	<p>За большой вклад в развитие отечественной авиационной техники и многолетний добросовестный труд награжден <b>медалью Ордена «За заслуги перед Отечеством» II степени</b></p>
<p>21. АТОЯН Аршалуйс Маркарович</p>	<p>Врач государственного учреждения здравоохранения «Ростовская областная</p>	<p>За заслуги в области здравоохранения и многолетнюю доб-</p>

	клиническая больница»	росовестную работу присвоено почетное звание « <b>Заслуженный врач РФ</b> »
<b>2006 г.</b> 22. БЕДРОСОВ Александр Арсенович	Главный врач муниципального учреждения здравоохранения «Туберкулезная больница», Морозовский район	За заслуги в области здравоохранения и многолетнюю добросовестную работу присвоено почетное звание « <b>Заслуженный врач РФ</b> »
23. МЕЛИК-СТЕПАНОВ Эдуард Владимирович	Заместитель директора филиала закрытого акционерного общества «Пивоварня «Москва - Эфес»	За заслуги в области пищевой индустрии и многолетний добросовестный труд присвоено почетное звание « <b>Заслуженный работник пищевой индустрии РФ</b> »
24. ЧЕЛОХБЯН Александр Вартанович	Первый проректор – проректор по учебной работе государственного образовательного учреждения высшего профессионального образования «Ростовский государственный университет путей сообщения»	За заслуги в области транспорта и многолетний добросовестный труд присвоено почетное звание « <b>Заслуженный работник транспорта РФ</b> »
25. САМУРГАШЕВ Вартерес Вартересович	Заслуженный мастер спорта, член сборной команды России по греко-римской борьбе	За большой вклад в развитие физической культуры и спорта и высокие спортивные достижения награжден <b>медалью Ордена «За заслуги перед Отечеством» II степени</b>
26. САМУРГАШЕВ Рафаэль Вартересович	Президент Ростовской областной общественной организации «Федерация греко-римской борьбы»	За заслуги в развитии физической культуры и спорта и многолетнюю добросовестную работу награжден <b>медалью Ордена «За заслуги перед Отечеством» II степени</b>

<p><b>2007 г.</b> 27. ИОАННИСЯН Николай Артемович</p>	<p>Солист джазового оркестра образовательно-концертного музыкального центра имени Кима Назаретова (г. Ростов-на-Дону)</p>	<p>За заслуги в области искусства присвоено почетное звание <b>«Заслуженный артист РФ»</b></p>
<p>28. ХУДОВЕРДОВА Маргарита Николаевна</p>	<p>Заведующий кафедрой Ростовской государственной консерватории (академия) имени С.В. Рахманинова</p>	<p>За заслуги в области искусства присвоено почетное звание <b>«Заслуженный деятель искусств РФ»</b> (Заслуженная артистка Казахстана)</p>
<p>29. ПАПИЯНЦ Сергей Алпарович</p>	<p>Руководитель ансамбля танца народов Кавказа «Огни Кавказа» учебного центра «Донское творчество»</p>	<p>За заслуги в области культуры и многолетнюю плодотворную работу присвоено почетное звание <b>«Заслуженный работник культуры РФ»</b></p>
<p>30. ГОГОРЯН Ферденанд Саркисович</p>	<p>Директор поликлиники Ростовского научно-исследовательского института микробиологии и паразитологии</p>	<p>За заслуги в области здравоохранения и многолетнюю добросовестную работу присвоено почетное звание <b>«Заслуженный врач РФ»</b></p>
<p>31. МАРКАРЯН Владимир Арменович</p>	<p>Преподаватель Новочеркасского аграрного техникума</p>	<p>За заслуги в обучении и воспитании учащихся и многолетний добросовестный труд присвоено почетное звание <b>«Заслуженный учитель РФ»</b></p>
<p>32. АВАКОВ Сергей Юрьевич</p>	<p>Ректор Таганрогского института управления и экономики</p>	<p>За заслуги в научно-педагогической деятельности и большой вклад в подготовку квалифицированных специалистов присвоено почетное звание <b>«Заслуженный работник Высшей школы РФ»</b></p>
<p>33. ШИРИНОВА Роза Аршалусовна</p>	<p>Главная медицинская сестра городской больницы № 20 города Ростова-на-Дону</p>	<p>За заслуги в области здравоохранения и многолетнюю добросовестную работу</p>

		присвоено почетное звание <b>«Заслуженный работник здравоохранения РФ»</b>
34. АЙВАЗОВ Степан Манукович	Председатель Ростовского регионального отделения общественно-государственного физкультурно-спортивного объединения «Юность России»	За заслуги в развитии физической культуры и спорта и многолетнюю добросовестную работу присвоено почетное звание <b>«Заслуженный работник физической культуры РФ»</b>
35. КИРКИСЯН Эдуард Александрович	Производитель работ общества с ограниченной ответственностью «Мир»	За заслуги в области строительства и многолетний добросовестный труд присвоено почетное звание <b>«Заслуженный строитель РФ»</b>
<u>2008 г.</u> 36. ЧАРДАРОВ Карп Никитич	Заместитель главного врача государственного учреждения здравоохранения «Областная детская больница».	За заслуги в области здравоохранения и многолетнюю добросовестную работу присвоено почетное звание <b>«Заслуженный врач РФ»</b>
<u>2009 г.</u> 37. ГАЙБАРЯН Арменак Хевонтович	Тренер-преподаватель отделения греко-римской борьбы государственного образовательного учреждения дополнительного образования «Ростовская областная школа высшего спортивного мастерства № 1» (г. Ростова-Дону)	За заслуги в развитии физической культуры и спорта присвоено почетное звание <b>«Заслуженный работник физической культуры РФ»</b>
38. ХАЧАТУРЯН Фердинанд Зулуматович	Генеральный директор закрытого акционерного общества «Ростовгазоаппарат»	За достигнутые трудовые успехи и многолетнюю добросовестную работу награжден <b>медалью Ордена «за заслуги перед Отечеством» II степени</b>
<u>2010 г.</u> 39. ТОПАЛЯН Сусанна Вартановна	Учительница муниципального общеобразовательного учреждения «Крымская средняя общеобразовательная школа № 5» Мясниковского района	За заслуги в педагогической и воспитательной деятельности и многолетний добросовестный труд присвоено почетное звание <b>"Заслуженный учитель РФ"</b>

<p>40. ОГАНЯН Амбарцум Гургенович</p>	<p>Главный врач муниципального учреждения здравоохранения «Центральная районная больница» в Багаевском районе Ростовской области</p>	<p>Приказом Министерства здравоохранения и социального развития РФ от 15.04.2010 №270-П за заслуги в области здравоохранения и многолетний добросовестный труд награжден <b>Почетной грамотой Министерства здравоохранения и социального развития РФ</b></p>
<p>41. ШЕСТАКОВА Нина Саркисовна</p>	<p>Главный врач муниципального лечебно-профилактического учреждения здравоохранения «Детская городская поликлиника №8» г. Ростова-на-Дону</p>	<p>Приказом Министерства здравоохранения и социального развития РФ от 15.04.2010 №270-П за заслуги в области здравоохранения и многолетний добросовестный труд награжден <b>Почетной грамотой Министерства здравоохранения и социального развития РФ</b></p>
<p>42. ГОГОРЯН Саркис Леонидович</p>	<p>Генеральный директор общества с ограниченной ответственностью «Донской причал»</p>	<p><b>Объявлено благодарностью Президента РФ</b></p>
<p>43. ХУРДАЯН Крикор Дзеронович</p>	<p>Профессор Ростовской консерватории имени С.В. Рахманинова, Заслуженный деятель искусств РФ</p>	<p>Удостоен <b>Ордена Дружбы</b></p>



**Поздравительное письмо Министра диаспоры РА по случаю 30-летия со дня основания общественной организации «Нахичеванская-на-Дону армянская община».**

**Многоуважаемый губернатор Ростовской области господин Голубев!**

**Многоуважаемый председатель Законодательного собрания Ростовской области господин Ищенко!**

**Многоуважаемый глава администрации г. Ростов-на-Дону господин Кушнарев!**

**Глубокоуважаемый господин Сурмалян!**

**Дорогие руководители и представители армянской общины Ростова, дамы и господа!**

От имени Министерства диаспоры и от себя лично искренне поздравляю по случаю 30-летия со дня основания общественной организации «Нахичеванская-на-Дону армянская община».

За годы своего существования община, осуществляя многочисленные программы, направленные на сохранение армянства, воспитала поколение истинных патриотов, патриотов многонациональной России и своей исторической родины Армении.

Я выражаю свою признательность всему руководству общественной организации «Нахичеванская-на-Дону армянская община» во главе с председателем Арутюном Сурмаляном, преподавателям армянских школ, членам армянской общины Ростова, всем тем, кто сохраняет и распространяет многовековое духовное и культурное наследие армянского народа, его общечеловеческие ценности.

Особая благодарность органам государственной власти Ростовской области за пристальное внимание к национальным общинам. Именно благодаря их поддержке армянская община Ростова сохраняет свою национальную идентичность, язык и традиции, прилагает все усилия для укрепления дружбы двух братских народов. Результатом такой политики является созидательная деятельность наших соотечественников, живущих на гостеприимной российской земле.

Уважаемые друзья,

Сегодня мы обязаны особенно глубоко осознать значение армянской государственности. В результате последних перемен в стране, нам выпала возможность решительного прорыва. армянский народ одержал свою очередную славную победу, утвердив собственную власть на собственной родине. Эта победа казалась невозможной и

многие до сих пор задают вопрос, как это случилось и почему. Ответ следующий: армянский народ в очередной раз возложил надежду на себя, а не на других, армянский народ поверил в себя, в свои силы и будущее. И нет сомнения, что наш огромный потенциал, способности и возможности будут направлены на решение общенациональных задач, усиление мощи Армении, укрепление безопасности Арцаха и еще большего сплочения Диаспоры.

Еще раз поздравляю всех участников торжественного мероприятия, желаю процветания и мирного неба над головой.

Да здравствует армяно-российская дружба!

Да здравствует Россия, да здравствует Новая Армения в которой будем жить все мы и наши дети!

Министр Диаспоры  
**ԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄՅԻՏԱՐ**

*Հավելված 3*

*ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի շնորհավորական ուղերձը Դոնի հայ համայնքի (Նոր Նախիջևան քաղաքի) հիմնադրման 240-ամյակի կապակցությամբ*

**Ռուստովի մարզային և քաղաքային իշխանության հարգարժան ներկայացուցիչներ, Դոնի հայ համայնքի սիրելի՛ անդամներ, մեծարգո՛ ներկաներ և հյուրեր,**

Հայաստանի Հանրապետության սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի և անձամբ իմ անունից շնորհավորում եմ Նոր Նախիջևան հայկական քաղաքի հիմնադրման 240-ամյակի կապակցությամբ:

1779 թ. շուրջ 12.600 դրիմահայերի վերաբնակեցման արդյունքում Դոնի տափաստաններում հիմնվեցին Նոր Նախիջևան քաղաքը և հարակից 5 հայկական գյուղերը՝ Չալդրը, Թովտին, Մեծ Սալան, Փոքր Սալան և Նեավիտան: Ռուսական կառավարությունը խրախուսել է Դոնում հայերի հաստատումը, նրանց 10 տարով ազատել հարկերից, հատկացրել հողատարածք, օժանդակել տներ կառուցելու հարցում, շնորհել ներքին ինքնակառավարում:

Կարճ ժամանակ անց ձևավորվել են Նոր Նախիջևանի հայկական աշխարհիկ և հոգևոր կառավարչական հաստատությունները, դատավարություն իրականացվել է «Հայկական դատաստանագրքի» հիման վրա, քաղաքն ունեցել է իր զինանշանը:

Գործունյա ու աշխատասեր հայերը, չնայած վերաբնակության առաջին տարիներին կրած զրկանքներին ու կորուստներին, արագ յուրացրին Ռուսաստանի թույլ բնակեցված հարավային շրջանները՝ զարկ տալով գյուղատնտեսությանը, առևտրին ու արտադրությանը, կառուցեցին եկեղեցիներ ու դպրոցներ, հրատարակեցին թերթեր:

Հիշարժան են Դոնում հայապահպան գործունեություն ծավալած Հայ ուսուցչական միությունը, Թեմական, Սուրբ Խաչ վանքի ժառանգավորաց, Արիեստագործական, Գոգոյան, Հոխիսիմյան, Սանդուխտյան դպրոցներն ու ուսումնարանները, «Նոր խոսք», «Նոր կյանք», «Մեր ձայնը», «Լույս», «Գաղութ», «Հայ համայնք» պարբերականները:

Նոր Նախիջևանի պատմության հետ են կապված հայ մշակույթի, հոգևոր, հասարակական-քաղաքական կյանքի բազում նշանավոր անուններ, ինչպիսիք են Հովսեփ Արղությանը, Գևորգ VI Չորեքչյանը, Հարություն Ալամդարյանը, Ռափայել Պատկանյանը, Միքայել Նալբանդյանը, Միսոն Վրացյանը, Ալեքսանդր Մյասնիկյանը, Սարգիս Լուկաշինը, Մարտիրոս Սարյանը, Մարիետա Շահինյանը և այլք:

Խորհրդային տարիներին ևս Դոնը հանդիսացել է ռուսահայ կյանքի կարևոր կենտրոն, ուր գործել են հայկական դպրոցներ, թատրոն, մանկավարժական ուսումնարան, մամուլ: Հատկանշական է, որ ազգային կյանքի դրսևորման վկայություն էր Դոնում Մյասնիկյանի հայկական ազգային շրջանի կազմակերպումը 1926-1963 թթ.:

1960-ական թթ. հայ և ռուս գիտնականների, մշակույթի գործիչների ջանքերով, ինչպես նաև Խորհրդային Հայաստանի և Ռուստովի մարզային իշխանությունների աջակցությամբ, կանխվել է պատմա-ճարտարապետական մեծ արժեք ներկայացնող Սուրբ Խաչ վանական համալիրը քանդելու փորձը, որը վերականգնումից հետո վերածվել է հայ-ռուսական բարեկամության թանգարանի:

Հետխորհրդային տարիներին Դոնի հայ համայնքը համալրվել է, իսկ ազգային կյանքը նոր վերելք է ապրել: Հայերը նշանակալի տեղ են զբաղեցնում մարզի հասարակական-քաղաքական, տնտեսական, մշակութային, կրթական և այլ ասպարեզներում:

Հարգելի՛ ներկաներ,

2018 թվականին մեծ հանդիսավորությամբ նշվել է «Նոր Նախիջևանի հայ համայնք» հասարակական կազմակերպության 30-ամյակը, որոնք հիրավի եղել են արարման ու ձեռքբերումների տարիներ: Դոնի հայությունը մշտապես պահպանել ու զարգացրել է կապերը մայր Հայաստանի հետ, սատար կանգնել նրա վերաշինությանն ու զարգացմանը:

Այսօր էլ Դոնի հայ համայնքը կարևոր օղակ է հայ-ռուսական հարաբերություններում, մեծապես նպաստում է երկու ժողովուրդների բազմադարյա բարեկամության ամրապնդմանը, միջպետական կապերի զարգացմանը: Այս հարցում մեծ դերակատարում ունեն մաս Դոնի մարզային ու տեղական իշխանությունները, որոնց վերաբերմունքը հայ համայնքի հանդեպ աչքի է ընկել բարյացակամությամբ, ինչի համար մենք շնորհակալ ենք:

Համոզված եմ, որ Դոնի հայությունը հետայսու ևս իր ուրույն և արժանի տեղը կունենա ռուսահայ համայնքների շարքում՝ արձանագրելով նորանոր հաջողություններ:

Մեկ անգամ ևս շնորհավորում եմ այս հիշարժան միջոցառման առթիվ՝ մաղթելով բարեկեցություն ու խաղաղություն:

Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար

**Զարեհ Սինանյան**

## РЕЗЮМЕ

**Ключевые слова:** *Армянская община, Нор Нахичевань / Нахичевань-на-Дону, перепись населения, организация, диаспора, Россия*

Армянская община Дона является одной из старейших, организованных и хорошо функционирующих общин России, отличающихся разнообразием общинных, образовательных, культурных и духовных организаций. По официальным данным, армянская община Дона составляет более 100 000 человек, но по неофициальным данным она достигает около 300 000 человек. Большая часть общины проживает в городах, в частности Ростове-на-Дону, но также имеется большое количество сельских армян. В истории армянской общины много выдающихся деятелей в области культуры, политики, просвещения и т.д. Армяне также активно вовлечены в различных органах управления в Донском регионе. За добросовестный труд десятки армян получили высокие государственные награды.

## SUMMARY

**Key words:** *Armenian community, Nor Nakhichevan / Nakhichevan-on-Don, census, organization, diaspora, Russia*

The Armenian community of Don is one of Russia's oldest, well-organized and well-functioning communities, distinguished by its diversity, diversity of community, educational, cultural and spiritual organizations. According to official data, the Armenian community of Don is 100,000 people, but unofficial numbers reach 300,000. The majority of the community lives in urban areas, particularly in Rostov-on-Don, but there are also large numbers of rural Armenians. The community has given many prominent figures in the fields of culture, politics, enlightenment and more. Armenians are also actively involved in various levels of government in the Don region. Dozens of Armenians have received high state awards for their conscientious work.

**ԴՌՆԻ ՆԱԽԻՋԵՎԱՆՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ\***

*Հովհաննիսյան Մ. Ս.,  
պ. գ. ք., դոցենտ, ԵՊՀ*

Հայ սփյուռքի համար 1991 թվականից հետո հայրենիքի հետ հարաբերությունները նոր փուլ քնակոխեցին: Իր հերթին Սփյուռքը վերափոխումների մեծ գործընթաց անցավ: Դասական Սփյուռքի կողքին ի հայտ եկավ հետխորհրդային հանրապետություններում ապրող նոր Սփյուռք<sup>1</sup>: Այստեղ մեր հայրենակիցների կողմից ձևավորած համայնքային նոր կառույցները սկսեցին ինքնակազմակերպվել՝ փորձելով իրենց շուրջ համախմբել տեղի հայության ներուժը: Այդ գործընթացը տարբեր ճանապարհներով ընթացավ՝ ընդգրկելով համառուսաստանյան և տեղական ներկայացվածության կազմակերպությունների: 240 տարի առաջ Դռնի երկրամասում հաստատված մեր հայրենակիցների ներկայացուցչական մարմինը՝ «Դռնի նախիջևանյան հայկական համայնք» Ռոստովի մարզային հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ համայնքային կազմակերպություն), իր ուղին սկսեց 1988 թ.<sup>2</sup>: Բավական ընդգրկուն ճանապարհ է անցել համայնքային կազմակերպությունը, որի գործունեության յուրաքանչյուր հարց առանձին ուսումնասիրության նյութ է: Մեր հետազոտության նպատակն է ներկայացնել նորագույն շրջանում հիշյալ կազմակերպության և Հայաստանի Հանրապետության պետական, կրթամշակութային կառույցների միջև տեղ գտած հումանիտար հարաբերությունների պատմությունը:

Կազմակերպության գործունեության առաջին շրջանը՝ 1988-2010 թվականները, կարելի է դիտարկել իբրև ձևավորման շրջան, որի ժամանակ համայնքային պատասխանատուների ուշադրության կենտրոն-

---

\* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության պետական կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնարարմի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի աջակցության «ՀՀ ԿԳՆ Գ.ՊԿ - ՀՀՌ-Հ-2018» միջազգային մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված «Դռնի հայկական համայնքը նորագույն շրջանում. պատմություն, ինստիտուտներ, ինքնություն» գիտական ծրագրի շրջանակներում:

<sup>1</sup> Տե՛ս Կարապետյան Ռ., Միգրացիան և հայկական նոր սփյուռքը, Երևան, «Գիտություն» հրատ., 2013, էջ 74-103:

<sup>2</sup> Տե՛ս РРОО «Нахичеванская-на-Дону армянская община», URL: <https://clck.ru/Hqhggr>, 01.08.2019, տե՛ս նաև Смирнов В. В., «Летопись Нахичевани-на-Дону / 2-е изд. перераб. и доп. / Сост. С. М. Саядов, Ростов н/Д: АО «Книга», 2018, с. 317-318:

նում եղել են առավելապես տեղական բնույթի հարցերը: Հայրենիքի հետ կապը չի կրել համակարգային բնույթ. առանձին օրինակները հենված չեն եղել պետություն-համայնք գործակցային շարունակական ծրագրերի վրա: 2008 թ. ՀՀ սփյուռքի նախարարության ձևավորումը<sup>3</sup> նոր հանգրվան կարելի է համարել հայրենիք-Սփյուռք հարաբերություններում: Արդեն նախկին Սփյուռքի նախարարության հովանու ներքո կազմակերպված մշակութային, կրթական բնույթ ունեցող նախագծերը հայրենիքի հետ կապերի աշխուժացման հարցում իրենց դրական դերն ունեցան նաև Դոնի Ռոստովի համայնքի համար: 2010-2011 թվականները համայնքի համար հայրենիքից ներկայացուցչական պատվիրակություններ ընդունելու տարիներ էին<sup>4</sup>: Սկսվեցին նաև իրականացվել Հայաստանում գործող ու Սփյուռքի համար նախատեսված նախագծերին մասնակցելու առաջին քայլերը: Համայնքային կազմակերպությունն իր ղեկավար Հարություն Սուրմալյանի գլխավորությամբ Հայաստանի հետ հումանիտար հարաբերություններին հետզհետե սկսեց համակարգային մոտեցում ցուցաբերել<sup>5</sup>: Ներքո-հիշյալ փաստական տվյալների վերլուծումը ցույց է տալիս, որ այդ աշխուժացումը սկսեց դիտվել պատմաբան Սերգեյ Մայադովին 2011 թ. հունիսի 17-ին համայնքային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնում նշանակելուց հետո<sup>6</sup>: Մինչ այդ նշանակումը մեզ հասու աղբյուրներից ՀՀ պատկան կառույցների հետ հումանիտար հարաբերությունների մասով միայն մեկ օրինակ հաջողվեց արձանագրել: «Նոր Նախիջևան» համայնքային թերթի 2011 թ. փետրվարին լույս տեսած համարում կարդում ենք «Կերպարվեստի գործիչների համաժողով Երևանում» խորագրով հողվածը, որում նշված չէ համաժողովի իրականացման տարեթիվը: «Արմենպրես» լրատվական գործակալության պաշտոնական կայքից տեղեկանում ենք, որ «Արվեստը և բիզնեսը, արվեստը և համացանցը» խորագիրը կրող կերպարվեստի գործիչների

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ նախագահի հրամանագիրը Հ. Հակոբյանին ՀՀ սփյուռքի նախարար նշանակելու մասին, URL: <https://clck.ru/J6mgR>, 02.08.2019, տե՛ս նաև ՀՀ կառավարություն որոշում, 11 սեպտեմբերի, 2008 թ., N 1049-Ն, URL: <https://clck.ru/J6mgd>, 02.08.2019:

<sup>4</sup> Տե՛ս Рабочий визит Президента Сержа Саргсяна в Ростов-на-Дону, URL: <https://clck.ru/J6mgd>, 02.08.2019, տե՛ս նաև Встреча армянской диаспоры Дона с премьер-министром Армении Тиграном Саркисяном, «Нахичевань-на-Дону», № 7 (178), Июль, 2011, с. 3:

<sup>5</sup> Համայնքային կազմակերպությունը 1988-1997 թթ. ղեկավարել է Գրիգոր Խորոյանը, 1997-2005 թթ. Էդուարդ Վարդանյանը, 2005 թվականից՝ Հարություն Սուրմալյանը: Տե՛ս РРОО «Нахичеванская-на-Дону армянская община», URL: <https://clck.ru/Hqhgq>, 01.08.2019:

<sup>6</sup> Տե՛ս Первое собрание обновленного состава, «Нахичевань-на-Дону», № 6 (177), Июнь, 2011, с. 2:

երկօրյա համահայկական համաժողովը տեղի է ունեցել 2010 թ. սեպտեմբերին: Համայնքային թերթը հայտնում է, որ «Ռոստովի մարզը համաժողովում ներկայացնում էր հայտնի արվեստագետ, քանդակագործ Դավիթ Բեգարովը»<sup>7</sup>: Հետագա զարգացումներն ավելի խոստումնալից արդյունքներ արձանագրեցին, որոնք կարելի է բաժանել ճանաչողական-կազմակերպչական, կրթական, գիտական և մշակութային ուղղությունների:

Ճանաչողական-կազմակերպչական ուղղության մասով համայնքային կազմակերպությունը սկսեց լայնորեն տարածել Սփյուռքի նախարարության կողմից կազմակերպվող «Արի տուն» ծրագրի մասին տեղեկատվությունը<sup>8</sup>: Արդյունքում համայնքում հետզհետե աճեց ծրագրին հայտ ներկայացրած մասնակիցների թիվը<sup>9</sup>: 2012 թ. Սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ և համայնքային կազմակերպության աջակցությամբ Դոնի Ռոստովում կայացավ ԱՊՀ երկրների հայկական երիտասարդական կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների առաջին համաժողովը<sup>10</sup>: Պետք է նկատել, որ նախարարության և համայնքային կազմակերպության միջև, անկախ առկա խնդիրներից, միշտ գործնական կապ է պահպանվել<sup>11</sup>: Իր հերթին համայնքային կազմակերպությունը փորձել է իրեն հասու տեղեկատվական հարթակներում ներկայացնել և տարածել նախարարության ծրագրերը:

Կրթության ոլորտում անհրաժեշտ է առաջնահերթ արձանագրել ՀՀ սփյուռքի նախարարության «Սփյուռք» ամսառային դպրոցին և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծրագրին<sup>12</sup> համայնք-

<sup>7</sup> Կերպարվեստի գործիչների համաժողովը Երևանում, «Нахичевань-на-Дону», № 2 (173), Февраль, 2011, с. 4:

<sup>8</sup> Տե՛ս Программа «Ари Тун», «Нахичевань-на-Дону», № 6 (177), Июнь, 2011, с. 11:

<sup>9</sup> Տե՛ս «Ари Тун», «Нахичевань-на-Дону», № 10 (181), октябрь, 2011, с. 11, տե՛ս նաև «Ари Тун» по-ростовски, 26 авг., 2013, URL: <https://clck.ru/16rQ3>, 02.08.2019, Долгожданная встреча с Родиной!, 01 окт., 2012, URL: <https://clck.ru/J7Gxb> (դիտումը՝ 02.08.2019):

<sup>10</sup> Տե՛ս Դոնի Ռոստովում կայացավ ԱՊՀ երկրների հայկական երիտասարդական կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների առաջին համաժողովը, URL: <http://www.mindiaspora.am/am/News/2321> (դիտումը՝ 02.08.2019):

<sup>11</sup> Տե՛ս Հեռակոնֆերանս Դոնի Ռոստովի հայկական համայնքի ներկայացուցիչների հետ, URL: <http://www.mindiaspora.am/am/News/2457>, 02.08.2019, տե՛ս նաև Տեսաժողով Դոնի Ռոստովի հայկական համայնքի ներկայացուցիչների հետ, URL: <http://www.mindiaspora.am/am/News/5924>, (դիտումը՝ 02.08.2019):

<sup>12</sup> Տե՛ս Սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստում, URL: <http://edu.am/index.php/am/news/view/562>, 02.08.2019, տե՛ս նաև Стартовала программа переподготовки учителей из Спюрка URL: <https://clck.ru/J6uvM>, (դիտումը՝ 02.08.2019):

քի ներկայացուցիչների մասնակցության փաստը: Դեռևս «Սփյուռք» ամսառային դպրոցի նախնական ձևավորման փուլում համայնքը թվով այն քիչ սփյուռքյան կառույցներից էր, որ ծրագրին մասնակցելու մղեց իր ներկայացուցիչներին: Այսպես, 2011 թ. «Նոր Նախիջևան» քերթի թղթակցի կարգավիճակով Սփյուռքի ՁԼՄ-ի երիտասարդ լրագրողների դպրոցի դասընթացներին մասնակցեց Լիլիթ Մետրոպոլիտեն<sup>13</sup>: Նրա մասնակցության կարևոր ձեռքբերումներից էր հետադարձ կապի ապահովումը: Արդյունքում համայնքային ղեկավարության և դպրոցի համակազմակերպիչներից Երևանի պետական համալսարանի ներկայացուցիչների միջև համացանցային հեռահար կապի միջոցով սկսվեց համայնքային կազմակերպության և ԵՊՀ-ի միջև երկարատև համագործակցության շրջան<sup>14</sup>: Այն նշանավորվեց կողմերի միջև 2011 թ. կնքված պայմանագրով, որն իր ձևաչափով հայրենիք-Սփյուռք հարաբերությունների համատեքստում առաջինն էր<sup>15</sup>: Հետագայում «Սփյուռք» ամսառային դպրոցի ձևավորման ընթացքում հնարավոր եղավ ներգրավել համայնքային ներկայացուցիչներին հայերենի արագացված ուսուցման, ազգային երգի ու պարի մասնագետների, լրագրողների, հայոց լեզվի ուսուցիչների վերապատրաստման և երիտասարդ առաջնորդների համար նախատեսված դասընթացներին<sup>16</sup>:

Մարզի հայ բնակչության շրջանում հայոց լեզվի պահպանման և տարածման մասով խնդիրները<sup>17</sup> տարբեր են: Պետական կարգավիճակ ունեցող որոշ դպրոցներում հայոց լեզուն դասավանդվում է իբրև ոչ պարտադիր առարկա: Մրա կողքին համայնքային կազմակերպությունը «Հայկական բարեգործական ընդհանուր միության» հետ գործակցաբար 2011 թ. սեպտեմբերից<sup>18</sup> սկսեց համայնքային գրասենյակում Հայկական վիրտուալ քոլեջի ներկայացրած «հայոց լեզու» առարկայի դասավանդման ծրագիր, որը շարունակական բնույթ է կրում: Համայնքի հայոց լեզվի ուսուցիչները հայրենիքում վերապատրաստվե-

<sup>13</sup> Տե՛ս Սկսվեցին Սփյուռքի ՁԼՄ-ի երիտասարդ լրագրողների դպրոցի դասընթացները, URL: <http://www.mindiaspora.am/am/News/1454> (դիտումը՝ 02.08.2019):

<sup>14</sup> Տե՛ս Новые перспективы сотрудничества, 20 июл., 2012, URL: <https://clck.ru/J6rQ3> (դիտումը՝ 02.08.2019):

<sup>15</sup> Տե՛ս Համագործակցության նոր հեռանկարներ, URL: <https://clck.ru/J7GFy> (դիտումը՝ 02.08.2019):

<sup>16</sup> Տե՛ս Летняя школа «Диаспора 2016», 16 май, 2016, URL: <https://clck.ru/J6uqc> (դիտումը՝ 02.08.2019), տե՛ս նաև Завершилась летняя школа «Диаспора», URL: <http://ysu.am/main/ru/Summer-school-Diaspora-is-over> (դիտումը՝ 02.08.2019):

<sup>17</sup> Տե՛ս Как сохранить Армянский язык в Мясниковском районе, 30 июл., 2018, URL: <https://clck.ru/J7Gcr>, (դիտումը՝ 02.08.2019):

<sup>18</sup> Տե՛ս Армянский виртуальный колледж - Газета «Нахичевань-на-Дону», № 8 (179), август, 2011 г., с. 1:



լու վերոհիշյալ ծրագրերին զուգահեռ հնարավորություն ունեցան մասնակցելու 2018 թ. Դոնի Ռոստովում ԵՊՀ հետ գործակցության շրջանակներում կազմակերպված խտացրած դասընթացների<sup>19</sup>: Փորձ կատարվեց նույն համագործակցության շրջանակներում խրախուսելու համայնքի երիտասարդությանը իրենց բարձրագույն կրթության մի մասը ստանալ ԵՊՀ-ում: 2013-2015 թթ. ԵՊՀ ցեղասպանագիտություն մագիստրոսական ծրագրի մեկնարկային ուսումնական տարվա ուսանողների թվում էր նաև համայնքի ներկայացուցիչը:

Գիտական ուղղությունը ևս բավական ակտիվ զարգացումների շրջան է ապրում: Այս դաշտում գործակցային առաջին օրինակ կարելի է համարել համայնքային կազմակերպության կողմից 2012 թ. ապրիլի 20-ին կազմակերպված «Ցեղասպանություն. հանցագործություն ընդդեմ մարդկայնության: Հայոց ցեղասպանության պատմաիրավական տեսանկյունները» խորագիրը կրող գիտագործնական գիտաժողովը: Առաջին անգամ համայնքային կազմակերպությունը գիտաժողովին մասնակցելու նպատակով պաշտոնապես դիմեց ԵՊՀ-ին՝ թեմայի շուրջ փորձագետներ գործուղելու համար<sup>20</sup>: Այս փորձը հետագայում ևս կիրառվեց տարբեր թեմատիկ դասախոսությունների, գիտական զեկուցումների ներկայացման համար<sup>21</sup>: Գիտաժողովների շարքը հետագայում ավելի ընդգրկում սահմաններ ունեցավ: Ռ-Գ-Ա հարավային գիտական կենտրոնի հովանու ներքո և համայնքային կազմակերպության գործուն մասնակցությամբ 2012<sup>22</sup>, 2015<sup>23</sup>, 2018<sup>24</sup> թվականներին կազմակերպվեցին «Ռոսաստանի հարավի հայերը», ինչպես նաև՝ 2014 թ. «Կազակները և լեռնականները առաջին աշխարհամարտի տարիներին»<sup>25</sup> խորագրերը կրող միջազգային գիտաժողովները: Հայաստանի

<sup>19</sup> ՀՀԻ-ն Սփյուռքի ուսուցչի կողմից Դոնի Ռոստով, URL: <http://www.armin.am/am/news/-217,02.08.2019>:

<sup>20</sup> St'u Турция, без признания нет прощения, «Нахичевань-на-Дону», № 4 (187), апрель, 2012 г., с. 1, 3:

<sup>21</sup> St'u ՀՀԻ պատվիրակությունը Դոնի Ռոստովում է, URL: [http://www.armin.am/am/news/-92\(դիտումը՝ 03.08.2019\):](http://www.armin.am/am/news/-92(դիտումը՝ 03.08.2019):)

<sup>22</sup> St'u Научная конференция «Армяне Юга России: история, культура, общее будущее», URL: [https://clck.ru/J7Mve\(դիտումը՝ 03.08.2019\):](https://clck.ru/J7Mve(դիտումը՝ 03.08.2019):)

<sup>23</sup> St'u Вторая международная научная конференция «Армяне Юга России: история, культура, общее будущее» (Ростов-на-Дону, 26-28 мая 2015 г.), URL: [https://clck.ru/J7MWJ\(դիտումը՝ 03.08.2019\):](https://clck.ru/J7MWJ(դիտումը՝ 03.08.2019):)

<sup>24</sup> St'u III Международная научная конференция «Армяне юга России: история, культура, общее будущее», 30-31 мая 2018 г., Ростов-на-Дону, URL: [https://clck.ru/J7MWu\(դիտումը՝ 03.08.2019\):](https://clck.ru/J7MWu(դիտումը՝ 03.08.2019):)

<sup>25</sup> St'u Международная научная конференция «Казачи и горцы в годы Первой мировой войны: новые подходы и информационное обеспечение исследований», URL: [https://clck.ru/J7MXm\(դիտումը՝ 03.08.2019\):](https://clck.ru/J7MXm(դիտումը՝ 03.08.2019):)

գիտական շրջանակները հետզհետե առավել ակտիվ մասնակցություն ունեցան, ներգրավվեց նաև ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան: Իրենց հերթին համայնքի գիտական շրջանակները ներկայացնող հայ հետազոտողները ևս հնարավորություն ունեցան մասնակցելու Հայաստանում կազմակերպված հիշյալ միջազգային գիտաժողովներին: Հատկանշական է, որ դրանք բացառապես հայագիտական ուղղվածության միջազգային գիտաժողովներ էին<sup>26</sup>: Արդեն ակնհայտ էր դառնում, որ անհրաժեշտ է համախմբել համայնքի հայագիտական դաշտի մտավոր ներուժը: Այս ուղղությամբ դեռ 2011 թվականից համայնքային կազմակերպության և ԵՊՀ ներկայացուցիչների միջև քննարկումներ են իրականացվել: 2013 թ. ՌԳԱ հարավային գիտական կենտրոնի, համայնքային կազմակերպության ու ԵՊՀ միջև կնքված եռակողմ պայմանագրի շրջանակում հարցը մոտ էր իրավական առումով լուծում ստանալու<sup>27</sup>: Հիմնականում ֆինանսական բավարար միջոցների բացակայությունը պարբերաբար հետաձգել է հարցի լուծումը: Այնուամենայնիվ, առկա գործակցային կապերը շարունակում էին զարգանալ: Դրանք ընթացքում ամրապնդվեցին ԵՊՀ ղեկավարության ներկայացուցիչների՝ Դոնի Ռոստով կատարած երկու պաշտոնական այցերի արդյունքում<sup>28</sup>: ԵՊՀ հարթակում սեփական հետազոտություններն<sup>29</sup> ու գիտաճանաչողական նախագիծը ներկայացնելու հնարավորություն ընձեռվեց համայնքային կազմակերպության գործադիր տնօրեն, պ.գ.թ. Սերգեյ Սայադովին: Համալսարանում Սայադովի կողմից ներկայացվեց ռուսալեզու «Հայազգ» համացանցային հանրագիտարանը<sup>30</sup>: Որոշ ժամանակ անց ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի շրջանակում համալսարանական ուսանող կամավորներ

---

<sup>26</sup> Տե՛ս Հայ ինքնության խնդիրները հայագիտական միջազգային համաժողովում, URL: <http://www.armin.am/am/news/80,03.08.2019>, տե՛ս նաև ԵՊՀ-ում մեկնարկեց «Հայկական աշխարհը համացանցում» միջազգային գիտաժողովը, URL: <http://www.armin.am/am/news/169,03.08.2019>, «Ռուսաստանի Դաշնության հայկական սփյուռքը» միջազգային գիտաժողով, URL: <http://www.armin.am/am/news/176> (ղիտումը՝ 03.08.2019):

<sup>27</sup> Տե՛ս Դոնի Ռոստովում կրթվող հայագիտական կենտրոն, URL: <http://www.armin.am/am/news/73> (ղիտումը՝ 03.08.2019):

<sup>28</sup> Տե՛ս Углубление сотрудничества и новые перспективы, URL: <http://www.armin.am/ru/news/112>, (ղիտումը՝ 03.08.2019), նաև Научные связи с Ростовом-на-Дону перешли на новый уровень, URL: <http://www.yu.am/news/ru/Ties-with-Rostov-on-Don> (ղիտումը՝ 03.08.2019):

<sup>29</sup> Տե՛ս Ներկայացնում է Ռոստովի հայագիտական կենտրոնը, URL: <http://www.armin.am/am/news/147> (ղիտումը՝ 03.08.2019):

<sup>30</sup> Տե՛ս Hayazg.info ռուսալեզու հայագիտական հանրագիտարանը ներկայացվեց ԵՊՀ-ում, URL: <http://www.armin.am/am/news/75> (ղիտումը՝ 03.08.2019):

րի մասնակցությամբ հնարավոր դարձավ պատրաստել հանրագիտարանի համացանցային հայերեն<sup>31</sup> և անգլերեն<sup>32</sup> տարբերակները:

Մշակութային ուղղությանը գործակցային կապերը ևս հետ չեն մնացել: Առհասարակ լինելով հայ մշակույթին մոտ կանգնած համայնք՝ մարզի մեր հայրենակիցները մինչ այսօր աչքի են ընկնում իրենց շարքերը ներկայացնող կերպարվեստի հայտնի գործիչներով, նվագախմբերով ու պարախմբերով: Դա նկատելի է նաև տարբեր տարիներին կազմակերպված «Իմ Հայաստան»<sup>33</sup> և «Երգում ենք Կոմիտաս»<sup>34</sup> փառատոններին համայնքի մասնակցության ժամանակ: 2014 թ. ԵՊՀ հյուրընկալեց համայնքում մեծ ճանաչում ունեցող «Անի» համույթին, որի անդամների մեծ մասի նախնիները Ռոստովի մարզ գաղթած առաջին հայերի թվում են եղել<sup>35</sup>:

Գրիգորի Խաթլամաջյանի ղեկավարած նվագախումբը համերգներով հանդես եկավ Երևանում, Արտաշատում և Իջևանում: Համայնքային կազմակերպությունն էլ իր հերթին փորձ է կատարել համակարգելու մշակութային ուղղության առավել խոշոր ծրագրերը: Հայոց ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ համայնքային կազմակերպությունը մշակութային ուղղվածության երկու խոշոր ծրագիր է իրականացրել: Հայաստանում ստեղծագործող քանդակագործ Մկրտիչ Մազմանյանի հետ գործակցաբար Դոնի Ռոստով քաղաքի Սուրբ Հարություն եկեղեցու դիմաց 2015 թ. տեղադրվեց «Ոչ ցեղասպանությանը» հուշարձանը: Միաժամանակ համայնքային կազմակերպության ջանքերով ոչնչացումից փրկվեց Դոնի Ռոստովում գտնվող, հայագրի նկարիչ Ալիմ Ավանեսովի կողմից 1914-1915 թթ. ստեղծած «Դարից դար» կտավը: Հարյուրամյա կտավը վերականգնվեց Հայաստանի ազ-

---

<sup>31</sup> Տե՛ս ՀՀԻ-ում մեկնարկել է hayazg.info ռուսալեզու հանրագիտարանի հայալեզու տարբերակի ստեղծումը, URL: <http://www.armin.am/am/news/88> (դիտումը՝ 03.08.2019):

<sup>32</sup> Տե՛ս Գործարկվեց «Հայագգ» հանրագիտարանի անգլերեն տարբերակը, URL: <http://www.armin.am/am/news/189> (դիտումը՝ 03.08.2019):

<sup>33</sup> Տե՛ս «Իմ Հայաստան» համահայկական 2-րդ փառատոնի մասնակիցները համերգներով հանդես եկան Սյունիքի և Վայոց ձորի մարզերում, URL: <http://www.mindiaspora.am/am/News/3187> (դիտումը՝ 03.08.2019), նաև՝ «Իմ Հայաստան» փառատոնի մասնակիցներն այցելեցին Կոտայքի մարզ, URL: <http://www.mindiaspora.am/am/News/4731> (դիտումը՝ 03.08.2019): Տեղի ունեցավ Դուրուկի և հայկական այլ նվագախմբերի փառատոնի փակման հանդիսավոր արարողությունը, URL: <http://www.mindiaspora.am/am/News/4831> (դիտումը՝ 03.08.2019):

<sup>34</sup> Տե՛ս «Երգում ենք Կոմիտաս», փառատոնի մասնակիցներն այցելեցին Լոռու մարզ, URL: <http://www.mindiaspora.am/am/News/4192> (դիտումը՝ 03.08.2019):

<sup>35</sup> Տե՛ս ԵՊՀ-ի հրավերով Հայաստանում է Դոնի հայերի «Անի» համույթը, URL: <http://www.yso.am/news/hy/The-ensemble-Ani-of-the-Armenians-of-Rostov-on-Don-is-in-Armenia-at-the-invitation-of-YSU>, (դիտումը՝ 03.08.2019):

գային պատկերասրահի մասնագետների կողմից համայնքային կազմակերպության միջոցներով<sup>36</sup>:

2016 թ. Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակին նվիրված համասփյուռքյան տոնական միջոցառումների շարքում իր նշանակալի մասնակցությունը բերեց նաև համայնքային կազմակերպությունը<sup>37</sup>: Միջոցառմանը մասնակցում էին ոչ միայն մեր հայրենակիցները, այլև տեղի այլ ազգային փոքրամասնությունների համայնքային ներկայացուցիչները: Կարևոր է ընդգծել, որ մեր դիտարկած նյութերում պարբերաբար տեսնում ենք համայնքային տարաբնույթ միջոցառումներում Դոնի Ռոստովում գտնվող ՀՀ գլխավոր հյուպատոսարանի ակտիվ մասնակցությունը: Հայրենիքի հետ ունեցած արդյունավետ հումանիտար հարաբերությունների յուրօրինակ գնահատականը տրվեց համայնքային կազմակերպության հիմնադրման 30-ամյակին նվիրված մեծ միջոցառման ժամանակ: Հայաստանի պետական տարբեր գերատեսչությունների բարձր պարգևները գտան իրենց արժանի տերերին<sup>38</sup>:

Ամփոփելով մեր դիտարկումները՝ անհրաժեշտ է նշել, որ համեմատաբար նոր Սփյուռքի մաս հանդիսացող Ռոստովի մարզի հայ համայնքն այսօր ունի հայրենիքի հետ առավելագույնս սերտ հումանիտար հարաբերություններ վարող համայնքային կազմակերպություն: Մի կառույց, որը, թերևս առաջինը Սփյուռքի համայնքային կազմակերպությունների մեջ, սկսեց գործակցել ոչ միայն Հայաստանի պետական պատկան մարմինների հետ, այլ նաև գործակցային ամուր կապեր հաստատեց Հայաստանի առաջատար բուհերից մեկի՝ Երևանի պետական համալսարանի հետ: Անխոս, այսօր համայնքի առջև ծառայած մարտահրավերների թվում հայրենիքի հետ ունեցած հումանիտար հարաբերությունների համատեքստում ներառված հարցերը չի կարելի վերջնական լուծված համարել: Պատճառը մեկն է: Դրանք շարունակական են, քանի որ համայնքի հետագա գոյության մաս են կազմում: Ուստի, առավել կարևոր է դառնում այդ հարցերի համատեղ լուծումների փնտրտուրը, որը կոչված է նաև ամրապնդելու հայրենիքի հետ առկա կապերը:

---

<sup>36</sup> Տե՛ս Երևանում վերականգնվելու է Հայոց ցեղասպանության «հասակակիցը», URL: <https://clck.ru/J7Q4P> (դիտումը՝ 03.08.2019):

<sup>37</sup> Տե՛ս ՀՀ անկախությանը նվիրված միջոցառում Դոնի Ռոստովում, URL: <http://www.armin.am/am/news/175> (դիտումը՝ 03.08.2019):

<sup>38</sup> Տե՛ս Все только начинается, URL: <https://clck.ru/J7Q6M> (դիտումը՝ 03.08.2019):

## РЕЗЮМЕ

**Ключевые слова:** *Республика Армения, Ростов-на-Дону, Новый Нахичевань, Россия, Диаспора, новейший период, гуманитарные отношения.*

В статье рассматривается проблема гуманитарных отношений между Нахичеванской армянской общиной Дона и Республикой Армения в новейшем периоде. Армянская община Ростовской области является частью армянской новой диаспоры. Ее общественная организация поддерживает тесные гуманитарные связи с исторической Родиной. Это та организация, которая одна из первых в Армянской диаспоре сотрудничала не только с государственными органами Армении, но и с одним из ведущих университетов Армении: Ереванским государственным университетом. Среди вызовов общины важное место занимают гуманитарные отношения с исторической Родиной. Община пытается найти для них решение путем укрепления связей с Арменией.

## **ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀԱՅԵՐԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ**

*Գաբրիելյան Մ. Ռ.,  
ազգագրագետ, պ. գ., ԵՊՀ, ՀԱԻ*

Նոր Նախիջևանի հայերի քաղաքական, սոցիալ-տնտեսական պատմության, մշակույթի ու ազգագրական նկարագրի ուսումնասիրության հարցերը հայագիտության զարգացման այս փուլի կարևոր խնդիրների շարքում են:

Համայնքի ուսումնասիրությունն առաջին հերթին գիտական, ակադեմիական կարևոր նշանակություն ունի այն պատճառով, որ այն ավելի քան երկու հարյուր տարվա ընթացքում կարևոր դեր է խաղացել՝ լինելով ամենակայացած ու միաժամանակ ակտիվ զարգացող համայնքներից մեկը Ռուսաստանի հարավում: Ուստի պատահական չէ, որ հրապարակվել են Նոր Նախիջևանի ինչպես ամբողջական պատմության, այնպես էլ առանձին դրվագների վերաբերյալ տասնյակ մենագրություններ ու հարյուրավոր հոդվածներ: Դրանց շարքում հիշատակելի են, մասնավորապես, Ե. Շահազիզի ուսումնասիրությունները, որոնք մինչ օրս աղբյուրագիտական կարևոր նշանակություն ունեն, իսկ նրա «Նոր-Նախիջևանը եւ նոր-նախիջևանցիք» աշխատությունը կարելի է համարել ազգագրության, տնտեսության, տոնածիսական կյանքի, ընտանեկան հարաբերությունների յուրօրինակ հանրագիտարան<sup>1</sup>:

Պատմագիտական<sup>2</sup>, մասնավորապես գաղութի պատմության ուսումնասիրության գործում մեծ ավանդ ունեցող Վ. Բարխուդարյանի տարբեր ուսումնասիրություններում, ըստ էության, ներկայացված են

---

<sup>1</sup> Տե՛ս Շահազիզ Ե., Պատմական պատկերներ (արտատպած «Լումայ» երկամսյա հանդիսից), Թիֆլիս, 1903, նույնի՝ Նոր-Նախիջևանը եւ նոր-նախիջևանցիք (արտատպած «Ազգագրական հանդեսից»), Թիֆլիս, 1903, նույնի՝ Նոր-Նախիջևանի Սուրբ Խաչ վանքը (արտատպած «Լումայ» հանդեսից), Թիֆլիս, 1901:

<sup>2</sup> Մանրամասն տե՛ս Քուշներեան Հ. ք. Վ., Պատմություն գաղթականության Խրիմու հայոց, Վենետիկ Սուրբ Ղազար, 1895, Պատկանեան Գ., Նոր-Նախիջևանի պատմությունը, Նոր-Նախիջևան, 1917, Բարխուդարյան Վ., Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1779-1861 թթ.), Երևան, 1967, նույնի՝ Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1861-1917թթ.), Երևան, 1985, Բարխուդարյան Վ., Ալեքսանյան Հ., Ռուսաստանի հայ գաղթօջախների պատմություն (Հյուսիսային Կովկաս, Նոր Նախիջևան, Աստրախան, Սանկտ Պետերբուրգ, Մոսկվա), Երևան, 2015: Վերջին տարիներին հրատարակված աշխատությունից հիշատակելի են հատկապես Վ. Սմիռնովի աշխատությունները: Տե՛ս Смирнов В., Летопись Нахичевани-на-Дону, Ростое-на-Дону, 2018:

նան այս ամենի պատճառները, ի մասնավորի այն, որ Նոր Նախիջևանի հայերի պատմությունը հայ ժողովրդի մի հատվածի առանձին վերցված, մեկուսի պատմությունը չէ: Այն փոխադարձ կապերի, ազդեցությունների ու ներթափանցումների, ազգային համախմբման գաղափարի վրա խարսխված, տարածաշրջանային (հարավուսաստանյան) կարևորություն ունեցող գործընթաց է<sup>3</sup>:

Մյուս կողմից, նորնախիջևանյան հայկական իրականությունը լուրջ կարևորություն ունի մշակութաբանական, ազգաբանական տեսանկյունից: Այդ բազմաշերտ իրականության ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտելու այլէթնիկ միջավայրում էթնիկ համախմբման, կազմակերպման ու ինքնակազմակերպման այն մոդելներն ու մեխանիզմները, որոնք, մի կողմից, ապահովել և ապահովում են համայնքի էթնիկ-մշակութային ինքնության պահպանումը կոնկրետ ժամանակի ու տարածության մեջ, մյուս կողմից՝ նույն այդ ինքնության փոխանցումը ուղղահայաց՝ տարածամասնակյա հարթությունում:

Բնական է, որ համայնքին վերաբերող ուսումնասիրությունները չէին կարող սահմանափակվել միայն պատմության խնդիրներով ու անտեսել մշակույթի, տնտեսության, տոնածիսական կյանքի, լայն առումով՝ ազգագրության հարցերը: Դրանք վերը նշված աշխատություններում ավել կամ պակաս հաջողությամբ ներկայացված են (մասնավորապես Ե. Շահագլզի ուսումնասիրություններում):

Խորհրդային կարգերի հաստատումից հետո, չնայած սահմանափակումներին, Նոր Նախիջևանի հայերի ազգագրության հանդեպ հետաքրքրությունը մասամբ պահպանվեց, սակայն ավելի նեղ ու սահմանափակ ծավալներով ու շրջանակներում: Խորհրդային առաջին տասնամյակներին բացակայում էին մենագրական բնույթի ուսումնասիրությունները, առանձին հարցեր, ազգագրական բնույթի նյութեր ներկայացվում էին ժամանակի պարբերական մամուլում ու որոշ այլ հրատարակություններում:

Ազգագրական հետազոտությունների ակտիվացում նկատվեց 1950-1960-ական թթ.՝ պայմանավորված ԽՍՀՄ-ում ազգային մշակույթի հանդեպ վերաբերմունքի փոփոխությամբ: Սա հնարավորություն

---

<sup>3</sup> 1985 թ. հրատարակած աշխատության ներածական հատվածում, խոսելով գաղութի կարևորության մասին, Վ. Բարխուդարյանը գրում է. «...*Գաղութի սկզբնավորման ուրույն հանգամանքների և հայերի համար սրեղծված բարենպաստ պայմանների շնորհիվ Նոր Նախիջևանը հենց հիմնադրման ժամանակվանից նշանավորվեց, և անգամ հայկական ինքնավար կյանքը Դոնի ափերին վերականգնելու հույսերի ու պայքարների աղբյուր դարձավ*»: Բարխուդարյան Վ., Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1861-1917թթ.), էջ 5:

տվեց ակտիվացնելու նաև ազգային մշակույթի ուսումնասիրությունները: Առաջին կարևոր քայլերից մեկը դարձավ 1959 թ. սեպտեմբերին Ռոստովի մարզի հայաբնակ վայրերում Հայկական ՍՍՌ-ԳԱ հասարակագիտական բաժանմունքի կոմպլեքսային հետախուզական գիտարշավախմբի կատարած աշխատանքը: Արշավախումբը ղեկավարում էր Վ. Ոսկանյանը, իսկ մասնակիցների թվում կային պատմաբաններ, ազգագրագետներ, արվեստագետներ, բարբառագետներ, բանագետներ, թանգարանային աշխատողներ, ընդամենը՝ 16 մարդ<sup>4</sup>: Արշավախմբի ազգագրական ջոկատն աշխատել է հիմնականում Մյասնիկյանի շրջկենտրոն Չարդիր գյուղում՝ ընդգրկելով նաև Դրին, Մեծ Սալա, Սուրբան Սալա, Նեավեթայ գյուղերը, մասամբ նաև քաղաքի հայերին: Ազգագրագետներից բնակչության պատմության, տնտեսական կյանքի և նյութական մշակույթի հետազոտությունը կատարել է Դ. Վարդումյանը (ջոկատի պետ), սոցիալական կյանքինը, ընտանիքինը, հարսանեկան սովորույթներինը՝ Է. Կարապետյանը (ավ. գիտ. աշխ.), ժողովրդական տոներինը, հավատալիքներինը և պաշտամունքինը՝ Ա. Օդաբաշյանը (կրտս. գիտ. աշխ.): Գծագրերը արել է Ս. Խաթամաջյանը, լուսանկարները՝ Ռ. Հովհաննիսյանը<sup>5</sup>: Արշավախմբի այլ ջոկատները նույնպես ակտիվ աշխատանք են կատարել: Այսպես, օրինակ, Մ. Մանուկյանը հրատարակել է «Նոր Նախիջևանի և շրջակա հայաբնակ գյուղերի ժողովրդական երաժշտությունը», իսկ Վ. Սվազլյանը՝ «Ռոստովի մարզի հայ ժողովրդական բանահյուսությունը» վերնագրով հոդված<sup>6</sup>:

Ռոստովի մարզի հայերի հանդեպ գիտական հետաքրքրությունը հանգեցրեց նրան, որ տեղում նույնպես ակտիվացան ազգագրական ու բանագիտական պրպտումները: 1960-ական թթ. «Պատմա-բանասիրական հանդեսում» հրատարակվեցին Նոր Նախիջևանի, Դրինի, Ռոսաստանի հարավի հայերի պատմության, մշակույթի ու ազգագրության բազմավաստակ հետազոտող Խ. Փորքշեյանի հոդվածները<sup>7</sup>:

<sup>4</sup> Տե՛ս Վարդումյան Դ., Ռոստովի մարզի հայերի մշակույթի և կենցաղի նմուշներ//«Հայկ. ՍՍՌ-ԳԱ տեղեկագիր. Հասարակական գիտություններ», 1961, թիվ 10, էջ 87:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 88-89:

<sup>6</sup> Տե՛ս Մանուկյան Մ., Նոր Նախիջևանի և շրջակա հայաբնակ գյուղերի ժողովրդական երաժշտությունը// «Հայկ. ՍՍՌ-ԳԱ տեղեկագիր. Հասարակական գիտություններ», թիվ 10, էջ 99-106, Սվազլյան Վ., Ռոստովի մարզի հայ ժողովրդական բանահյուսությունը // «Հայկ. ՍՍՌ-ԳԱ տեղեկագիր. Հասարակական գիտություններ», 1961, թիվ 10, էջ 107-112:

<sup>7</sup> Տե՛ս Փորքշեյան Խ., Նյութեր Նոր-Նախիջևանի սարլանների մասին // «Պատմա-բանասիրական հանդես», 1967, թիվ 2-3, էջ 254-266, *նույնի* Նոր-Նախիջևանի հայ գյուղերի «Կտրիճների միությունների» մասին (պատմաազգագրական ակնարկ)// «Պատմա-բանասիրական հանդես», 1966, թիվ 3, էջ 184-192:



Մինչ այդ՝ դեռևս հեռավոր 1910 թվականին, Խ. Փոքրշեյանը մի փոքր հատված («Նոր Նախիջևանի բանահյուսությունից» վերնագրով) իր գրառած բանահյուսական նյութերից հրատարակել էր «Ազգագրական հանդեսի» XX հատորում<sup>8</sup>: Այս մասին հեղինակը գրել է հետագայում. «...Նոր Նախիջևանի ժողովրդական բանահյուսության նյութերի հավաքմամբ զբաղվել ենք դեռևս 1900-ական թվականներից: 1910 թ. մեր հավաքած ժողովրդական բանահյուսության նյութերի ծավալուն ժողովածուն ուղարկեցինք հանգուցյալ Երվանդ Լալայանին՝ «Ազգագրական հանդես»-ում տպագրելու համար: «Ազգագրական հանդես»-ի 20-րդ գրքում (1910 թ.) լույս տեսավ մեր ժողովածուի մի փոքրիկ մասը՝ «Ավերիսները», մնացած մասերը մնացին անտիպ: ...1942 թ. պատերազմի ժամանակ ռեպակոնտրոլի հետևանքով Ռոստովում ոչնչացավ նաև այդ նյութերի չեռագիր օրինակը: Հերազայում մեր պրոպոնենտները՝ Եր. Լալայանի արխիվներից գտնելու Նոր Նախիջևանի բանահյուսության մեր անտիպ հավաքածուն, արդյունք չտվեցին»<sup>9</sup>:

Հետագա տարիներին Նոր Նախիջևանի հայերի ազգագրության տարբեր հարցերին անդրադարձել է նաև ազգագրագետ Ա. Ե. Տեր Սարգսյանը<sup>10</sup>:

Խ. Փոքրշեյանի համառ ու հետևողական ջանքերը, ի վերջո, բերեցին նրան, որ հրատարակվեց ամբողջական ուսումնասիրություն «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարի 2-րդ պրակում՝ «Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը» վերնագրով<sup>11</sup>: Այս պրակը հեղինակի տասնամյակների հավաքչական աշխատանքի արդյունքն էր, քանի որ շատ նյութեր նա ստիպված էր գրառել նորից: Աշխատանքում Խ. Փոքրշեյանը մանրամասն ներկայացրել է Նոր Նախիջևանի ժողովրդական բանահյուսությունը՝ կիրառելով ժա-

<sup>8</sup> Տե՛ս Փոքրշեյան Խ., Նոր Նախիջևանի բանահյուսությունից//«Ազգագրական հանդես», գիրք XX, Թիֆլիս, 1910-Ն 2, էջ 102-107:

<sup>9</sup> Փոքրշեյան Խ., Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը//Հայ ազգագրություն և բանահյուսություն. Նյութեր և ուսումնասիրություններ, Երևան, 1971, էջ 9:

<sup>10</sup> Տե՛ս Тер-Саркисянц А., Донские армяне и этнокультурная ситуация в Ростовской области, Москва, Институт этнографии АН СССР, 1990 (Исследования по прикладной и неотложной этнологии. Серия А. Межнациональные отношения в СССР), *նույնի՛* Армянская диаспора Юга России. Положение и перспективы, Москва, 1993 (в соавторстве с В. П. Худавердяном): Ա. Տեր-Սարգսյանցի՝ Նոր-Նախիջևանի հայերի մասին վերջին հոդվածը հրատարակվեց արդեն նրա մահվանից հետո՝ 2019 թ., հայերի վերաբնակության 240-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում: Тер-Саркисянц А., Свадебная обрядность сельских донских армян (по полевым материалам 1990-ь гг.)//Нахичевань-на Дону: История и современность (к 240-летию переселения армян на Дон), материалы международной научной конференции, Ростов-на-Дону, 2019, էջ 330-339:

<sup>11</sup> Տե՛ս Փոքրշեյան Խ., Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը:

մանակի ընդունված դասակարգումները: Հաշվի առնելով բանահյուսական նյութերի բազմաշերտ լինելը՝ նա առանձին դիտարկել է Ղրիմից Նոր Նախիջևան բերված բանահյուսությունը, քաթարական շրջանից մնացած երկերը, այնուհետև առանձին բաժիններով ներկայացրել հարսանյաց, վիճակի, օրորոցի, մանկական, ուխտի և գուռաշի, բազմաթիվ այլ ոլորտների երգերը: Առանձին ներկայացված են նաև առակները, հանելուկները, աղոթքները, առածները, ասացվածքները, ասույթները և անեծքները: «...Այսպիսով՝ Նոր Նախիջևանի բանահյուսության այս ժողովածուի մեջ մտնում են անցյալում մեր հավաքած նյութերի փրկված մասը, «Ազգագրական հանդեսում» տպագրված ավելիսները և վերջին շրջանում հավաքած բեկորները: Գիրենք, որ թերի է մեր գործը, բայց այսօրվա պայմաններում ավելին կատարելը անկարելի էր: Մենք դեռ հուսով ենք, որ Եր. Լալայանին մեր ուղարկած ձեռագիր ամբողջական հավաքածուն մի օր կգտնվի: Այն ժամանակ շատ մոռացված և անհետացած նյութեր կփրկվեն կորստից»<sup>12</sup>:

Նույն պրակով հրատարակվեց նաև Մ. Լյուլեճյանի «Նոր Նախիջևանի հայկական երգերն ու եղանակները» փոքրածավալ, սակայն կարևոր աշխատությունը<sup>13</sup>: Այն նույնպես հեղինակի երկար տարիների ջանքերի արդյունքն է: Ահա թե ինչ է գրում իր նախածեռնության մասին Մկրտիչ Լյուլեճյանը. «...1956 թվին ես աշխատում էի Ռուստովի մարզի Մյասնիկյանի շրջանի կուլտուրայի տանը՝ ինքնագործ երգեցիկ խմբի ղեկավարի պաշտոնով: Լինելով բնիկ տեղացի՝ Նոր Նախիջևանի Չալդիր գյուղից և լավ զգալով ու գիրենալով մեր տեղական ժողովրդական երգն ու երաժշտությունը՝ ցավեցի, որ մեր նախնիների սիրած ու հորինած մեղեդիներն ու պարեղանակները մոռացության են մատնված և ենթակա են իսպառ անհետացման: Ահա այս զգացումով ես սկսեցի գրի առնել այդ նյութերը»<sup>14</sup>:

Ցուցաբերելով արհեստավարժ մասնագետին հատուկ մոտեցում՝ գրառած նյութերի հեղինակն ուղարկել է ԳԱ արվեստի ինստիտուտ: «...1958 թվականից Մյասնիկյանի շրջանի Չալդիր գյուղի բնակիչ Մկրտիչ Լյուլեճյանը, որը մի քանի տարի եղել է տեղի ինքնագործ խմբի ղեկավարը, իր և տեղի տարեց մարդկանց հիշողությունների հիման վրա մի շարք տեղական երգերի ու պարեղանակների չայնագրություններ է կատարել և ուղարկել ԳԱ արվեստի ինստիտուտ: Այդ չայնագրությունների թիվն այժմ անցնում է հարյուրից. նրանցից շատերը այժմ արդեն չեն հիշող երգերի ու պարեղանակների ունիլալ չայնագրու-

<sup>12</sup> Փոքրշեյան Խ., Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը, էջ 10:

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 130-214:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 133:

*բյուններ են: Այդ չայնագրությունների ճշտության մասին կասկածել չի կարելի, քանի որ կարարված են որոշակի երաժշտական ունակություններ և գիրելիքներ ունեցող մեկի կողմից»<sup>15</sup>:*

Նոր Նախիջևանի ազգագրության ուսումնասիրությունը միայն հրատարակված նյութերով չի սահմանափակվում:

Ռոստովի մարզում իրականացված ուսումնասիրությունները սկիզբ դրեցին մասնակի գիտական համագործակցությանը մարզի հայ բնակչության, առանձին հետազոտողների ու հայաստանյան գիտական հաստատությունների միջև:

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հիմնադրումից հետո հնագիտական, ազգագրական, բանահյուսական, բանագիտական աշխատանքները կազմակերպվում, վերահսկվում ու ուղղորդվում էին հենց այս հաստատության կողմից:

Ժամանակի ընթացքում նվիրատվությունների, գնումների միջոցով ձևավորվեց մասնաձև ազգագրության բաժնի արխիվը, որում պահվող նյութերը, լուսանկարները, գծագրերն ու չափագրություններն այսօր չափազանց մեծ արժեք ու կարևորություն ունեն:

Արխիվում պահվում են մասնաձև Նոր Նախիջևանի ազգագրության ու բանահյուսության վերաբերյալ նյութեր: Ժամանակագրորեն առաջինը Հայկ Ծառուկի Սողոմոնյանի նյութերն են (թվագրված 1958-1959 թվականներով)<sup>16</sup>: Գործում կան մասնաձև յուղաներկ նկարներ: Նյութերի առաջին մասը, ամենայն հավանականությամբ, կազմված է 1958-1959 թթ. և բաղկացած է 31 թերթից: Երկրորդ մասնաձևն ավելի համառոտ է՝ բաղկացած 22 թերթից: Նյութերը ձեռագիր են: Դրանցում հեղինակը ներկայացնում է հիմնականում ամուսանահարսանեկան արարողություններն ու տոները: Նույն թիվ 124 թղթապանակում պահվում է ևս երկու տետր: Դատելով նշումներից՝ դրանք ավարտվել են 1975 թ.: Առաջին տետրը վերնագրված է «Նոր Նախիջևանի Սյասնիկյանի շրջանի Լենինական խոտորի ազգագրական նյութերը (ձեռագիր)» և կազմված է 36 թերթից, իսկ երկրորդը՝ նույն վերնագրով, 67 թերթից: Երկու տետրում էլ խառը՝ ազգագրական և բանահյուսական նյութեր են՝ տոնածիսական կյանք, տնտեսություն, հարսանիք, ժողովրդական բանահյուսության տարբեր նյութեր՝ երգեր, անեծքներ և այլն:

<sup>15</sup> Տե՛ս Մանուկյան Մ., Նոր Նախիջևանի և շրջակա հայաբնակ գյուղերի ժողովրդական երաժշտությունը// «Հայկ. ՄՍՌ. ԳԱ տեղեկագիր. Հասարակական գիտություններ», թիվ 10, էջ 99:

<sup>16</sup> Տե՛ս Սողոմոնյան Հ., Նոր Նախիջևանի հայերի վերաբերյալ ազգագրական նյութեր, թղթ. 124//ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի արխիվ (ՀԱԻ ԱԲԱ):

Նյութերից բացի՝ կա մեկ-երկու նամակ՝ ուղղված Գերեմիկ Վարդույանին, հիմնականում գործերի ընթացքի, պայմանագրի ու այլ խնդիրների վերաբերյալ: Նամակներից մեկին կից հեղինակը ներկայացրել է նաև իր համառոտ կենսագրությունը, համաձայն որի՝ ծնվել է 1900 թ. Չալդր գյուղում: Նախնական կրթությունը ստացել է Չալդրի եկեղեցական-ծխական դպրոցում, այնուհետև երկու տարի ստացել է գոտեխնիկի մասնագիտություն: Մասնակցել է քաղաքացիական պատերազմին՝ Կարմիր բանակում, իսկ հետագա աշխատանքային գործունեությունը կապված է հիմնականում կոլտնտեսության ու առևտրի և սպասարկման ոլորտի հետ:

Վերջին երկու տետրին կցված է նաև կարծիք նյութերի վերաբերյալ, ըստ որի, չնայած որոշ դեպքերում մակերեսային լինելուն, այն հետաքրքիր է ուսումնասիրողի համար, քանի որ Նոր Նախիջևանի վերաբերյալ ազգագրական նյութերը շատ քիչ են:

Եվ իսկապես, այսօր էլ կարող ենք ասել, որ չնայած մասնակի թերություններին ու բացթողումներին՝ Հ. Սողոմոնյանի գրառած նյութերը կարող են նպաստել Նոր Նախիջևանի ու Մյասնիկյանի շրջանի հայկական գյուղերի ազգագրության, տոնածիսական կյանքի, կենցաղի ու այլ խնդիրների ուսումնասիրությանը:

ՀԱԻ ԱԲԱ արխիվում (թղթապանակ թիվ 110) պահվում են նաև Գաբրիել Նիկողայի Չակայանի նյութերը՝ «Նոր Նախիջևանի հայ գաղութի խնամախոսության և հարսանեկան ծեսերի մասին վերագրով»:<sup>17</sup> Դրանք ձեռագիր են ու ոչ այնքան ծավալուն՝ բաղկացած 24 թերթից: Գործի ավարտը թվագրված է 1976 թ. դեկտեմբեր ամսով: Ինչպես և պահանջվում է, գործին կցված է ազգագրության բաժնի կրտսեր գիտաշխատող Վ. Խանադյանի կարծիքը, ըստ որի՝ *«հեղինակը բավականին հանգամանալից ներկայացնում է Նոր Նախիջևանի հայերի հարսանեկան ծեսերը: Գ. Չակայանը ընդգրկել է հարսնառի ամբողջ փուլը և մեկ առ մեկ նկարագրել բոլոր ծեսերը և սովորույթները: Արժեքավոր են հարսի և փեսայի շորերի մանրամասն նկարագրերը՝ իրենց չափումներով և չևիածքով: Գ. Ն. Չակայանի այս նյութերը անհրաժեշտ է չեռք բերել ազգագրության բաժնի արխիվում պահելու համար, ապագա ուսումնասիրողներին օգրակար լինելու միտումով»*<sup>18</sup>:

Գործին կցված է նաև Գ. Չակայանի կենսագրությունը՝ կազմված երկրագետ Վ. Զինջյանի կողմից: Թղթապանակում կա նաև 3 նամակ,

<sup>17</sup> Տե՛ս Չակայան Գ., Նոր-Նախիջևանի հայ գաղութի խնամախոսության և հարսանեկան ծեսերի մասին, քղթ. 110// ՀԱԻ ԱԲԱ:

<sup>18</sup> Տե՛ս նույն տեղում:

2-ը՝ հասցեագրված Հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն Բ. Առաքելյանին, իսկ մեկը՝ Ազգագրության բաժնի վարիչ Գ. Վարդումյանին:

Եվս մեկ մեծադիր թղթապանակում պահվում են Մ. Լյուլեջյանի՝ արդեն բազմիցս հիշատակված նյութերը՝ «Նոր Նախիջևանի ազգագրական-բանահյուսական նյութեր» վերնագրով: Նյութերին կից կան նաև լուսանկարներ:

Նյութերն ու լուսանկարները 1972-1974 թվականներով են թվագրված<sup>19</sup>: Առաջին թղթապանակի նյութերը մեքենագրված են, մեկ օրինակը, ըստ գրությունների, ուղարկված է նաև հեղինակին: Գործում պահվում է նաև հեղինակի նամակագրությունը Գ. Վարդումյանի հետ: Այն վերաբերում է հիմնականում ուղարկված նյութերին, ամելիքներին, նոր նյութեր ուղարկելու անհրաժեշտությանն ու նման հարցերի: Որոշ նամակներում կան նաև կենցաղին վերաբերող լուսանկարներ՝ ուղարկված հեղինակի կողմից:

Նյութերի դիտարկումը ցույց է տալիս, որ հեղինակն աշխատել է կազմակերպված ու բավականին մանրակրկիտ: Նյութերը մույնպես բազմազան են ու բազմաբնույթ՝ դասակարգային շերտավորումը գյուղերում մինչև 1920 թվականը, սնահավատությունները, հավատալիքները՝ ջրի պաշտամունք, գետնի պաշտամունք, կրակի պաշտամունք: Կրակի պաշտամունքին վերաբերող հատվածում հեղինակը բերում է նաև անեծքներ ու օրհնանքներ կրակով, ինչպես, օրինակ, «կրակեն էշ-թաս, կրակ ուտիս, օջախդ վառ մնա» և այլն: Առանձին դիտարկում է հանդերձյալ կյանքին վերաբերող հավատալիքները՝ մեջբերելով նաև համագյուղացիների պատմածները: Մանրամասն ներկայացվում են բարի ու չար ոգիները՝ խոնջողոզ, առան-բառա, տունի տեր, ճին, պորոճ, խոռթաղ և այլք:

Լրացուցիչ նյութեր է ներկայացնում նաև գյուղատնտեսության ու անասնապահության վերաբերյալ: Գործի թիվ 28 թղթածրարում գետնոված նյութերը մույնպես բավականին հետաքրքիր են: Այդ մասին գրում է նաև կցված կարծիքի հեղինակ Ս. Վարդանյանը. «...Մ. Լյուլեջյանը Նոր Նախիջևանի շրջակա գյուղերից գրառել է ժողովրդական անեծքներ, 2 հեքիաթ, «Սասնա ծռերի» մեկ պատում: ...Կան հեքիաթների փոխալներ երաժիշտների ու երաժշտական գործիքների մասին: Նյութերին կից փրված են և երաժշտական գործիքների լուսանկարները: Լյուլեջյանի գրառած ազգագրական և բանահյուսական նյութերում պահպանված են փոքր բարբառային-ոճական առանձնա-

<sup>19</sup> Տե՛ս Լյուլեջյան Մ., Նոր Նախիջևանի ազգագրությունից, թղթ. 49/ՀԱԻ ԱԲԱ:

*հարկությունները»<sup>20</sup>*: Այստեղ ներկայացված է նաև հեղինակի ձեռագիր ինքնակենսագրությունը, գործունեության հիմնական տարիներն ու ոլորտները. «...*Ծնվել եմ 1893 թ. Ռոստովի մարզի Չալդր գյուղում: 1913 թ. ավարտելով քեմական դպրանոցը՝ մեր գյուղի ծխական դպրոցի երգի ուսուցիչ դարձա: 1926 թ. Կեդասիոնիվեցի Խրիմ, Միմֆերոպոլի հայկական դպրոցի ուսուցիչ պաշտոնով: 1933 թ. ընդունվեցի Խրիմի Ֆրունզեի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը (երեկոյան սեկտոր) ու ավարտեցի 1937 թ. գարնանը: 1956-1961 թթ. աշխարհեցի հայրենի գյուղի՝ Չալդրի կուլտուրայի տան երգչախմբի ղեկավարի պաշտոնում: Այդ տարիներին զբաղվեցի Նոր Նախիջևանի ու հայկական գյուղերի ժողովրդական երգերի ու պարեղանակների հավաքմամբ ու չափնագրմամբ: 1965 թվականից մինչև 1972 թվականը զբաղվեցի մեր Կեդասիոնի հայերի ազգագրության հարցերի հավաքմամբ և 1973 թ. ուղարկեցի Երևանի հնագիտության և ազգագրության ինստիտուտ (հեղինակը նշում է ազգագրության ու բանահյուսության – Մ. Գ.)»:*

Հեղինակը, փաստորեն, կարողացել է գուգակցել մի կողմից երաժշտագիտական, մյուս կողմից՝ պատմագիտական կրթությունն ու գրառել հայրենի տարածքի ազգագրության ու բանահյուսության վերաբերյալ կարևոր նյութեր:

Նշված երեք հեղինակների գրառած նյութերը, թերություններով ու բացթողումներով հանդերձ, Նոր Նախիջևանի հայկական համայնքի, այդ թվում՝ Չալդր, Դրիմ (նախկին Թորդի), Մեծ Սալա, Մուլթան կամ Փոքր Սալա, Նեավեթայ, Լենինավան, Լենինական ու այլ հայաբնակ բնակավայրերի պատմության ու ազգագրության կարևոր սկզբնաղբյուր են: Դրանք հնարավորություն են տալիս առաջին հերթին դիտարկելու կոնկրետ ազգագրական իրողությունները՝ տնտեսությունը, հատկապես կարևոր նշանակություն ունեցող երկրագործությունը, որը երկար ժամանակ եղել ու այսօր էլ շարունակում է մնալ գյուղաբնակ մեր հայրենակիցների հիմնական զբաղմունքը, տոներն ու տոնածխական կյանքը, ամուսնահարսանեկան արարողությունները, պաշտամունքն ու հավատալիքները: Մյուս կողմից՝ գրառված հարուստ բանահյուսական նյութը՝ հիմնականում տեղական բարբառով, լեզվի, խոսքի, լայն առումով մշակույթի զարգացման ու փոխակերպումների գիտական ուսումնասիրության հրաշալի հնարավորություններ է ընձեռում հետազոտողներին: Սակայն միայն այսքանով չէ, որ սահմանափակվում են արդեն հրատարակված ու դեռևս արխիվներում պահվող ազգագրական նյութերի ընձեռած հնարավորությունները: Այսօր հայկական հա-

<sup>20</sup> Նույն տեղում, III թիթ., էջ 78-79:

մայրներն աշխարհում բուռն զարգացումների ու փոխակերպումների գործընթաց են թևակոխել: Ինքնության, մասնավորապես էթնիկ ինքնության ընկալումները վերանայվում ու վերաձևակերպվում են ամբողջ աշխարհում, կարևորվում են ինքնության այնպիսի բաղադրիչներ, որոնք նախկինում էական կամ առաջնային չեն եղել:

Այլէթնիկ միջավայրում հայտնված համայնքները, այդ թվում՝ Հարավային Ռուսաստանում բնակվող մեր հայրենակիցներն այսօր ունեն ինքնության մրցունակ «այցեքարտերի» կարիք, որոնք հնարավորության կտան շեշտադրելու տնտեսական, քաղաքական, հասարակական ու մշակութային, լայն առումով՝ քաղաքակրթական տեսանկյունից մրցունակ հայկականությունը:

Ազգագրական նյութերն այս տեսանկյունից յուրօրինակ բանալիներ ու բանաձևեր են, որոնք հնարավորություն են տալիս էթնիկ ինքնությունը կայացնելու, փոխելու ու փոխակերպելու սեփական պատմության ու մշակույթի համակողմանի ու խորքային իմացության հիմքի վրա: Հենց այս տեսանկյունից պետք է նաև մեր օրերում ուսումնասիրվի նորնախիջևանյան հայկական համայնքի մշակույթը, քանի որ, չնայած տարբեր խնդիրներին, հենց յուրօրինակ այս մշակույթն է ապահովել ու ապահովում էթնիկության ու էթնիկ ինքնության պահպանման ու փոխանցման մեխանիզմների կենսունակությունը:

## РЕЗЮМЕ

**Ключевые слова:** *Новый Нахичевань, община, этнография, культура, этничность, фольклор, экономика, праздники, ритуалы*

В статье на основе анализа публикаций, а также хранящихся в архиве Института Археологии и этнографии НАН РА этнографических материалов, рассматривается история этнографического исследования нормахичеванских армян. Сбор материалов о культуре и быте как самого города, так и армянских сел продолжался в течении многих десятилетий, так-как армянская община в течении всего периода своего существования смогла сохранить этнокультурную самобытность. Собранный этнографический материал представляет разные стороны жизни общины: экономику, основные комплексы жизнеобеспечения, ритуально-праздничную жизнь, а также фольклор и разные аспекты общественной жизни. Кроме уже изданного материала, большой интерес представляют также материалы, собранные М. Люлечьяном, Г. Чакаяном и А. Согомояном, многие из которых и по сей день сохранили свою исследовательскую ценность.

**ДОКУМЕНТЫ ПО ИСТОРИИ САМОУПРАВЛЕНИЯ  
НАХИЧЕВАНИ-НА-ДОНУ В КОНЦЕ XVIII – СЕРЕДИНЕ XIX  
в. ИЗ НАЦИОНАЛЬНОГО АРХИВА АРМЕНИИ\***

*Батиев Л. В.,  
Кандидат юридических наук, доцент, заведующий лабораторией  
социологии и права Южного научного центра Российской  
академии наук*

*Минасян Э. Г.,  
Доктор исторических наук, профессор, декан исторического  
факультета Ереванского государственного университета.  
Республика Армени*

Несмотря на рост интереса исследователей к истории самоуправления армянского города Нахичевани-на-Дону, историография проблемы все еще остаются неясности и разночтения, касающиеся ее отдельных вопросов. Значительная часть фактов по истории управления городом и его сельской округой русскоязычным читателям известна не из документальных источниках, а только «из вторых рук» – из работ Г.С. Патканяна [Патканян, 1917] и Е.О. Шахазиза [Шахазиз, 2005;1903], в том числе еще не переведенных на русский язык, или даже «из третьих рук» – в пересказе И.М. Келле-Шагиновым [Келле-Шагинов, 2015]. В известной и весьма содержательной монографии В.Б. Бархударяна, основанной на большом объеме архивных материалов и переведенной на русский язык, из 527 страниц текста вопросам самоуправления колонии посвящено всего четырнадцать страниц [Бархударян, 1996, с. 47–61].

В частности, разночтения существуют в отношении времени введения в Нахичевани должности городского головы и законодательного закрепления ее статуса, а также оценки ее места и значения в системе управления и в истории города в целом. Неясен и персональный состав нахичеванских городских голов – в литературе об этом приводятся достаточно противоречивые сведения. Между тем, существуют архивные материалы, как в делах самого нахичеванского Армянского магистрата, хранящихся сегодня большей частью в Национальном архиве Армении (НАА), так и в Российском государственном историческом архиве (РГИА), в которых можно найти более подробную информацию об организации и деятельности органов самоуправления Нахи-

---

\* Публикация подготовлена в рамках реализации гранта РФФИ № 18-59-05004 «Армянская община Дона в новейший период: история, институты, идентичность».



чевани-на-Дону. В середине XIX в. система армянского самоуправления, созданная благодаря дарованным Екатериной II в 1779 г. правам и привилегиям, начала вызывать у властей Российской империи желание реформировать ее и привести в соответствие с управлением в других городах страны. В связи с этим вышестоящие органы власти стали периодически запрашивать у нахичеванского магистрата информацию об организации и состоянии самоуправления [НАА. Ф. 139. Оп. 1. Д. 87]. В фонде «Ново-Нахичеванский армянский магистрат» Национального архива Армении (г. Ереван) сохранился комплекс документов, сформированный после одного из таких запросов. Это «Дело по отношению нахичеванского градского головы о доставлении сведения таганрогскому градоначальнику о бывших градских головах в Нахичеване, на 20 листах», в котором приведены сведения не только о городских головах Нахичевани вплоть до 1857 г., но и о доходной и расходной частях нахичеванского бюджета с момента основания колонии и до 1831 г. [НАА. Ф. 139. Оп. 1. Д. 122]. Дело было начато 7 декабря 1857 г. и окончено не ранее начала мая 1858 г. Согласно делопроизводственной помете на первом листе дела, изначально оно включало в себя двадцать листов, однако сейчас из них осталось всего семнадцать листов в хорошем состоянии. В состав дела входят следующие тринадцать документов:

- 1) Титульный лист дела с его названием, датой формирования, количеством листов (л. 1);
- 2) Отношение Армянского магистрата окружному заседателю Мясникову; не законченный черновик (л. 1 об.).
- 3) Опись документов дела; оригинал (л. 2).
- 4) Отношение исправляющего должность городского головы г. Нахичевани-на-Дону кандидата Карпа Гайрабетова в Армянский магистрат № 432 от 7 декабря 1857 г.; оригинал на официальном бланке, подпись-автограф (л. 3–3 об., 17).
- 5) Отношение нахичеванского Армянского магистрата городскому голове Мануилу Аладжалову в ответ на его запрос № 432 об отправке ему требуемых сведений (список городских голов, ведомость о городских доходах и расходах); черновик с исправлениями (л. 4–4 об., 16).
- 6) Ведомость о городских доходах и расходах Нахичевани-на-Дону в 1799–1831 гг.; черновик (Л. 5–5 об., 15);
- 7) Список городских голов Нахичевани-на-Дону в 1794–1857 гг. от мая 1858 г. Черновик с незначительной правкой (Л. 6–6 об., 14).

8) Предписание Армянского магистрата нахичеванскому мещанскому старосте Минасу Абрамову от 12 декабря 1857 г.; черновик с существенной правкой (л. 7–7 об.).

9) Предписание Армянского магистрата нахичеванскому мещанскому старосте М. Абрамову; беловая копия (л. 8–8 об., 13).

10) Повторное отношение исправляющего должность городского головы К.М. Гайрабетова в Армянский магистрат № 508 от декабря 1857 г.; оригинал на официальном бланке (л. 9–9 об.).

11) «Подтверждение» таганрогского градоначальника контр-адмирала М.А. Лаврова в нахичеванский Армянский магистрат от 17 апреля 1858 г.; оригинал на официальном бланке, подпись-автограф (л. 10).

12) Рапорт нахичеванского мещанского старосты М. Абрамова от 23 декабря 1857 г.; оригинал, подпись-автограф (л. 11–11 об.).

13) Предписание таганрогского градоначальника контр-адмирала М.А. Лаврова нахичеванскому Армянскому магистрату № 312 от 21 января 1858 г.; оригинал на официальном бланке, подпись-автограф (л. 12–12 об.).

Из «отношения» исправляющего должность городского головы Нахичевани-на-Дону кандидата Карпа Макаровича Гайрабетова<sup>1</sup> Армянскому магистрату от 7 декабря 1857 г. (получено адресатом 9 декабря) известно, что таганрогский градоначальник М.А. Лаврова предписанием от 1 декабря поручил нахичеванскому городскому голове «составить и представить... превосходительству в возможной скорости» две справки: а) «именной список о всех городских головах, бывших в Нахичеване с начала образования общества до 1857 года, с объяснением противу каждого из сих лиц времени состояния их в настоящей должности»; и б) «ведомость об общем ежегодном итоге сумм, во все прошедшее время собираемых на городские надобности, с показанием за каждый прошедший год отдельно доходов поступающих: 1. собственно из источников городского хозяйства, 2. по добровольной складке городских жителей; 3. по добровольной складке сельских обществ» [НАА. Ф. 139. Оп. 1. Д. 122. Л. 3]. Однако в канцелярии городского головы требуемых сведений не оказалось: «Из дел канцелярии градского головы не видно, с какого года начали существовать в Нахичеване градские головы, кто был первым и последовательным, сколько кто продолжал службу, какие во время управления каждого

---

<sup>1</sup> «Кандидат» в данном случае – лицо, избираемое вместе с городским головой для замещения его должности на время отсутствия по той или иной причине. К.М. Гайрабетова избрали в 1857 г. помощником городского головы, «что в то время было явлением, не имевшим примера» [Келле-Шагинов, 2015, с. 26].

собирались доходы на городские надобности, в каком количестве составлялось и из каких источников, т.е.: с одних ли городских статей, или с добровольными складками, от кого и по сколько порознь тех и других» [НАА. Ф. 139. Оп. 1. Д. 122. Л. 3–3 об.]. Поэтому К.М. Гайрабетов просил магистрат, «извлеки по делам своим достоверные сведения, требуемые г. таганрогским градоначальником – как о бывших городскими головами во все прошедшее время, равно об общем ежегодном итоге сумм до поступления хозяйственной части в ведение городского головы» [НАА. Ф. 139. Оп. 1. Д. 122. Л. 3–3 об., 17].

Запрос, полученный из канцелярии городского головы, магистрат переслал 12 декабря нахичеванскому мещанскому старосте Минасу Абрамову с предписанием «немедленно собранные таковые сведения из дел, хранящихся в архиве сего магистрата, согласно отношению градского головы, представить таковые в магистрат» [НАА. Ф. 139. Оп. 1. Д. 122. Л. 7–8 об., 13]. Но уже 19 декабря в магистрате было получено новое отношение из канцелярии городского головы, в котором К.М. Гайрабетова отмечал, что поручение градоначальника до настоящего времени не выполнено «чрез невыполнение магистратом означенного отношения моего», и просил «выполнить оное в самоскорейшем времени, дабы не подвергнуться мне ответственности» [НАА. Ф. 139. Оп. 1. Д. 122. Л. 9–9 об.]. 23 декабря мещанский староста Минас Абрамов ответил магистрату: «по архиву все дела, сколько имеется о бывших в Нахичеване градских головах с начала образования общества до 1857 года, и о количестве городских доходов и добровольной складки за те же годы, оные все числом 4 – вместе с подлинным отношением г. градского главы, последовавшим в магистрат от 7 декабря за № 432, имею честь представить при сем, что же относится до извлечения из оных дел требуемых сведений – выполнить того я не могу по неопытности о порядке канцелярском» [НАА. Ф. 139. Оп. 1. Д. 122. Л. 11–11 об.].

Дело с подготовкой соответствующих ведомостей затягивалось. И уже вследствие рапорта К.М. Гайрабетова таганрогскому градоначальнику из канцелярии последнего 21 января 1858 г. в Армянский магистрат было направлено прямое предписание по тому же поводу [НАА. Ф. 139. Оп. 1. Д. 122. Л. 12–12 об.].

Из сохранившихся материалов дела не видно, кто именно подготовил справки по запросу таганрогского градоначальника, отправленные Армянским магистратом 3 мая 1858 г. уже непосредственно городскому голове М. Аладжалову. Эти документы включают в себя: а) «имянный список о всех градских головах, бывших в г. Нахичеване с начала образования общества до 1857 года с объяснением времени

состояния их в сих должностях»; и б) «ведомость об общем ежегодном итоге сумм, в прошедшее время до 1857 года собираемых на городские надобности из источников городского хозяйства и добровольной складки жителей» [НАА. Ф. 139. Оп. 1. Д. 122. Л. 4].

Сравнение составленного в нахичеванском магистрате списка городских голов с аналогичными перечнями, встречающимися в краеведческой литературе (см., например: [Смирнов, 2018]<sup>2</sup>), позволило выявить некоторые принципиальные отличия. Речь, разумеется, идет не об особенностях написания на русском языке армянских имен и фамилий городских голов (Микаел Когбетлян или Мерьян Когбетлиев, Хазизян или Хазиз, Халач или Халаджян, Одабашьян или Адабашев и т.п.), а о персональном составе перечня.

Во-первых, нужно отметить, что в архивах канцелярии городского головы и магистрата не нашлось никаких сведений не только о лицах, занимавших должность городского головы с момента основания города в 1780 г. до 1794 г., но и о самом существовании должности в этот 14-летний временной отрезок. «Из дел канцелярии градского головы не видно с какого года начали существовать в Нахичеване градские головы, кто был первым и последовательным, сколько кто продолжал службу, какие во время управления каждого собирались доходы на городские надобности, в каком количестве составлялось и из каких источников, т.е.: с одних ли городских статей, или с добровольными складками, от кого и по сколько порознь тех и других», – писал кандидат К.М. Гайрабетов в Армянский магистрат 7 декабря 1857 г. [НАА. Ф. 139. Оп. 1. Д. 122. Л. 3–3 об.]. Дата, с которой начинается отсчет нахичеванских городских голов в документе, составленном в магистрате, не случайна. Она связана с общегосударственной реформой местного управления, начало которой положила изданная императрицей Екатериной II 21 апреля 1785 г. «Грамота на права и выгоды городам Российской империи». В Нахичевани реализация реформы началась намного позже и в неполной мере – как и в ряде других городов, где Шестигласная дума была учреждена не сразу, или состояла не из шести, а из меньшего количества членов, как того требовала буква так называемой «Жалованной грамоте городам». Причем такой порядок был утвержден законодательно [Дитятин, 1877, с. 156–163]. Как и в другие города, в Нахичевань тоже был отправлен указ о необходимости избрать Городскую и Шестигласную думы под председательством городского головы в соответствии с грамотой 1785 г. Однако в Нахичевани, как отмечал Е.О. Шахазиз, не сочли возмож-

---

<sup>2</sup> Список составлен С.С. Казаровым на основе данных из книги Г.С. Патканяна и собственных материалов.

ным создать новую систему городского самоуправления в силу ее неясности и сложности для местного населения [Шахазиз, 1903, с. 13]. О запутанности положений грамоты и сложности их реализации в городах Российской империи писал и известный отечественный исследователь истории городского самоуправления И.И. Дитятин [Дитятин, 1877, с. 152–161]. Поэтому, с дозволения верховной власти, фактически сложившаяся к тому времени система самоуправления армянской колонии на Дону была переформатирована на основе своего рода учредительных документов, подготовленных духовным пастырем российских армян архиепископом Иосифом Аргутинским. И только в 1794 г. нахичеванское самоуправление получило законченную узаконенную форму. Как отмечалась в отношении из Армянского магистрата городскому голове Мануилу (Мануку) Аладжалову, «из дел сего магистрата значится, что выборы в должности градского головы начались по преподанным от Екатеринославского наместнического правления правилам с 1794 года» [НАА. Ф. 139. Оп. 1. Д. 122. Л. 4–4 об.]. К.М. Гайрабетов кратко описал сам порядок избрания на должности городского самоуправления в Нахичевани: «Выборы же на замещение в городские должности и самых голов, хотя и происходят под председательством городских голов, но по представлениям магистрата, в который тогда же передаются балатированные списки, и по получении предписаний о утверждении им же приводятся в исполнение по установленному порядку» [НАА. Ф. 139. Оп. 1. Д. 122. Л. 3 об., 17].

Из других материалов указанного фонда – «Дело № 17. По предписанию господина таганрогского градоначальника об учреждении в городе Нахичеване городской думы и последующих потом распоряжениях правительства» (начато 13 января 1854 г.), – тоже видно, что согласно указаниям Екатеринославского наместнического правления, утвердился порядок, в соответствии с которым «градской глава, председатель и заседатели (магистрата. – *Л.Б., Э.М.*) избираются чрез каждые трехлетие по выборам от городских купеческого, мещанского и поселенского армянского общества и утверждаются от таганрогского градоначальника» [НАА. Ф. 139. Оп. 1. Д. 87. Л. 20 об.]. Кроме того, «для удобнейшего же распоряжения городским хозяйством, общество наше по признанному за благо коренному порядку, основанному на существующих издревле обычаях, при общих выборах членов магистрата в прежнее время, избирало городского голову с назначением при том попечителей общества в числе 24 челов. из почетнейших членов общества для совещания вместе с городским головою о предметах городских потребностей и для составления так сказать совета городского» [НАА. Ф. 139. Оп. 1. Д. 87. Л. 33 об.–34]. К середине XIX в.

институт попечителей фактически исчез. Вновь его восстанавливали только для того, чтобы «отбиться» от предложений упразднить магистрат [Батиев, Казаров, 2018].

О том, что список городских голов, подготовленный в Магистрате, не остался в Нахичевани или Таганроге, но дошел до руководства государством, свидетельствует записка ревизовавшего Таганрогское градоначальство сенатора М.Н. Жемчужникова<sup>3</sup>, цитируемая В.Б. Бархударяном. Сенатор отмечал, что «частными расследованиями выяснилось, что в Нахичевани еще в 1791 году был городской голова» [Бархударян, 1996, с. 55]. По сведениям же Г.С. Патканяна, городского голову избирали с самого начала существования Нахичевани: в 1779–1788 гг. на эту должность трижды избирался Михаил Кохбетлян, а в 1788–1791 гг. ее занимал Степан Пехлеванян [Бархударян, 1996, с. 56]. Городским головой – правда, уже 1789–1791 гг., – называл Степана Пехлеваняна и ростовский краевед В.С. Сидоров [Сидоров, 1999]. Следует, вероятно согласиться с предположением В.Б. Бархударяна о том, что за городского голову в первое десятилетие существования города могли принимать «руководителей армянского общества – предприимчивых и авторитетных деятелей, в том числе, вероятно, председателей магистрата. (...) Пользуясь правом автономно решать внутренние проблемы колонии, нахичеванцы создали должность городского головы и периодически раз в три года переизбирали его» [Бархударян, 1996, с. 56]. По всей видимости, из-за отсутствия законодательного закрепления статуса городского головы, выборы происходили без составления «баллотировочных списков», протоколов и т.п., почему в магистрате и не были найдены запрошенные сведения за начальный период истории города. Еще одним объяснением возможных недоразумений с установлением состава городских голов до 1794 г. могли быть нередкие случаи временного замещения должности другим лицом, как это видно и из материалов рассматриваемого дела<sup>4</sup>.

Во-вторых, есть разночтения и для периода «узаконенного» Екатеринославским наместническим правлением существования городских голов в Нахичевани. Даже если Карабед Сизиков и Карапет Ахашьян – одно и то же лицо, в архивном списке в качестве городского головы 1802–1803 гг. фигурирует не он, а «первостатейный гражда-

---

<sup>3</sup> Михаил Николаевич Жемчужников (1788–1865 гг.) – сенатор, действительный тайный советник, губернатор Костромской (1832–1833) и Санкт-Петербургский (1835–1840) губерний.

<sup>4</sup> Так, по крайней мере, в январе 1857 г. исправляющим должность городского головы Сагатела Каяляна (Савелия Каялова) был Матвей (Татиос) Келле-Шагинов, в апреле – октябре 1867 г. – Когбетлиев [НАА. Д. 139. Оп. 1. Д. 223. Л. 1-29].

нин» Христофор Халач (Хачерес Халаджян?). После него с 1803 по 1806 г. должность занимал гражданин Никогос Капрелов, а не Карапет Хазизян (1800–1802) и Петрос Хазизян (1803–1805); с 1809 по 1812 г. – Кеворк Маркаров, а не Карапет Ахашьян (1809–1811). Манук Аладжалян (Мануил Христофорович Аладжалов) был городским головой не только в 1854–1856 гг., но и, по крайней мере, до мая 1857 г. Вообще даты начала и окончания сроков полномочий городских голов, приведенные в архивном списке, не всегда совпадают с датами, приводимыми в литературе.

Публикуемый ниже «именной список градским головам» Нахичевани 1794–1857 гг. [НАА. Ф. 139. Оп. 1. Д. 122. Л. 6–6 об., 14] позволяет не только уточнить их персональный состав и срок пребывания в должности, но и содержит сведения сословном статусе того или иного городского головы. В Российской империи «должность городского головы считалась ниже дворянского достоинства, но, с другой стороны, на эту должность не избирались ни мещане, ни купцы ниже второй гильдии, как не взявшие достоинством». Прямого распоряжения по этому вопросу не выходило, «но есть такое постановление, по которому купцы первой гильдии обязаны принимать на себя по чисто городскому управлению лишь должность городского головы; а купцы второй гильдии – кроме того и должности ратманов и бургомистров» [Дитятин, 1877, с. 165]. В Нахичевани-на-Дону в конце XVIII – первой половине XIX в. городскими головами избирались, преимущественно, купцы 3-й гильдии (11 раз), купцы 1 и 2-й гильдий (по одному разу), поручик, «первостатейный гражданин» (дважды) и просто гражданин (один раз), коллежский регистратор (низший гражданский чин 14-го класса по Табели о рангах).

Со времени учреждения нахичеванский магистрат совмещал в себе практически все функции управления, полиции и суда. Однако довольно скоро его хозяйственные (финансовые) функции были урезаны. Об этом пишут и составители справки по запросу таганрогского градоначальника. «Магистрат с предначатия действий своих по судебной и административной части заведывал и городскую хозяйственностью – до избрания голов и при самых оных, что продолжалось несколько годов от времени учреждения его на основании высочайшей грамоты 1779 года. Потом хозяйственная часть перешла в ведение городских голов, с обращением на них обязанности в доставлении ежегодных отчетностей Казенной палате» [НАА. Ф. 139. Оп. 1. Д. 122. Л. 3 об.]. В соответствии с Армянским судебником<sup>5</sup>, обязанности по

---

<sup>5</sup> Судебник был составлен в Астрахани первыми судьями астраханского Армянского суда в период с 1746–1748 гг. по 1765 г. Около 1782 г. судебник был привезен архиепис-

сбору податей, а также взиманию судебных штрафов и ведению прихода и расхода магистрата были возложены на мещанского старосту [Алексеев, 1870]. Но на практике финансовые функции оказались в ведении городских голов. В середине XIX в. об этом, как о вполне устоявшейся системе, сообщалось в отчетах магистрата и городских голов: «в канцелярии градского главы производятся дела, касающиеся только сбора и расхода городских доходов и поступающей на удовлетворение расходов суммы добровольной складки от нахичеванских жителей» [НАА. Ф. 139. Оп. 1. Д. 87. Л. 16 об.]. Вообще, городские головы не только в Нахичевани, но и повсеместно в России оказываются «во главе думы, подчиняют ее себе, выступая как единоличный представитель всего городского общества» [Дитятин, 1877, с. 163–164]. «Юридическое и тем более фактическое положение городского головы было... громадно» По-существу он, «при наличности с его стороны известных качеств был всем, а дума – ничем». В силу же «того обстоятельства, что к его “особенному ведомству” принадлежали все сношения с административно-правительственными учреждениями», участвовавший в них «в качестве представителя города» городской голова «и в глазах самого правительства, или лучше сказать местной администрации, являлся, в сравнении со всеми остальными учреждениями, точно так же всем» [Дитятин, 1877, с. 166–167].

Публикуемая сводная ведомость доходов и расходов Нахичевани [НАА. Ф. 139. Оп. 1. Д. 122. Л. 5–5 об., 15] может быть использована исследователями как для реконструкции хозяйственной и финансовой стороны жизни армянской колонии в первые полвека ее истории, так и для оценки добросовестности и эффективности деятельности городских голов. Разброс сумм «доходов из источников городского хозяйства» и по «добровольной складке» местного населения очень велик и требует своего объяснения. В.Б. Бархударян указывал, в частности, что добровольное самообложение значительно выросло при городском голове А. Халибяне – ежегодно около 10 тыс. руб. с города и 3 510 руб. с сел [Бархударян, 1996, с. 378]. Однако ведомость показывает, что были и гораздо большие сборы в другие, более ранние годы. По ним, правда, есть и указания на соответствующие расходы. Точно так же вызывает вопросы отсутствие сведений о финансах города за достаточно большой период. Значительная часть этого периода относится к тому же к времени нахождения во власти А. Халибова (Халибяна) и его ставленников (Капрел Ходжаев, Хачадур Хирмаджев). Финансовая нечистоплотность А. Халибова вызывала не просто

---

копом Иосифом (Овсепом) Аргутинским из Астрахани в Нахичевань и использовался в качестве правовой основы управления и суда.



вопросы и обвинения критиков, но и специальную проверку имперским чиновником, которая выявила явные нарушения. Тем не менее, ловкий городской голова сумел уйти от ответственности [Бархударян, 1996, с. 374-387]. В связи с этим вполне понятно отсутствие некоторых данных в подготовленной ведомости.

Оба документа представляют собой черновые отпуски, оставшиеся у отправителя. Они написаны коричневыми чернилами на листах писчей бумаги стандартного для того времени формата, одним и тем же писарским почерком.

Документы публикуются с учетом рекомендаций «Правил издания исторических документов в СССР» (М., 1990). Их орфографические и стилистические особенности сохранены, вышедшие из употребления буквы русского алфавита заменены на созвучные современные, сокращения раскрыты в квадратных скобках, твердый знак в конце слов не воспроизводится.

### № 1

#### Именной список городских голов г. Нахичевани-на-Дону с 1794 по 1857 гг.

3 мая 1858 г.

Имянный список, составленный в <sup>8</sup> Нахич[еванском] Арм[янском] магистрате, <sup>6</sup> градским головам, бывшим в г. Нахичеване с начала образования <sup>8</sup> в оном <sup>8</sup> общества до 1857 года	
Мая ... <sup>7</sup> дня 1858 года	
Звание, имя и фамилия	Время состояния в должностях
3-й гильдии купец Мерьян Когбетлиев	С июля 1794 по 1797 год
<sup>8</sup> 3-й гильдии купец Карабед Сизиков	С 1797 по 1800 год
3-й гильдии купец Карабет Ованесов Хазиз	С 1800 по 17 июня 1802 года
Первостатейный гражданин Христафор Халач	С <sup>9</sup> 1802 по 1803 год
Гражданин Никогос Капрелов	С 1803 по 1806 год
Гражданин Христофор Халач	С 1806 по 1809 год
3-й гильдии купец Кеворк Маркаров	С 1809 по 1812 год
3-й гильдии купец Варгерес Халаджиев	С 1812 по 1815 год
Поручик Данило Каракаш	С 1815 по 1818 год
1-й гильдии купец Богос Хатранов	С 1818 по 1821 год
